Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L 6n
1558

1999

ՆՈՒԷՐ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ։

ՄՈՒՂԱՅՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ.

Նոր երգարան.

'Ի լոյս ընծայեաց

Ս. Յ. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ — ԿԱՄՍԱՐԱԿԱՆ.

Ազգային տարրերից ամենահզօրը
Եւ կենդանապահը լեզուն է:

Զար մարդիկ երգ չունին:
Շիլլեր:

ՏՓԽԻՍ
'Ի Տպարանի Ց. Մարտիրոսեանցի.
1880

ԼԷՌ
1558
41558-60
Հ8 1563

Дозволено цензурою. Тифлисъ, 3 Апрѣля 1879 г.

ՀՍՍՌ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
ՀՍՍՌ Арм.ССР
Ա. Մեսրոպի անվան
им. А. Мясникяна

Типографія И. Мартиросіанца, на Орбеліановской улицѣ, д. № 5.

1224-ԿԿ

ՀՍՍՌ-ի ԳԱ Մատենադարան
Гос. Библиотека

1

Երգ մեռանող հայրենասիրի։

Աղնի՞ւ ընկեր, մեռանումեմ,
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Իմ թշնամիքս ես օրհնումեմ,—
Օրհնո՛ւմեմ քեզ Աստուծով։
Հեռանումեմ, անգին ընկեր,
Չ՚գնահատած ոչ ոքից.
Բայց հաւաստեաւ անձնանուէր
Ագգիս մշակ կ՚հաշուիմ։
Աղնի՞ւ ընկեր, չը մոռանաս.
Անդաւաճան, ջերմ սիրով
Ես սիրել եմ իմ հայրենիք,—
Գնա և դու նոյն շաւղով։
Խեղճութիւնը Հայոց ազգի
Կարեկցաբար մտածի՛ր.
Ոսկէ գրքոյկն Եղիշէի
Քաջ առաջնորդ քեզ ընտրի՛ր։
Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան
Աղօտ կամքով ու խիղճով.
Այնտեղ Վարդան, անմահ Վարդան,
Իւր խնկելի քաջերով։
Հայրենի՛ք,— սեղան սրբութեան—
Ես Աստուծոյ առաջև
Շատ կ՚աղաչեմ, շատ կ՚արտասուեմ,
Որ ծագէ քեզ նոր արև։

Իմ մտերիմ, մահը մոտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Որովհետև խիղճս արդար է,
Ճշմարտութե՛ան ջատագով։

Ս. Շահուղեանց։

2

Առ Հայաստան։

Ա՛խ Հայաստան, Հայաստան,
Ընդէ՞ր կորուսեր տերը դ,
Եղեր այլոց ապաստան,
Թառամեց վարդ պատկերը դ։
Ո՛չ քեզ պէս բարեպաշտ կար,
Ո՛չ վանքերիդ պէս վանքեր,
Ո՛չ դաշտերիդ պէս դաշտ կար,
Ո՛չ հանքերիդ պէս հանքեր։
Հողը դ պղտոր աղնիւ,
Քարերդ ողջ ակունք են.
Գետերը դ լի՛ք, անթիւ
Կարմրախայտ ձկունք են։
Լերինքը դ ծաղիկ հագած՝
Իբր հարսնացեալ օրիորդ,
Եղջերու՛քը դ վաստակած
Ի՛նչ շահ, որ չունիս որսորդ։
Այգեացդ ամէն մէկն
Էր դրախտ եդեմական,
Բայց անբաղդութեան տէզն
Խզեաց լարը դ կենսական։
Թո՛ղ թշնամիք բերկրին
Մեր աչաց արտասուքով.
Ցուսամ՝ երկար չի՛ մնան
Նրանք էլ ուրախ հոգւով։

Աստուած ամենագէտ է,
Անսահման, արդարադատ.
Անաչարութեամբ գիտէ,
Լաւին լաւ տալ, վատին վատ։
Ես եմ Սէյեադի կինն,
Մաղաթեան տոհմի Ոսկին
Հայրենեաց կաթոգինն,
Հաւատացէ՛ք իմ խօսքին։

3

Նկարիչ։

Ակնապիշ, անձայն, խորհուրդ ճակատիդ,
Պատանի ո՞ւր ես մոքով մոլորած.
Ներկ ու վրձիններ ցիր ցան առաջիդ,
Վրշեայ կտաւը քու հանդէպ փռուած։
Շուռ տո՛ւր աչերը դ, նայէ՛ դէս ու դէն,
Տե՛ս, քեզ ծաղրում է անմիտ ամբոխը,
Զարթի՛ր, սիրելի, այդ անուշ քընէն,
Գոնէ մի անգամ հանէ՛ քու ոխը։
Բայց դու ներում ես նոցա վեհ հոգւով,
Խուլ ես աշխարհի ունայն շըշուկին...
Ցանկարծ աչերը դ փայլեց սուրբ շնորհքով,
Հրսկայի սիրտը դ թընդաց խիստ ուժգին։
Առիր վրձինը, թաց-արիր ներկով,
Շունչ տուիր անշունչ կոպիտ կրտաւին,
Երկնից խորհուրդը մեկնեցաւ քեզմով.
Քեզ անկարելին անյայտ է բնաւին։
Սէր, ատելութիւն, հանճար, բարկութիւն
Տուիր պատկերին մատիդ շարժուածով,
Ինչ որ չի յայտնեց ճարտարի լեզուն՝
Դու պարզ յայտնեցիր անձայն խօսուածով։
Ապշեց ամբոխը, վազեց, յառաջեց
Քու կենդանագիր պատկերի դիմաց,

Ծնկաչոք զմուռս ու հոլուէ խընկեց,
Գոչեց մեծաձայն՝ «Դա է իմ Աստուած»:
Բայց, ա՜խ քու անքուն ժամերու ճիգը
Քանի մի արծաթ հաղիւ գին դրին.
Ստեղծողըդ դարձար քո խեղճ խըրճիթը,
Ակեր շարեցին շուրջ քու պատկերին:

4

Ինչ պիտի ընտրեն.

Ահա՛ տարեմուտ,
Կաղանդ և նոր օր՝
Լինի բարեմուտ
Եւ Ազգիս բաղտ նոր:
Բացուեց նոր շրջան,
Ամբոխի առաջ,
Է՛ սա կայարան՝
Զանազանց անձանց:
Ի՞նչ պիտի ընտրեն,
Արդեօք մեր Հայեր՝
Կեանք, փառք, մեծութիւնք, Լացը և ողբը՝
Թէ գործք, թէ հոգսեր:—
Թէ՛ ողջ մտածմունք,
Թէ խոր թմրութիւնք
Թէ՛ ազնիւ շարժմունք,
Թէ՛ վատ թուլութիւնք:
Զգիտեմ, Տեսէ՛ք,
Ցառաջ են խաղում.
Ազգեր զանազան,
Փառաք շողշողում:
Կը գայ մի միջոց՝
Ուր խեղճութիւնը,
Կը թափէ յիշոց,
Մեր ազգութիւնը,—
Աղքատ ու տնանկ,
Կարօտ չոր հացի,
Յա՛նժամ կիմանանք,
Դառնութիւնք բաղտի:
Աւաղ ոտ բոբիկ,
Ճղուած ճոթռուած
Թշուառ խեղճ մանկիկ
Վատ անբաղտացած
Լացը և ողբը՝
Դուք գուշակեցէ՛ք
Որ պէ՞տք է արօրը՝
Ուստի փնտռեցէ՛ք:
Արօր գեղեցիկ,
Եւ գիւտք արհեստի,
Ուսում գիտութիւն
Եւ գործք վառ մտքի:
Ահա՛ այսքեն մեր՝
Փրկութիւն ազգի,
Ուրեմն լինինք՝
Մի սիրտ մի հոգի:

Ա. Գուլամիրեանց:

5

Ի միութիւն Հայոց:

Ահա հրեշտակ ոսկեփետուր թռուցեալ բարձուստ երկնաձեմ
Հայոց բաղդին հնձեալ ի կառս բարձր գոչէ զուարթադէմ
Հզօր պատգամ,
Ի վերուստ գամ.
Միութիւն Հայք,
Եւ նոր ձեզ կեանք:
Տրոփեն ուժգին և լանջք և սիրտ,
Խաղայ արիւն ի թինթ ի թինթ
Մեղը կաթէ սուրբ սէրն ի խինդ,
Յառաքինոյն ի Հայու սիրտ:
Սիրաբորբոք համբոյր բղխեն
Արտասուաթոր աչկունք ցօղեն.
Արիք Հայկազունք,
Ի սէր փութասցուք.
Եռանդուն մատիք,
Ի համբոյր հեղիկ:
Տուք համբոյր մի ևս,
Բացէք զձեր թևս.
Սիրոյ է պարգևս:
Կեցցեն յաւերժ վեհ Հայկազունք
Անմահութեան սիրուն սերունդք
Կեցցէ յաւերժ Հայկայ ոգին
Մեզ են վկայ երկիր երկին:
Անկաւ պարիսպ ժանտ նախանձուն ոչ ի շանթից ահարկու,
Այլ յակնարկի և եթ սիրոյ վերաստացեալ կենսատու:
Երկին երկիր,
Կան ի յակնիս.

Ընդ Հայ ազգիս,
Բիւր հրաշալիս։
Բացցին անդունդք սեաւ անյատակ,
Ծածկել զբաղդին հին յիշատակ.
Տիեզերաց բացցին մատեանք,
Անդէն դրոշմել Հայոց պարծանք.
Կեցցէ Հայոց սէր պանծալի.
Բերող փառաց նախանձելի։
Արիք Հայկազունք
'Ի սէր փութասցուք և այլն։

6

Առաւօտեան երգ շինականաց։

Ա՛Հ մարդ՝ այսօր շատ քընեցար ՆԸՆՋԵՑԻՐ,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր.
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը ձորն ու դաշտը փրռուեցաւ։
Ընկերներդդ վաղ արտերը գընացին,
Ցորեն գարին գերանդինով հընձեցին,
Խուրձ կապեցին։ բարդ բարդեցին դաշտումը,
Ներստան հանգչել կաղնիներու հովումը։
Ա՛Հ մարդ՝ վեր-կաց սառը ջրով լուացվիր,
Գոտիդ կապէ՛ գերանդիդ ա՛ռ դաշտ հասիր.
Քանի հով է՝ հունձդ արա՛ արտումդ,
Հունձդ հընձէ, մի՛ ծուլանար գործումդ.
Հունձդ կապէ՛, բարդդ բարդէ՛, տուն արի,
Հանգըստացի՛ր, երբ քո հունձդ կատարի.
Բե՛ր գերանդիդ, կախէ՛ պատին քո տանը,
Նա իրիկուան կը պատրաստեմ սեղանը։

Ա՛Հ մարդ՝ հերիք ինչ-որ այսօր քընեցար,
Աչքդ մէկ բա՛ց, տե՛ս թէ ո՞ւչափ ուշացար.
Մեր դրբացին վաղ անցկացաւ կամուրջէն,
Վաղ լըռելէ մեր գրզերը (1) ձայնելէն։
Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քընել, սիրական,
Արեգական շողը հասաւ մեր դրբան.
Մի՛ ծուլանար, ժամանակդդ խնայէ՛,
Այն պիտի մեղ բոլոր ձմեռը կերակրէ։

Ռ. Տ—Գ. Պապիանեան։

7

Վասն Հայաստանի։

Այն աշխարհն պատուականէ, ուր բուսնումէ նուռն ու խաղող,
Այն աշխարհն Հայաստան է, յորում գոյ բազում հաղ հանող։

Հայաստանի աշուղներն հայրենիքն զարդարել են,
Ազգասիրութեան սերմերն պտղատու հողում վարել են,
Տեսել են օգնական չկայ, իրանք իրանց դադարել են,
Զանազան նեղութեանց միջին ազգի ծէսն կատարել են,
Անձեմարան՝ անվարժապետ՝ առանց սատար և առանց փող։

Երբեմն աննման ջուրն՝ երբեմն ա՛ռ ու տ՛ուրն են գովել
Երբեմն բերդի ամուրն՝ երբեմն էլ սուրն են գովել
Երբեմն թշնամեաց հուրն՝ երբեմն ազգի մուրն են գովել
Երբեմն կեղծիւ համբոյրն՝ երբեմն վատ լուրն են գովել,
Կարձրն ասեմ. ազգի համար եղել են վարպետ՝ խրատող։

1) Գիւղացիներու մէջ գլխաւորը, староста.

Բաղդաւորաց հետ զովղ արին, անբաղդից հետ լաց ու շիւան,
Խաղաղ վախան մալ դատեցին, նեղ օրերն ջառըմայ տուան,
Մեղքն իշխանքն գործեցին, նորանց վիզն անկաւ չուան,
Հայաստանն քայքայեցաւ՝ ամենայն շահիցն զրկուան,
Ազգի վատ արարմանց մասին նոքա եղեն միշտ ամաչող։

Հայաստանի նշաններն նրանց խրատն է պահպանել,
Քանզի ուրացող Հայերի սկսել են հոգիքն հանել,
Ուրացողքն էլ՝ ուղիղներին փախցրել են և սպանել,
Զի գիտեմ այս չար բնութեան սերմն ո՞վ է մեր մէջ ցանել,
Որ այս թշուառ գրութիւնից չեմ տեսանում մէկ զերծանող։

Ինչ ազգ որ աշուղներ չունի, նա իւր սրտումն սէր չունի,
Ինչ ազգ սրտումն սէր չունի, նա Աստուծոյ պատկեր չունի,
Ով Աստուծոյ պատկեր չունի, նրան բարի գործեր չունի,
Ինչ մարդ բարի գործեր չունի, նրան աշխարհին խէյր չունի,
Նորա կեանքն քամոյ պէս է, ինքն չարեաց միաբանող.

Պետրոս Մոսովլեան։

8

Տաղ ծննդեան։

Այսօր ծնէ ծնընդեան, աւետիս.
Տեառն մերոյ և յայտնութեան, աւետիս։
Այսօր արևն արդարութեան, աւետիս.
Երևեցաւ 'ի մէջ մարդկան, աւետիս։
Այսօր սուրբ կոյսն անապական, աւետիս.
Ծնաւ երեր զանմահ արքայն, աւետիս։
Այսօր հրեշտակք յերկնից իջան, աւետիս.
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն, աւետիս։
Այսօր դրժողքն սարսեցան, աւետիս։

Գունդք գիւաց յոյժ տրտմեցան, աւետիս։
Այսօր չարքն կարկեցան, աւետիս.
Եւ ադամեանքն ուրախացան, աւետիս։
Աստղ մի պայծառ և պատուական, աւետիս.
Երևեցաւ 'ի Հընդըստան, աւետիս։
Մեծ թագաւորք ժողովեցան, աւետիս.
Յոլով դպիրք և շատ իշխանք, աւետիս։
Զաստղն տեսին և զարմացան, աւետիս.
Շատ քննեցին և չիմացան, աւետիս։
Մովսէս արի տես ըզսինա, աւետիս.
Եւ զմորենին որ անկէզ կայ, աւետիս։
Ցնծա, ցնծա Դաւիթ արքայ, աւետիս.
Հնչեա՛ զքնարն քո և խայտա՛, աւետիս։
Զոր ասացեր նախագուշակ, աւետիս.
Կատարեցաւ յոյժ գերուն՝ակ, աւետիս։
Թէ 'ի Սաբայ և յԱրաբայ, աւետիս.
Սուրբ պատարագ բերցեն նմա, աւետիս։
Ահա երեք արքայ եկին, աւետիս.
Որ երեքեանքն անուանին, աւետիս։
Մելքոն, Գասպար և Բաղտասար, աւետիս.
Որք 'ի Սաբայ և յԱրաբայ, աւետիս։
Ոսկի՝ կնդրուկ՝ զմուռ նմա, աւետիս.
Ունին երեք ազնիւ ընծայ, աւետիս։
Ոսկին զպատիւն արքայական, աւետիս.
Կընդրուկն ըզզարդ Աստուածութեանն, աւետիս։
Զմուռն որ էր անապական, աւետիս.
Նըշան թաղման և յարութեան, աւետիս։
Երկոտասան հազար էին. աւետիս.
Յերուսաղէմ քաղաք մտին, աւետիս։
'Ի մէջ աստղին զկոյսն տեսին, աւետիս.
Ունէր ըզմեր Տէր 'ի գրկին, աւետիս։
Երուսաղէմ դրղբրդեցաւ, աւետիս.
Երբ զորոտումն լսեցին, աւետիս։

Յորմէ կալեալ Հերովդէին, աւետիս.
Մխեաց զչար ձեռքն 'ի նոսին, աւետիս։
Մինչև խախտեալ սիւն դարպասին, աւետիս.
Արար բազում վընաս նոցին, աւետիս։
Ապա սիրով արձակեցան. աւետիս.
'Ի Բէթղէհէմ ելեալ գնացին, աւետիս։
Խաղային և խընդային. աւետիս.
Զնուագարանսն հընչէին, աւետիս։
Տեսին Յովսէփ և Մարիամ, աւետիս.
ՅաՀէ նոցա փախուստ առին, աւետիս։

Մովսէս Քէրքեոց։

9

Ողբալի բանք Անի քաղաքին Հայոց առ Հայաստանի ոմն, որ գնացեալ էր նմա 'ի տեսութիւն։

Անի քաղաք նստեր՝ կուլայ
Չկայ ըսող՝ մի լայ, մի՛ լայ.
Կըսես՝ քիչ է, թո՛ղ մնայ՝ լայ.
Ա՜խ ե՞րբ լսեմ՝ մի՛ լայ, մի՛ լայ։
Շատ ցաւերով կ'այրիմ տապիմ,
Չունիմ մէկ մարդ հաւատարիմ.
Որ խղճալոյս գայ՝ մնանայ
Հէչ չէ ըսէ՞ մի՛ լայ, մի՛ լայ։
Ա՞խ Հայ տղայ, խղճա՛ ինձի,
Տես՝ թէ քո Անին ինչպէս է,
Հէրիք՝ ես լամ, դու չ'գթաս,
Չէ՞ քո Անին ափսոս է։
Ա՛խ ու վախով օրերս անցաւ,
Լալէն աչքերս կուրացաւ,

Որբ մնալն ինձ վիճակեցաւ.
Բախտս բնաւ զիս մոռացաւ։
Կորուցեր եմ թագաւորներ,
Ժողվեր եմ գլխիս քօռ բուվեր
Որք միշտ կ'երգեն «Անին անցաւ,
Անին անտէր աւերեցաւ»։
Անին եմ շատ մարդաբնակ,
Մնացեր եմ դառն աւերակ.
Իմ լացն, իմ կոծն, իմ աղաղակ
Անտէր որբերու նմանակ։
Երբեմն էի շատ անմման,
Հայոց քաղաք Արևելեան.
Աւերեր եմ սեփահատակ
Նստեր՝ կուլամ ես միայնակ։
Եկար՝ տեսար, դարձեր՝ կերթաս,
Լալով կըսես՝ «բարեաւ մնաս».
Ատուած սիրես չ'մոռանաս,
Մասիս սարին երբ մտենաս։
Ըսես իմ քա՛ջ Արարատին,
«Նստեր՝ կուլայ քո խեղճ Անին»
Կ'սէ. ե՞րբ աւետիք կ'տաս
Թէ՝ «իմ Անի, հէրիք է լաս։»

Աշ. Աթոթոպէոն

10

Անձն իմ վա՜յ քեզ հազար բերան,
Թէ ոխ պահես կամ խռով կենաս,
Զի խռովարարն է սատանայ,
Զանա՛, որ դու սէր հաստատես։
Տե՛ս՝ զինչ արար Տէրն 'ի խաչին,
Որ խաչողացն համբերեաց.

Դու քո եղբօրն բարկանաս,
Ոչ պատկառիս, ոչ ամաչես,
Թէ Քրիստոսի աշակերտ ես,
Պարտիս լսել՝ զինչ քարոզես,
Ապա լիցիս մարդ կատարեալ
Յորժամ առնես ուսուցանես։
Յորժամ հանես զոխն ի սրտէդ,
Եւ ատելին սրտով սիրես.
Թէ մեղք ունիս լերանց նման,
Ի մէկ պահուն զամէնն քաւես։
Թէ ատելոյն բարի առնես,
Եւ թողութիւն մեղաց խընդրես։
Ցամեն մեղացըն ազատեալ՝
Զարքայութիւնըն ժառանգես։
Թէ 'ի յատակըս դըժոխոց
Ծանըր մեղոք ընկըղմեալ ես,
Թէ խոնարհիս քո ընկերիդ՝
Երկնից խորանըն վեր ելանես։
Թէ մէջ հրեղէն գետոյն այրիս,
Յոր չար մեղքդ բորբոքիս,
Երբ շնչուցես զբարկութիւնդ՝
Հրեղէն յերկինս թեւակոխես։
Թէ և գերեալ է սատանայն,
Եւ ժանտախտից չար ծառայ ես,
Դու որ չարին բարի առնես
Քրիստոսի աշակերտ ես։

11

Առաւօտեան քաղցր և անոյշ հովերըն
Մեղձեալ հընչեն մեղմով թըփոցդ քովերն
Արդ ծածանին աչացս ըցեալ ծովերըն.
Բացի՛ր, բացի՛ր, իմ կարմիր վարդ աննըման
Գեղըդ նըման արեգական վառվառման։
Քանի ողբամ նոր 'ի նորոյ խոցոտիմ,
Ըզփայլուն գեղդ 'ի միտ բերեալ բոցոտիմ,
Յորդ արտասուք՝ ցայգ և ցերեկ թացոտիմ.
Բացի՛ր, և այլն։
Զմեռն էանց՝ ես քեզ կարօտ մընացի,
Այրիմ, տապիմ որպէս 'ի հուր հընոցի,
Քեզ շատ օրեր ես 'ի ձեռաց գընացի։
Բացի՛ր, և այլն։
Տեսեալ զծաղկունս՝ զամէն ինձ փուշ վարկանեմ,
Թևօք բաշխեալ՝ զիրա իմ քնքոյշ հարկանեմ
Ըզցաւ սրտիս՝ ահա քեզ յուշ արկանեմ։
Բացի՛ր, և այլն։
Արքայարանն Բիւզանդիոյ մեծ շինի,
Տեղ և բընակ յարմարեալ քեզ յարկ շինի,
Նաւակատեաւք՝ յիշատակ քո յար տօնի։
Բացի՛ր, և այլն։

Պետրոս վարդ. Ղափանցի։

12

Երգ աղօթական 'ի դէմս սրբոյ երրորդութեան, եւ իւրաքանչիւրոյ դիմի երրորդութեանն առանձնակի։

Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեա։
Բղխումն 'ի հօրէ, բղխեա 'ի հոգւոյս, բան քեզ 'ի հաճոյս։
Գանձդ ողորմութեան, գանձիդ ծածկելոյ, գրաող զիս արա։
Դուռն ողորմութեան, դաւանողիս բաց, դասեցո վերնոցն։
Երրեակ միութիւն, եղելոց խնամող, և ինձ ողորմեա։
Զարթիր Տէր յօգնել զարթո ըղթըմրեալս, զուարթնոց նըմանել։
Էդ հայր անըսկիզբն, էակից որդի, է միշտ սուրբ հոգի։
Ընկալ զիս գթած, ընկալ ողորմած, ընկալ մարդասէր։
Թագաւոր փառաց, թողութեանց տրւող, թող ինձ զյանցանս։
Ժողովող բարեաց, ժողովեա և զիս, ժողովս անդրանկաց։
Ի քէն Տէր հայցեմ, 'ի մարդասիրեդ, ինձ բըժըշկութիւն։
Լեր կեանք մեռելոյս, լոյս խաւարելոյս, լուծանող ցաւոյս։
Խորհըրդոց գիտող, խաւարիս շնորհեա խորհուրդ լուսաւոր։
Ծընունդ հօր ծոցոյ, ծածկելոյս ստուերաւ ծագեա լոյս փառաց։
Կենարար փրկիչ, կեցո ըզմեռեալս, կանգնեա ըզգլորեալս։
Հաստեա հաւատով, հաստատեա յուսով, հիմնեցո սիրով։
Զայնիւս աղաչեմ, ձեռաքս պաղատիմ, ձիր բարեաց շնորհեա։
Ղամբարամբ լուսոյ, ղեկաւար ճարտար, զօղեալս ամրացո։
Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցոյց ճեպել 'ի յերկինս։
Միածինդ հօր, մոյծ զիս յառագաստ, մաքուր հարսանեացդ։
Ցօրժամ գաս փառաք, յահագին աւուրն, յիշեա զիս Քրիստոս։
Նորոգող հնութեանց, նորոգեա և զիս, նորոգ զարդարեա։

Շնորհատու բարեաց, շնորհեա զքաւութիւն, շնորհեա զթողութիւն։
Ուրախացո Տէր ոգւոյս փրկութեամբ, որ վասն եմ 'ի սուգ։
Զար մշակողին, չար սերմանց նորին, չորացո զպըտուղն։
Պարգևիչ բարեաց, պարգևեա իմոց պարտեացս թողութիւն։
Զուր շնորհեա աչացս, ջերմ հեղուլ զարտասր, ջընջել ըզյանցանս։
Ռետինըդ քաղցու, ռամ ոգւոյս արբո, ռահ ցոյց ինձ լուսոյ։
Սէր անուն Յիսուս, սիրով քով ճմլեա սիրտ իմ քարեղէն։
Վասրն դրթութեան, վասն ողորմութեան, վերըստին կեցո։
Տենչալ-ոյդ տեսլեամբ տուր ինձ յագենալ, Տէր Յիսուս Քրիստոս։
Բաբունդ երկնաւոր, բոտեա զաշակերտս, բամից երկնայնոց։
Ցող արեան քոյ Տէր, ցողեա ի հոգիս, ցնծասցէ անձն իմ։
Իւծեալըս մեղօք, իւծեալ աղաչեմ, իւսել ինձ բարիս։
Փըրկիչ բոլորից, փութա զիս փրկել փորձութեանց մեղաց։
Քաւիչ յանցանաց, քաւեա զօրհնաբանս քեզ երգել ըզփառս։

Նէրսէս Կլայեցի։

13

Առ Հայաստան։

Առ ընկալ 'ի գիրկդ մայրդ Հայաստան,
Զորդիս քո սիրուն ցրուեալ ասստ և անդ.
Տես՝ ի՞նչպէս սիրովդ և քու կարօտովդ,
Վառուած բորբոքած քու տեսոյդ ցանկան.
Արի կաց ուրեմն ով մայր Հայաստան,
Նոր ոդի զգեցիր փառաք անվախճան։

1558-60
ՀԱՅ ԳՐԱԴԱՐԱՆ
ZUUՈ-Արամ
Ա. Մասեանի անվան

Օ՞ն զբահաւորիմք ով որդիք Հայկեան
Մեր մեր արցունքներն ջնջել յաւիտեան,
Զօրանանք սիրով և սուրբ միութեամբ,
Ըլլալ ախոյեան ընդդէմ թշնամեաց.
Հապա՛ գործելու ժամանակն հասաւ,
Հայրենասիրին կայ փառք անզբրաւ։

Տ. Փոքոքէան։

14

Երգ արագլի։

Արագիլ (1) բարով եկիր,
Դուն արագիլ, բարով եկիր.
Ըմե գարնան նշան բերիր,
Դու մեր սրտիկ զբաւթ արիր։
Արագիլ, մեզի իջիր,
Դուն արագիլ մեր տուն իջիր,
Մեր խացի ծառին բունիր,
Դու մեր սիրուն։
Արաքիլ, քե գանգրտիմ,
Հայ արագիլ քե գանգրտիմ.
Իմ հազար ցաւերս ասիմ
Սրտիս ցաւեր հազար ցաւ։
Արագիլ, եր գընացիր
Դուն մեր ծառէն եր գընացիր,
Զուլումաթ (2) հովեր արին,
Ծրծղուն ծրղկներրս չորցուցին։
Պրսպղուն երկինքն մրթներ,
Էն պրսպղուն երկինքն մրթներ.

1) Լաղլաղ, айсть 2) Դաւնաշունչ, սաստիկ քամի։

Մեր վերէն ձրներ բրրդեր,
Ծաղկաթափ ձրմեռն հասեր։
Վարագայ սարէն բրռնած
Էն Վարագայ սարէն բրռնած,
Ձիւն իջնէր ըմէն (1) ծածկեր,
Կանաչ դաշտիկրս ցուրտ աներ։
Արագիլ մեր դրախտին ձիւնիկ
Գատեր մեր դրախտիկ.
Կանաչուն մեր վարդնիս
Ցամքէր պաղէն ը ձրմրուէն։

15

Տփխիսեցւոց երեխայոց երգ։

Արեգակ արեգակ դուս արի,
Հերն ու մերդ եկիլ է,
Օսկէ բլեթ բերիլ է,
Գաստ ծակը դրիլ է,
Մուկն եկիլ է տարիլ է,
Կատուն եդնէն վազել է.
Գոմշի վուտը կոտրիլ է,
Աղամանը վիթիլ է։

16

Երգ կաքաւու։

Արև տէպու սարին վերէն
Խորոտիկ (2) խորոտի՞կ

1) Ամէն 2) Գեղեցիկ

Կեաքեաւն ելաւ իր բեռնէն,
Բարեւ արեց ծաղկներէն,
Թռաւ եկաւ սարին ծերէն,
Խօրօտիկ խօրօտիկ,
Ա՜յ սիրունիկ կեաքեաւիկ։
Երբ կեաքեաւն ձայն կրլսեմ
Երդիան իվեր գիւս կ՚երեշկեմ (1).
Կեաքեաւ կուգայ կրկրբալով
Դարին վերէն շարտալով,
Ա՜յ խօրօտիկ խօրօտիկ,
Ա՜յ սիրունիկ կեաքեաւիկ։
— Քէօ բէոն (2) հինած (3) ծաղկներով
Ուրհան նարկիս նունուֆարով.
Քեռ տեղ լցուած է շաղերով.
Դիւ կը մայլիս անմահ հոտով.
Ա՜յ խօրօտիկ խօրօտիկ,
Ա՜յ սիրունիկ կեաքեաւիկ։
Քեռ փեռուրներ են փափուկիկ,
Քեռ վիղն երկէն, կրատց պրզտիկ (4)
Քեռ թիւին գլոն (5) է նրխշունիկ,
Դիւ անուշ ես քանց եղունիկ (6)
Ա՜յ խօրօտիկ խօրօտիկ,
Ա՜յ սիրունիկ կեաքեաւիկ։
Երբ կեաքեաւիկն ծառին կիջնի
Իր քաղցր ձենով ճրվիլ կ՚անի
Աշխարհս ամէն զարթի կ՚անի
Արուն ծովէն սիրտ կը հանի
Ա՜յ խօրօտիկ խօրօտիկ,
Ա՜յ սիրունիկ կեաքեաւիկ։
Հաւերն ամէն գ՚ինտեկ կուտան,
Հետ քեզ կիգան շարտ շարան, (7)

1) Նայել 2) բուն гнѣздо 3) շինած. 4) Փոքրիկ 5) գոյն
6) աղաւնի։ 7) Կարգ շարուած։

Քէ շուրջ եկած կրճրվիլան,
Ըսկի չիկայ քեզի նման.
Ա՜յ խօրօտիկ խօրօտիկ
Ա՜յ աղաւորիկ կեաքեաւիկ։

17

Երգ ուրախութեան։

Արիք որ երթամք,
Սոխակաց երամք,
Ծաղիկ բացուեցաւ,
Միշտ փառք ցընծամք։
Արի՛, գովելի,
Գովելի լի՛ լի, (երիցս)։
Ծաղկունքըն գարնան՝
Սոխակ աննըման,
Ձայնիւ ցընծալով
Եղանակ բառնան։
Արի՛, գովելի, և այլն։
Ձայնիւ երգեսցուք,
Սիրով գոչեսցուք,
Եւ 'ի դէմ վարդին
Միշտ ոստոստեսցուք
Արի՛, գովելի, և այլն։
Եւ մեք երգեսցուք,
Սիրով գոչեսցուք.
Եւ 'ի ժամ գարնան
Միշտ փառս տացուք։
Արի՛, գովելի, և այլն։
Եկայք սիրեսցուք,
Զմիմեամբ փարեսցուք,

'Ի հանդէպ վարդին
Պարուք բերկրեսցուք։
Արի, գովելի, և այլն։
Ահա ցընծասցուք,
'Ի պարտէզ հասցուք,
Դու միշտ ցանկալի՝
Ե՛կ ուրախասցուք։
Արի, գովելի, և այլն։

18

Առաջին տարեդարձ ազգային սահմանադրութեան 1861 մայիսի 24.

Երիք հայկազունք, յառաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարև մ'ալ տանք.
Որ ազգն երբ զԱնի փրկարար գոչեց,
Նոր հոգի, նոր կեանք Անոր պարգևեց։
Եկէք բարեկամք, առ բարձրեալն Աստուած
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած.
Կեցցէ, Կեցցէ, Կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։
Զրկանք, բռնութիւն վատթար վարչութեան
Բերին մահն 'ի դուռն Հայոց ազգութեան.
Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց,
Եւ կենաց ուղին մեր առջև հարթեց։
Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ
Ուր ամեն վայրկեան գոչել պարտ է մեզ,
Կեցցէ, Կեցցէ, Կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։
Զնջեց ամենայն կարծիք անձնական,
Խեղդեց ամենայն ձայն անհատական.

Հրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին,
Առաջնորդ լինել գործոց ազգային։
Այն որ Աստուծուն ձայն տուաւ մեզի,
Մենէ թող առնու ձայնով մ'այնպիսի.
Կեցցէ, Կեցցէ, Կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։
Հայերս անարդուած փրկեց բարձրացուց,
Մարդկային կոչման մեզ արժանացուց.
Շնորհեց մեզի զոր ազատն Աստուած,
Մարդկութեան երկրորդ նշանն է դրած։
Որուն շնորհիւ յարգ ստացանք մենք,
Անոր յարգ տալով ապրինք ու երգենք.
Կեցցէ, Կեցցէ, Կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։
Դուն ալ Հայաստան, սիրուն Հայրենիք,
Ալ այսուհետև մի սրդար լռիկ,
Զի ալ քու որդիք նոր ոգւով բերկրեալ
Զքեզ հարս կուզեն տեսնել զարդարեալ։
Ա՛լ մի՛ լար մայրիկ, լացդ 'ի պար փոխէ,
Եւ ձայնիւ քաղցրիկ որդւոցդ հետ երգէ,
Կեցցէ, Կեցցէ, Կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։
Հայեր, միանանք մեր մօրն հետ օրհնենք,
Զանոնք որ մեզի տուին սուրբ օրէնք.
Սահմանադրութեան բարեաց փոխանակ,
Թող վարեն ուրախ կեանք մի փառունակ։
Թող և մեր որդիք հետ անոնց անուան,
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան
Կեցցէ, Կեցցէ, Կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Ե. Գ. Սրվանձեան։

19

Մուսա։

Արկածք Հայոց ժամանակին ընդ անիւ
Փշրին տակաւ մինչդեռ սիրոյ համբուրիւ.
Ուխտեմք 'ի սէր եղբօր՝ զկեանս դնել գրաւ,
Օն անդր 'ի մէջ այր ընկերին լարել դաւ։

Սլացաւ 'ի մէջ բաղդն անհամբոյր,
Արդ նոր բաղդիս քաղցր է համբոյր.
Եղբայր զեղբայր գգուէ սիրով,
Ճոխն աղքատին մատչի գթով։
Էանց գիշեր՝ արդ առաւօտ,
Ի ցօղ ժպտին Մասեաց արօտ.
Եւ վառ 'ի վառ շողշողելով,
Լոյսն արեգին ծըփայ 'ի ծով։

Հնապա մանկունք,
Վեհ քաջազունք.
Ի գլուխ պըսակ,
Ի յաղթանակ։
Առեալ նուագս,
Յարաքս արագս.
Օ՛ն փութասցուք,
Օ՛ն երգեսցուք։
Սէր և գութ,
Մեր պըսակ.
Առ մեր բաղդ,
Հրաւիրակ։
Ցնծասցեն,
Ոքք լըսեն.
Թէ՝ «ուր Հայ,
Զիք՝ անդ վայ»։

Եղիշաղար Մէլիքեան։

20

Աղօթք նախարարաց Հայոց։

Աստուած ողորմած
Տես մեր խղճութիւն, ջնջիր Պարսից ոյժ, զօրութիւն։
Զօրացրու Սամելին՝ համոզել Վահանին
Որ քաջաբար
Վանէ ոսոխք, պահէ կռօնք.
Սիրա տուր Վահանին՝ օգնելով Հայ ազգին
Թոյլ տալ Պապ արքային տիրել թագին.
Վահանն անօրէն թէ չ'դառնայ չարէն
Տուր Սամելին սիրտ, քարոզէ սէր ազգի, սէր կրօնի
Նրա սրտումն տպաւորէ։
Ինչպէս քաջ Հայ հանել հօրից վրէժն ազգի
Աղաչիր Պապին՝ կալ ժառանգ Հայ թագին.
Հասցրու մեր Ազգին իր հին փառքին.
Բաւէ տէր, բաւէ, այս ինչ մեծ ցաւ է.
Ի՞նչի Վահան մեզ կ'դաւէ.
Պահիր մեզ միաբան լինել միշտ օրհնաբան
Քո սուրբ անուան և գոհութիւն տալ յաւիտեան։
Ապաքէն Աստուած
Ոյժ տուր մեզ տկար բաղկաց ընդդէմ կալ բռնութեան
Օտար ազգաց։

21

Ողբ Զուլայեցւոց։

Ափսո՜ս քեզ Հայոց խեղճիկ ժողովուրդ,
Ցիր ու ցան ելաք անմեղ անխորհուրդ.
Գերի գնաման աք դէպ 'ի Խորասան (1)
Քաղցած ու ծարաւ, տրկլոր թշուառական։

1) Իսպահան, Պարսից երկրում։

Խարիւր ու խաղար ցաւի դիմացաք,
Ձեր քաղցրիկ երկրէն ոտք դուրս չը դրաք.
Խիմի ձեր խօր մօր գերեզման Թողաք,
Տընեարն ու ժամերն ուրիշի ծուաք։
Էն սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղաքներն,
Քաղցրիկ ջրերն, ձեր շէն գեղերն,
Ումն աք Թողման դուք, որ գնաման աք.
Էսպէս կըլլինի որ մոռանում՝ աք։
Վախում՝ ամ էնպէս մոքերնուդ ընկնի,
Ինչ քան որ ողջ աք մոքերնուդ չընկնի,
Բարի ձեր որդւոց, Թոռանց պատմեցէք,
Էսպէս խայրենիք քանդած Թողեցիք։
Մասիսի անունն, Նոյա տապանի,
Արարատ դաշտի, սուրբ Էջմիածնի,
Մեր Խոր Վիրապի, սուրբ Գեղարդ, Մուղնի
Ջ՝մոռանան մինչև՝ ի օրն դատաստանի.
Աչքըս կուրանար, շլինքս կոտրուէր,
Խեղճ Հայաստան, քեզ էսպէս չըտեսնէր.
Թէ մեռած էի, ինձ երանի էր,
Քան Թէ կենդանի՝ աչքըս բաց տեսնէր։

Սպեփան՝ վարդապետ։

22

՝Ի Շաւարշական դաշտին։

Վրէժք (1)

Բամբ.... որոտան բարձուստ բամբիւնք,
Արարատեան դաշտն՝ ի վայր,
Արի արանց արիւնք յեռանդն առատանան՝ ի հրաշալիր
Հրաւէրք հայրենեաց հռչակին՝ նդհանուր

1) Այս երգը առնուած է «Սանդուխտ» ողբերգութենից։

Հոգիք Հայկազանց բորբոքին՝ ի հուր.
Որք երկնաւորին պսակին էք կարօտ.
Որք երկնաւորին փառաց երկնայորդ։
Հա՛պ՝օն արի առանց մանկունք,
Հայրենավրէժքդ Հայկազունք,
Հա՛պ՝օն՝ ի զէն գունդագունդ,
Ցեռեալ՝ ի պար Թունդ ի Թունդ
՝Ի զէն՝ ի վրէժ, ՝ի զէն՝ ի վրէժ՝ մի՝ ձախ մի՝ յաջ,
Օ՞ն անդր յառաջ, մի՝ ձախ մի՝ յաջ,
Օ՞ն անդր յառաջ, յառաջ, յառաջ,
Հա՛պ՝օն, յառաջ։

23

Վերջին գարուն։

Գարունն է եկել նախշուն Թևերով,
Նախշուն Թևերը պէսպէս ձևերով.
Գոյն գոյն ծաղիկներ՝ կարմիր ու սպիտակ,
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով։
Երկինք ու երկիր քեզ ասնեն, գարուն,
Չի ես քան զամեն եղանակ սիրուն.
Նա անձրև ցողէ առատ՝ ի վերէն,
Դա օրհնել տայ քեզ եկող հաւերուն։
Ոսկի փայլ է քեզ վերէն,
Կենսաբեր հովը փրչէ՝ ի լերէն.
Ա՜խ, աղնիւ գարուն, եղանակ սիրուն,
Արդեօք դու ի՞նչ բաղդ բերիր ինձ Տերէն։
Գլխաքարշ երթամ՝ ի պարտէզ այգուն,
Ախ ու վախ քաշեմ ես անդ օրն՝ ի բուն.
Չ՝կայ ինձ հանգիստ, ցնծութիւն սրտիս,
Ես վաղ եմ մոռցել՝ զի՞նչ անդորր է քուն։

Մեռած պատանքած գեանին կեանք տուար,
Տերևաթափ ծառին ստուերախիտ արար,
Քեզ թռչնոց երամ հանդէս կանչեցիր,
Ինձ մենակ խղճիս էապէս մոռացար:
Առաջ գնա, գարուն, դէպ 'ի հիւսիսն 'ի խոր,
Գնա, կանանչցուր դու անդ սար ու ձոր,
Որոց անհամբեր քեզ կան՝ տուր բարև,
Քո ուրախ գալստեամբ նոցա զուարճացուր:
Կուգաս գալ տարի՝ դու ինձ կու գտնես,
Ո՛չ 'ի մեր այգին և ոչ 'ի պարտէզ,
Այլ անզարթ քընով հողի տակ պառկած,
Գերեզմանաքար մի վրաս կը տեսնես:

Ռ. Տ—Գ. Պապիկեան:

24

Արմենուհի:

Գեղեցիկ Արմենուհի, դու իմ սրտիս հատոր,
Ո՜հ, ինչ խորհրդաւոր է քո սէրի կոչումն.
'Ի զուր ես դասում անձդ տղամարդերիցն ստոր,
Քեզանից է սպասում Հայն իր վերահնչումն:
Ընտանեկան կենցաղում իրաւունքի տէր ես,
Ամէն մի անդամն տան՝ քեզ պատվում մեծարում.
Ամուսնական վիճակում մաերիմ ընկեր ես,
Օրինակ ես գովութեան ամենայն աշխարհում:
Թագիդ վերայ մի ակը չի երևում «չկայ»
Որ տայ Հայ տանտիկնոջը առանձին շքեղութիւն,
Քեզ վայել է ներկայում մի այլ նոր առարկայ,
Լուսաւորութիւն ասեմ, ո՜հ, լուսաւորութիւն:
Միմեան թէ քո Հայկական մտաց արշալոյսն,
Պէտք է Մասեաց գագաթից իր ծագումն առնի.

Խորթ ուսմունքներից չկայ Հայ մայրութեան յոյսն,
Այս անոյշ մահագեղն բնաւ գեղաթափ չունի:
Արմենեան քո ծնունդը ձեռք ծնողիս լալիս,
Արձակիր կրթութիւնդ խաւարի կապանքից.
Ով որ մարդկային ազգին կեանք ու ծնունդ է տալիս,
Ազգայնութիւն նմանապէս կ'ծնանի նորանից:

Մ. Փ.

25

Ի հանդիսի երրորդ տարեդարձի տգայի սահմանադրութեան (Կ. Պոլսոյ):

Գարուն Հայաստան գայ ծաղկապսակ,
Զայն ողջունելու ելէք Հայ զաւակք.
Անցան սև օրեր, օրեր մահահոտ,
Հայոց նոր բաղդի ծագի առաւօտ.
Սահմանադրութիւնն ուղղեցոյց կենաց,
Սիրոյ դրոշակով եկաւ զարդարուած:
Որ փայլի Արև սուրբ Հայաստանի,
Որ Հայ ազգութիւնն փառաց վերածնի.
Կեցցեն անձնանուէր որդիք Հայկազունք,
Կեցցէ, Ազգայն Սահմանադրութիւն:
Կաթիլ մ'արտասուք հեղուցեք անհրաման
Ի սուրբ յիշատակ մեր քաջ նախահարց.
Կաթիլ մի քրտինք հեղուցեք անխնայ,
Ի նպաստ Ազգիս յուսոյ պարգեւ.
Եւ ոչ իսկ խնայենք բոլոր մեր ճգունք,
Կրօնի Հայրենեաց և Ազգի սրբոյն:
Որ փայլի Արև . . և այլն:
Հայեր, միանանք, կ'դեանք առաթուր,
Ամէն ուժ և նեղ, պարիսպներ ամուր.

Երկինք զայս մեր սուրբ կ'օրհնէ Միութիւն,
'Ի Աստուած Գրիգորի զօրավիգ արթուն.
Հապա խրախուսինք, կուրծք տանք անվեհեր,
Ընկճենք կործանենք, ամեն արգելքներ։
Որ փայլի Արև... և այլն։

Ունիմք սիրտ, ոգի եռանդուն,
Ժառանգ մնացած բաղուկ աննկուն.
Դարերու յաղթող Ազգի զաւակ ենք,
Ամէն նախատինք օն փութով ջնջենք.
Անմահ Հայութեան կանգնենք յաղթանակ,
Հայոց մեր ճակտին հիւսենք պերճ պսակ։
Որ փայլի Արև... և այլն։

Ս. Գ. Գ. Փոփոպէոնց։

26

Գիւղական աղջիկ եմ ես զամբիւղաշէն
Եկեալ աստ զամբիւղք 'ի Հայոց երկրէն,
Ցուսամ, զի Հայ տիկնայք և պարոնայք Հընդկաց
Բարձր գին տայցեն իմ սիրուն զամբիւղաց.
Առ զամբիւղ (երիցս) յօտար աղջկանէս։

Զարարատ, զնփրատ և զՏիգրիս թողի
Միայնակ շրջիմ աստ յեղերս Գանգէսի,
Պանդուխտ եմ, օգնեցէք անտերունչ անձինս,
Զի ծնողք ձեր յառաջ աստ պանդուխտ էին,
Առ զամբիւղ... և այլն։

Զամբիւղք իմ են յարմար ասղնագործութեան՝
Պահել անդ զմանոց, զթել, զասղաման.
Իմ ձեռօք եմ գործեալ ես զամենեսեան,
Երբ խաչինք և գառինք իմ զենև խայտան,
Առ զամբիւղ... և այլն։

Գանձք բաղումք, ցաւք բաղումք կան յայսմ աշխարհի,
Պէտք սակաւք, ցաւք սակաւք կան յիմում երկրի,
Զայգի մը ունէի՝ զամբիւղ գործէի,
Լոկ կաթամբ և պտղով երջանիկ էի,
Առ զամբիւղ... և այլն։

Աստ սերկևիլ ծիրան և խաղող չի կայ,
Բայց միայն ադայ, բիլայ ու քիլայ
Ա՜խ, ե՞րբ իցէ, զի արժանի եղեց վերըստին
Ճաշակել զպտուղս իմոց պարտիզին,
Առ զամբիւղ... և այլն։

Ապա դուք լաւ կանայք՝ զամբիւղս իմ առէք,
Գիւղական աղջկանս սիրով օգնեցէք.
Զի դարձեալ յերկիր իմ հանդերձ ձեր շնորհօք՝
Զերախտիս ձեր առեալ՝ գովեցից բաղմօք՝
Առ զամբիւղ... և այլն։

Մ. Թաղխոպէոնց։

27

Եկէք, եկէք, օն դուք աստի,
Հոգ, անձկութիւն ու տագնապ,
Եկէք ծիծաղք և խաղք մեղմ,
Հաճոյք գոլով սիրոյ կապ։
Զ'պակասեն զբօսանք մեղմէ,
Կարևոր բան մ'ալ այն է,
Զիս հրաւիրող ամէնքդ հոս,
Ձեր եռանդն այս մեծ է։
Բայց պէտքէ խորհիք մտածողք,
Թէ ի՞նչ ձեր բաղան որոշեց,
Միշտ սիրեցէք ու բաւ է,
Ձեզ երջանիկ այն կնէ։
Դէ, սիրոյ համբոյր տուէք արդ,

Այդ թող լինի մեզ սուրբ զարդ,
Հայոց համար այնպէս պիտի,
Որ նոցա եռանդն զարթի։
Միշտ յիշեցէք ձեր նախնիքը,
Ամուր պահէք այն պարտքը,
Որ միշտ հնչուի ձեր ականջին,
Հետևեցէք այս դարին։

28

Ի հանդէս հինգերորդ տարեդարձի ազգային սահմանադրութեան։

Եկաւ ժամանակ բարեկամ բաղդին,
Նոր գարուն բերաւ Հայաստան երկրին.
Ինչաւ յԱրարատ՝ հասաւ՝ 'ի Տիէրիս,
Դարձաւ դադրեցաւ կեցաւ 'ի Մասիս։
Եւ ձայն տուաւ անկէ Հայոց,
Ձայն մի Թորգոմայ որդւոց։
Որ մերկանան զգուրտ ձմեռան վարագոյր։
Ժամ է արդ Հայեր,
Ընկեր առ ընկեր.
Տամք սիրոյ համբոյր։
Համբոյր մեր ըլլայ վկայ միութեան,
Սահմանադրութեան։
Եւ շիջելափառ Հայրենեաց խորան,
Բացաւ տխրագին զլուր քող ճգնութեան.
Հասին հոն Մուսայք, և Ցուսոյ հրեշտակք,
Ախորժ երգեցին խնդութեան նուագ։
Եւ սիրտ տուին անկէ Հայոց,
Սիրտ մի Թորգոմայ որդւոց։
Որ մերկանան հեռ նախանձու վարագոյր։

Ժամ է արդ Հայեր,
Ընկեր առ ընկեր.
Տամք սիրոյ համբոյր։
Համբոյր մեր ըլլայ մեր ուխտ միութեան,
Սահմանադրութեան։
Ելաւ Հայաստան նոր գարնան 'ի տես,
Դարձա 'ի շքեղ իւր փառաց հանդէս.
Դարձիր բաղդակոծ Քնարդ իմ հոգւոյն,
Դարձէք աւուրք կենաց, դարձէք յայդ յուսոյն.
Եւ լոյս տուէք անկէ Հայոց,
Լոյս մի Թորգոմայ որդւոց,
Որ մերկանան մութ գիշերին վարագոյր։
Ժամ է արդ Հայեր,
Ընկեր առ ընկեր.
Տամք Սիրոյ համբոյր։
Համբոյր մեր ըլլայ կնիք միութեան,
Սահմանադրութեան։

Հ. Ս. Ֆեղէլեան։

29

Երազ։

Ես լսեցի մի անոյշ ձայն,—
Իմ ծերացած մօր մօտ էր։
Փայլեց նշոյլ ուրախութեան,
Բայց ափսոս, որ երազ էր։

Կարկաչահոս աղբիւր այն տեղ
Թաւալում էր մարգարիտ.—
Նա յստակ էր որպէս բիւրեղ,
Այն երազ էր ցնորամիտ։

Եւ մեղեդին տխուր, մայրենի
Յիշեց մանկութեան օրեր.—
Մօրս համբոյրն ես զգացի,—
Ա՜խ, ափսո՜ս, որ երազ էր։

Կուրծքին սեղմեց կարօտագին.
Աչքերս սրբեց—շատ թաց էր,—
Բայց արտասուք գնո՜ւմ էին
Ա՜խ, այդ, ինչո՞ւ երազ էր։

Ս. Շահոլիկեանց.

30

Ըստ եղանակի,

«Գիւղական աղջիկ եմ ես» տաղին.

Ես տապան նստեալ 'ի գագաթ սարին,
Իբրև պահապան Հայոց աշխարհին,
Գիշեր և ցերեկ կոչեմ և ողբամ,
Իսկ Հայք զիս թողեալ.....
Ո՞ւր է Հայ, ո՞ւր է Հայ, ո՞ւր է Հայ,
Զիս թողին անտէր, եղեն ցիր ու ցան,
Հայաստան մնացած այլոց ապաստան,
Թշնամիք ղնա կոխան արարին,
Վեմք հիմանն նորա, տես, թէ ո՞ւր հասան։
Ո՞ւր է Հայ,.. և այլն։

Արուսեակ բաղտիս յանդունդն իջաւ,
Ճրագ փառաց իմոց 'ի հողմոյ շիջաւ,
Որդիքն իմ՝ նման անմռունչ գառանց,
Ի սպանդ մահու տարան դահիճաւ։
Ո՞ւր է Հայ,.. և այլն։

Գարունն իմ կորոյս զիւր տաք եղանակ,
Զեբեր զշուշան, վարդ և մանուշակ,
Սէյեադ, արիւն իմ սառուցեալ մնաց,
Զի ո՛չ ծագեցին լուսին, արեգակ,
Ո՞ւր է Հայ,.. և այլն։

Պ. Տ—ց. Մարմարեանց։

31

Գրենադերներ։

Երկու գրենադեր գնումէին Ֆրանսիա,
Որ գերի էին հիւսիսում ընկած (1).
Եւ երբ որ եկան, հասան Գերմանիա,
Այնտեղ թեքեցին գլուխներն վաստակած։
Այս տեղ լսեցին այն տխուր վէպքը
Թէ նուցա սիրուն Ֆրանսիական կործանուած։
Յաղթուած ու ջարդուած քաջաղուն զօրքը,—
Եւ կայսրը, կայսրը (2), թշնամուց գերուած։
Նոքա միասին լաց էին լինում,
Այդ արտասուելի լսելով լուրքը,
Վա՜յ, ասաց մինը, «ի՞նչպէս է ցաւում,
Ի՞նչպէս է այրում,ա՜խ, իմ հին վէրքը»։
Երկրորդը ասաց, «վերջացաւ բանը,
Եւ ես կամէի քո հետ մեռանիլ,
Բայց կին ու զաւակ թողել եմ տանը.
Նոքա առանց իմ կարող են կորչել։
«Ի՞նչ փոյթէ ինձ կինս, որդիքս ի՞նչ փոյթեն,
Սրտիս բաղձանքը աւելի լաւ է.
Թող գնան» հաց մուրան, եթէ սոված են,—
Կայսրը, իմ կայսրը գերի տարած է»։

1) Ռուսիայում։ 2) Այսինքն Նապոլէոն առաջինը։

«Կատարիր, եղբայր, իմ մի խնդիրքը,
Եթէ ես այժմ մեռնիմ այս երկրում,
Տար դէպ 'ի Ֆրանսիա դու իմ դիակը,
Թաղէ՛ր ինձ այն տեղ Ֆրանսիայի հողում։
«Կարմիր Թելից կախ պատուանշանը,
Դիր դու քո ձեռով իմ քաջ սրտի վրայ
Եւ աջ ձեռս տուր իմ հին հրացանը,
Այլև իմ սուրս կապիր մէջքիս վրայ»
«Եւ այսպէս պառկած, ականջ կը դնեմ,
Ինչպէս պահապան, գերեզմանումը,
Երբ Թնդանօթի որոտումը լսեմ,
Այլև խրխնջող ձիերի արոփը։
«Եւ կայսրը կ'անցնէ իմ վերայ ձիով,
Կը շառաչեն սուրեր, և նոյն րոպէին,
Իմ գերեզմանից դուրս կրգամ զէնքով,—
Եւ կը պաշտպանեմ կայսրին, իմ կայսրին»։

Թարգ. Գ. Բարխուդարեանց։

32

Վասն մահու կաթուղիկոսին ամենայն Հայոց Տ. Տ. Ներսիսի Ե. ի 13 փետրվարի ամսոյ, 1857 փրկչական ամի։

Զարթիր 'ի քնոյ, ով Հայաստան, տես՝ ուր է քո Ներսէսն.
Ժամանակը պառաւելայ. էլ չի ծնիլ էնպէսն։
Շատ թանգագին գանձէ ազգի՝ հաւատարիմ Տնտէսն.
Նա էր քո որբ որդւոց համար՝ Աստուածառաք Մովսէսն։
Մնեալ յաղնիւ ծնողաց 'ի նոր Աթէն գիւղն Աշտարակ
Փչեցեալ 'ի նա բերան փրկչին, խելք թափանցիկ միտք բարակ.
Մանուկ գոլով վերին կոչմամբ զանձն իւր եւ պատարագ.
Ներքին արտաքին գիտութեանց հասոյց ինքն յօժար արագ։

Սերեալ գոլով հաստատապէս Շահազիզեան մեծ տանէ,
Որոյ շղթայն սկիզբն առնու՝ Կամսարական յիշխանէ.
Այնպեսի տան որդին թէ ո՞նց կուլինի, յայտնի բան է
Բանականից անբան՝ չլծնիլ՝ և բանական յանբանէ։
Ծնունդը մեծ. ծնունդը մեծ, անկեղծ ասեմ՝ յատուկ մեծ.
Իւր մեծութիւնը հաւասար՝ Ազգին եղոյց նա շուք մեծի
Որոյ կեանքն էր երջանկութիւն Հայոց, իսկ մահը՝ սուգ մեծ.
Աշխարհ գիտէր՝ որ նա յայտնի մեծ էր, ոչ թէ անյայտ մեծ։
Մինչ Աբեղայ էր նա՝ եղև Դանիէլեան արբանեակ.
Իբրև հարազատ որդեգիր՝ անկաւ չարչարանաց տակ.
Հնոց խօսք է թէ հանապազ չարն բարեաց է ներհակ.
Բայց ամպը երկար չի կարող թագուցանել զԱրեգակ։
Ըստ վիճակին Հայր հոգևոր, բայց ըստ նախնեաց Զօրավար
Նա ընդ Կոմսին Երևանու՝ բաղում սքանչս արար.
Հալածելով զՊարսիկ զորս իբրև Փերոս զխաւար.
Կնճիռք բանից 'ի մէնջ ծնելոց՝ ձգեցին զնա վաղ 'ի տար։
Հազար ու հարիւր քառասուն երեք թուին փրկչական
Նա բազմեցաւ ըստ արժանւոյն 'ի Գահ Լուսաւորչական.
Փախեաւ խաւար անյուսութեան՝ ծագեաց լոյս արեգական.
Տրտմեալ ճակատք Հայկաղնէից զուարթագեղ փայլեցան։
Բազմեալ 'ի գահ յայտնի ետես զանազան զբկողութիւնք.
Նկատելով 'ի հոգևորս՝ անտեղեաց յարգողութիւնք.
Ջնջեաց յամենից ատենից աններելի գողութիւնք
Առ յանցաւոր 'ի նմանէ ծագէին միշտ թողութիւնք։
Թէպէտ յայտնի խիստ երևիր, բայց էր մէկ խաղաղ հրեշտակ
Ազգի պայծառութիւնն էր միշտ նորա համար նպատակ.
Որովհետև միմիայն էր՝ չունէր երբէք օժանդակ,
Ոչ մարթացաւ՝ որչափ ցանկայր թողուլ Ազգին յիշատակ։
Դու փետրվար նահանջ ամիս՝ թուք լինի քո երեսին.
Միանգամայն բարօրութեան նշան չունի քո ծէսին.

Ցիսուն ու հինգ թուին առեր դու Մեծ Նիկողայոսին
Ցիսուն ու եօթին խլեցեր Նորա ընտրած Ներսիսին։
Պատմութեանց մէջ անհաշիւ է՝ փետրվար քո գործերդ.
Վերջապէս մեր Հայոց անտէր Ազգին կպաւ քո խէրդ.
Զեռս ընկնէիր՝ անխնայաբար կապոտէի ոտներդ
Մուր քսելով աղտեղէի քո անամօթ պատկերդ։
Որ դու մեր խեղճ Ազգին թողեր 'ի դառնութեան վիճակի
Թող զի ազահ սիրտ քո՝ Հայոց դժբաղդութեան յագի.
Կամեցեր տալ անհոտ ծաղիկ՝ մեզ փոխան մանուշակի.
Գիտելով զի մետէօրայն ոչ տայ լոյս արեգակի։
Մայր հաւատոյ, քո անարատ փեսայէդ ի՞նչ լիացար,
Որ այդպէս յոյժ վաղվաղակի սև հագար՝ այրիացար.
Զիցէ՞ թէ դու մեծամտեալ՝ մոլութեանց որդիացար.
Զի 'ի պատիժ յետս ընկրկեալ՝ նախկին դրութեան միացար։
Լեառնդ սուրբ որ ցարդ պահես դու զՆոյեան Տապանն.
Իսկ ընդէ՞ր ոչ պահպանեցիր զքոյ Ազգիդ պահապանն։
Մի՞թէ չէիր գիտում զի տէր չունի որբ Հայաստանն
Կամ թէ պիտի անդրադառնայ յառաջին աստիճանն։
Եղո՛ւք Հայեր, ընդէր ոչ լայք զմահ ձեր սուրբ ծնողին,
Գերի մարդը ոնց չի զգալ կորուստը իւր փրկողին.
Շատ օր չէ անց որ դուք զնա ուանդ տուիք սև հողին։
Էապէս Ներսէս չէ՞ք տեսանել ցգալ արդար Դատողին։
Մինչի վախճան նա ամենիդ նախախնամող եղև
Արժան մարդկանց՝ ոչ ի իցեն՝ արդար գին դնող եղև
Որովհետև ի հոգոյ էր ստեղծեալ, կրկին հող եղև.
Մինչ կենդանի էր նա, զնա ընդ սրբոց յարգող եղև։
Անհարազատ մարդկանց համար այսօր է ցնծութեան տօն.
Այնպէս մարդկանց արասցէ Տէր՝ ըստ սուրբ գրոց օն և օն.
Այս մեծ գործիս հարկաւոր է Համերոս կամ Կիկերօն-
Այլ ոչ թէ Սեյեադի նման անտաշ, կոպիտ, անզգօն։

Պ. Տ—Զ. Մոպսվէսթն։

33

Աղասու մօրերդը։

Զարթիր, մանուկ իմ նաղելի, բաց այդ պայծառ աչերը,
Թերթերունքէդ քունը թօթուէ, գիրկը հանգիր քու մօրը.
Բաւ քեզ որքան բարի հրեշտակք հէքաթ ասին երազում,
Այժմ արի քեզ այն պատմեմ, ինչ պիտ՝ տեսնես աշխարհում։

Զարթիր, որդեակ, քանի՞ քընես,
Բաց աչերդդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը
Կեանք ու արևն է տեսնում։

Դուն կը մեծանաս, բոյ կը քաշես—չինար բոյիդ ես ղուրբան,
Քեզ ուժ կուտան Մոսսի քաջքը, որ դու լինիս քաջ Վարդան,
Իմ մատներով մի ոսկեթել մէջքիդ գօտի եմ կարել
Գօտիցդ թուր կը կապեմ, այն էլ ինքս եմ սրրել։

Զարթիր որդեակ քանի՞ քընես, և այլն։

Մեր բակումը ձի է կայնած՝ քեզ է մնում անհամբեր,
Զարթիր որդեակ քանի՞ քընես, ա՛ռ քու թուրը մահաբեր,
Քու Հայ ազգը հեծեծումէ ձեռքը ոտքը շղթայած,
Քու եղբարք գերութեան մէջ. քաջ միայն դո՛ւ ես քնած.

Զարթիր որդեակ քանի՞ քընես, և այլն։

Զէ, իմ որդին շուտ կը զարթէ, ձին կը հեծնէ սանձակոծ։
Հայի արցունքը կը սրբէ, կը դաղրացնէ լաց ու կոծ։
Հայ եղբայրներ, քիչ էլ կացէ՛ք, իմ Աղասին զարթեցաւ,
Գօտին կապեց, թուրը կախեց ու իր նըժոյգ ձին նըստաւ։

Ի. Տ. Գ. Պոպիոնէան։

34

Աղէն տանն է։

Զարմանք բան է, հէնց գիտենաս,
Աղէք տանը չեն նըստում.
Իսկի չէլաւ վուր մի գըտնիմ
Աղալօին իր տընում։
Մի արմընա, պարուն Սարգիս,
Էս աշխարքի ադաթին,
Իշխանք գանա, դու խաբար չի՞ս,
Վուր քասիբին կու ատին։
Ա՛ռ օրինակ, թէ մեծավուր,
Ապալետնները ուսին,
Գայ դըռան մօտ հարցն է աղին,
«Տա՞նն է.—տանն է, կօսին։
Նըրա էդնից մի փէշաքար,
Էլի էն նօքրին հարցնէ.
«Տա՞նն է աղէն». կընծին տալով
Խեղճին իսկոյն դուս կանէ։
Թէ աղի մօտ լաւ շուրերով
Կուգաս՝ տանը կու գթնիս,
Վա՜յ թէ չուխէդ հընացած է,
Լաւն էն է, տուն չի մընիս։
Թէ սալօպով աղջիկ պարոն
Կուգայ՝ թող նէրս հրամայէ,
Թէ ղաթիպով պառաւ ձալն
Հարցնէ—կօսին տանը չէ։
Թէվուր ձեռքիդ քիսա բըռնած,
Պարօնին փուղ բերիլիս,
Փառք ու պատուով ներս մընու�,
Գլխի վըրայ տեղ ունիս։

Թէ դուքանդար իս, հիսաբով
Փուղի էդնից իս էկի,
«Տա՞նն է աղէն». կօսին-հալա
Ժամիցը տուն չի էկի։—
Էս է հիմիկուայ ադաթը—
Կուզիս ջիգրից տըռաքի,
Թէ քասիբ իս, ջուրը ընկի,
Թէ ղօչախ իս՝ տուն մընի։

Ռ. Տ—Գ. Պապիանէանց

35

Երգ դարմ.

Զէյթուն, անկախ դու աշխարհիկ
Քո սար ու ձոր են անառիկ
Ամեն մի քար ու անկիւնդ
Շաղախել է քո արիւնդ։
Հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ։
Դեռ ևս քո զօրեղ բազկում
Ռուբենեաց երկիրն է շարժում,
Ցիշատակ նախնի դիւցազանց
Պատկերն է քո քաջ զաւակաց։
Հէլլէ, հէլլէ.....
Մըրախդ է ունեցած կայքն
Քո ապրուստն է և քո կայքն
Բռնութեան լուծն թուրք մարդու
Էտ ղէնքով ես թոթափել դու
Հէլլէ, հէլլէ.....
Կեցցէ Գրիգորեան հաւատը
Հայ պահել իւր ժողովուրդը,

Ո՛չ մի կրոն աշխարհիս վրայ
Զուրի աղատ ոգին սորա։
Հելլէ, հելլէ.....

Մ. Փ.

36

Զինուորի երգ։

(Թարգմանութիւն։)

Օ՜ինուրիս երգերը եղբարք լսեցէք,
Աշխարհիս բաները լաւ ճանաչեցէք։
Մէկ ոչնչ մեծ տներ, միւսն գիւղ ունի,
Միայն խեղճ զինուորը ոչինչ բան չունի։
Շորերը թանկագին, փորը միշտ քաղցած,
Տուր ձիուն միշտ գարի, ինքդ կեր չոր հաց։
Թէ քաջ պատերազմես կ՚տան մեծ պարգև,
Թէ ոտքդ կորցնես, կ՚ասեն մնաս բարև։
Ուր գնամ ես մենակ աշխարքիս վրան,
Ահա քեզ լաւ վաստակ քսան մէկ տարուան։

Գ. Դոքոխեանց։

37

Օ՜ձեզ որդիք Արամեան
Կոչէ Հայաստան,
Զարթեայ, ասէ, ՝ի քնոյ
Ինձ հանգիստ ոչ գոյ։
Ուր լցեն զաւակք իմ,
Ուր են իմ նաժիշտք,
Ուր են ոսկեհուռ զարդք իմ
Հայրենի օժիտք։

Ուր մեծասաստ գաւազան,
Զոր Հայկ ինձ յանձնեաց.
Ուր քաջատէգ խումբ մարտկաց
Ուր Հայք գիւցազանց։
Ուր են անթիւ քաջոզիք,
Ոյք ականք բազմաց,
Ուր ներկուռ են իմ վարժիչք
Դեռաբոյս կացեաց։
Ձեզ կոչեմ, զաւակք իմ,
Լուարուք իմ ձայնի,
Ցիշեցէք զկաթն իմ
Զոր ձեզ ջամբեցի։
Որդիք էք դուք Հայկայ —
Ժառանգորդք իմ տան
Որդիք սէգն Արագայ
Որդիք Տիգրանայ։
Զմայրն ձեր որբացեալ
Մինչև ցերբ թողուք
Զերկունս իմ յիշեալ
Զայնիս իմ լուարուք։
Հայաստան մայր կալ զայս
Լուր ձայնից որդւոց,
Սրբեա՛ յաչաց զարտասուս,
Տեղի տուք ցաւոց։
Զկաթն զոր մեզ ջամբեցեր
Արդ մեք յիշեցաք,
Եւ զՀայրենի թագն մեր,
Զոր մեք կորուսաք։
Հերիքասցին աղէտք քո
Մայր մեր Հայաստան
Կառուցաք մեք ՝ի սէր քո
Զքնաղ զապարան։

Աստի ելցեն քեզ վարժիչք
Որոց փափագիս,
Աստի ներկուռ ուսուցիչք
Որոց իղձ ունիս։
Երդումն անխաբ երդուաք
Կատարել զուխտ մեր,
Սէր զոր 'ի մեզ վառեցաք,
Է առաջնորդ մեր։
Կեցցեն անդամք ուխտին մեր
Բազկաւ Անեղին
Կեցցէ անխախտ փոքր հօտ մեր
Վասն Հայաստանի։

Հ. Փափազեան։

38

Տ փ խ ի ս ե ց ւ ո ց ե ր ե խ ա յ ո ց ե ր գ։

Էգուց (1) կիրակի է,
Կոկոմ քաղելու է,
Կոկոմ քաղեմ դէդին (2) տամ,
Դէդէն մէ ինձ գառը տայ,
Գառը տանեմ Աստծուն տամ,
Աստուած ինձ մէկ ախպէր (3) տայ,
Ախպէր ախպէր ես քու շուն
Գոտկի (4) ծերին ապրեշում (5)
Աբրեշում չելի կաղ (6) ելի
Սուփրի (7) ծերին սաղ ելի։

1) Վաղը. 2) մայր. 3) եղբայր. 4) գոտի. 5) մեռաքս. 6) սոսկա-գոյն, ցած մեռաքս 7) ծածկոյթ սեղանոյ, սփռոց սեղանոյ։

39

Շ ո ւ շ ա ն ի կ։

Էր հեռանաս քո մայրենի աշխարհից,
Կարոտ թողուս սերտ բարեկամք քեզանից.
Մեր ամենիս դու մայր էիր գթառատ,
Արդ հեռանաս, մեզ մութ պատէ անփարատ։
Քո սուրբ ձեռօք մեր վէրքերը շատ անգամ
Լուանայիր, դեղ դնէիր ամէն ժամ,
Քո մազերից ոլորէիր վիրակապ
Քո բոլոր կեանքն ազգիդ համար էր ագապ։
Արդ Հայոց զօրքն իւրեանց մօրից որբանայ,
Վրաց ազգը քո խնամօք պերճանայ,
Հայաստանը զրկի իւր սուրբ Շուշանից,
Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից։
Ուր որ երթաս, ուր որ լինիս տիրուհի,
Մեր սիրտ հոգին քեզ հետ տանիս մաքրուհի.
Գնաս բարեաւ մեր լոյս հաւատն քեզ ընկեր.
Աջն ու խաչը քեզ պահապան զօր գիշեր։

Ց. Կորինեանոյ։

40

Ա ղ օ թ ք։

Ըզձայն մանկանց, ով տէր Յիսուս
Լուր, որոնց դու միայն ես յոյս.
Է՛ջ, երթիցուք քո 'ի սեղան
Եւ 'ի սրտիցս զբաղմարան։

Քեզ Ծառաւեալ ոգիքն մեր,
Արբո՛ նոցա անուշ քո սէր.
Լո՛ւր մեզ Յիսո՛ւս, լսո՛ւր զմեր ձայն,
Դու զաղգս օրհնեա՛ և զվարժարանս։
Տե՛ս, տէր, մտաց մեր զխաւար
Եւ լոյս ծագեա՛ քո հոգեվառ.
Տե՛ս զի ախտից 'ի սիրտ մեր յոյս
Ցառաքինի 'ի ջանս եմք թոյլ,
Տո՛ւր մեզ զշնորհս քոյին հզօր
Զի մի կրեց պարտ եմք մոլոր։
Լո՛ւր մեզ, Յիսո՛ւս
Լո՛ւր զմեր ձայն,
Դու զաղգս օրհնեա և զվարժարանս։
Տո՛ւր մեզ յաղօթս յուսումն եռանդ,
Զի մեր տեսչաց լիցուք հնազանդ։
Դու, տէր, զնոսա ջնջեա՛յ զքիրտ.
Լեր մխիթար նաւոյն 'ի սիրտ.
Պահեա՛ զնոսա ամեն չարեաց
Եւ զվաստակ օրհնեա՛, Աստուած։
Լո՛ւր մեզ, Յիսո՛ւս,
Լո՛ւր զմեր ձայն,
Դու զաղգս օրհնեա՛ և զվարժարանս։
Յիշեա՛, Յիսո՛ւս, և զՀայաստան,
Զոր հարցն մեր եռուն կայան.
Պահեա՛ զնոսա և աչք քո տէր
Եւ ցրուեալքս մի բերցես 'ի սէր
Եւ զհեռ, զքէն մերժեալ 'ի սպառ,
Տո՛ւր համբուրել եղբայր զեղբայր։
Ո՞հ, երբ Յիսո՛ւս
Ե՞րբ լիցի այն
Երբ լուիցես
Մանկանց զձայն։ } 2.

41

'Ի գէմս Սըմբատայ Մամիկոնեան։

Թագ փառաց մերոց, այր ցանկալի,
Գոհար անգին, գանձ գովելի,
Միշտ 'ի հոգիս սէր քո վառի,
Մեծ նախարար Մամիկոնեան
Սուր սայրասուր Սըմբատ իշխան,
Առիւծ արի անպարտելի, Եկ, եկ, սէր իմ։
Ցաշխարհ ճենաց ամպ ահագին
Փայլատակել շանթ հրաձին,
Քաջ Մամիկոն վեհ քո նախկին։
Մեծ նախարար Մամիկոնեան, և այլն։
Հանճար քո սուր տեգ բոցեղէն
Տապասա յերկիր արկ զՍուրէն
Պարսից զօրուն զպեռն անօրէն։
Մեծ նախարար Մամիկոնեան, և այլն.
Միհրան իշխան՝ օձ բընաձին
Քեզ ընկալաւ մահ դառնագին,
Դու արագիլ այս Հայկազն։
Մեծ նախարար Մամիկոնեան, և այլն։
Քաջաղուն հօր դու քաջ ժառանգ.
Որպէս բազէ թեւ քո երագ
Հասեր հարեր դու զՎախտան։
Մեծ նախարար Մամիկոնեան, և այլն։

42

Եղբայր եմք մեք։

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ,
Թէ երգք թռչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ,
Թէ որ զարնեն փափուկ քընար։
Զունին ձայն մի այնքան սիրուն.
Քան զանձկալի եղբայր անուն։
Տուր ինձ քու ձեռքդ եղբայր եմք մեք,
Որ մրբրկաւ էինք զատուած.
Բաղդին ամեն ոխ չարանենդ,
Ի մի համբոյր ցրուին 'ի բաց։
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն։
Երբ ալեւոր Մայր Հայաստան,
Տեսնէ զորդիս իւր քովէ քով.
Սրտին խորունկ վէրքըն դաժան,
Քաղցր արտասուաց բուժին ցօղով։
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն։
Մէկ տեղ լացինք մենք 'ի հընում,
Եկէք դարձեալ յար անբաժան.
Խառնենք զարտասր և ըզխնդում,
Որ բաղմածնունդ ըլլայ մեր ջան։
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն։
Մէկ տեղ հոգնենք մէկ տեղ ցանենք,
Մէկ տեղ թափին մեր քրտինքներ,

Ըզ հունձք բարեաց յերկինս հանենք.
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր։
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն։

Մ. Պէշիկթաշլեան։

43

Պարնախարարաց։

Ի զուր են 'ի զուր, բրռնաւոր,
Ըսպառնալիք քո ամենայն.
Ո՛չ, քո շղթայք չ'են զօրաւոր
Ցընկճել զոգիս մեր Հայկական։
Ըզմարմին, միայն զայս մարմին
Կարես գերել, քեզ 'ի նախատ.
Սակայն ոգիք մեր երկնային՝,
Սիրաք Հայկազանց են միշտ ազատ։
Ազատ են, ազատ մեր լեզուք,
Մաղթել ըզշանթս Արդարութեան
Ի գլուխ ձեր, ո՞վ տրիւնարբուք՝,
Որ աւերէք զՀայաստան։
Ի դրժոխս անկցին թըշնամիք,
Անհետասցին մինչ յաւիտեան.
Եեցցե՛ն Արքայ և Հայրենիք,
Կեցցէ անմահ մեր Հայաստան։

Խորէն Նիկոլոս Գալֆայեան։

44

Ողբ մօր 'ի վաղամեռիկ որդին։

Իմ արեգակն խաւարեցաւ,
Եւ աչերուս լոյսն մթնացաւ.
Ցերեկն ինձ խոր գիշեր դարձաւ,
Եւ աստեղաց լոյսն ծածկեցաւ։
Դարուն խիստ ձրմեռ ինձ դարձաւ
Ամառն սաստիկ ձիւնաբեր եղաւ.
Ինձ եղանակն փոփոխեցաւ
Եւ դառնաշունչ օդն զիս հարաւ։
Քացրըն լեղի եղև դառնացաւ
Եւ կերակուրս ինձ մոխիր դարձաւ.
Մարմինս յոսկերս կըցեալ չորացաւ,
Լեզուս 'ի քիմս իմ ցամքեցաւ։
Այս գեղեցիկ որդեակս որ մեռաւ՝
Շունչըս քաղեաւ, շնթունքս կապեցաւ.
Այս նազելի որդիս որ մեռաւ
Կեանքըս հողոյ հաւասարեցաւ։
Այս սիրամարդ գառնիկս որ մեռաւ՝
Թեւքըս գնաց և ցնորեցաւ
Այս սիրունիկ ձագիկս որ թըռաւ՝
Բերանս լըռեաց, ականջըս խլացաւ։
Այս զուարճալի տունկըս որ չորցաւ՝
Ոտըս բեկաւ, թևըս կոտրեցաւ,
Բոլոր մարմինս փոշիացաւ
Եւ ընդ որդոյս 'ի հող մերձեցաւ։
Արդ գոհութիւն Տեառն որ ըստացաւ
Ընդ սուրբ մանկանցն ըղձա ընկալաւ.
Արդ, Տէր ընկալ զհոգի սըղայիս
Եւ հանգո 'ի լուսեղէն երկինս։

45

Երգ ցաւագին։

Իմ սիրելի զաւակունքս,
Կը թափառին օտար աշխարհ.
Ես ո՞ր դիմեմ, ո՞ր փնտրեմ,
. . . . . :
Եկայք որդեակք իմ,
Ձեր մօրն այցելութեան։
Դարեր անցաւ լուր մը չառի,
Իմ քաջերըս մեռան կորան.
Կուլամ, արիւնըս կը սառի...
Մէկը չ'ունիմ տայ ինձ դարման։
Եկայք որդեակք և այլն։
Արիւնս ցամքած, սիրտս մաշած,
Դէմքս է տխուր մինչ յաւիտեան.
Ի՞ կարօտոյն իմ որդեկաց,
Պիտի իջնեմ սև գերեզման։
Եկայք որդեակք և այլն։
Եւ դու հովիւ թափառական,
Կերդես տխուր 'ի մէջ հովտաց.
Ե՛կ արտասուենք թանկ կորստեան,
Տխուր մահուան մեր որդեկաց։
Եկայք որդեակք և այլն։
Իսկ դու կռունկ իմ Հայրենեաց,
Գնա՛ հեռո՛ւ աչքէս 'ի բաց...
Ցեռին ողջոյնս տար զաւակաց,
Չի կեանքիս մէջ յոյսս է մեռած.
Եկայք որդեակք և այլն.

46

Իմա՛, իմա՛։ ո՞վ մարդ՝ աշխարհս անցանի,
Սրգա՛, զդա՛ կեանք քո թափուր անցանի,
Պատրեցաք և պատրիմք, պատրիչս անցանի,
Ո՜հ, ո՜հ, աշխարհասէր, աշխարհս անցանի,
Վա՜յ, վա՜յ, աշխարհս անցանի,
Գայ, գայ որ դատաստանի,
Աւաղ մեզ յորում մընամք անդատաստանի։
Գիտելով մեղանչեմք, որ չէ արժանի
Խորհեմք, խօսիմք, գործեմք զգործս անարժանի,
Ողորմած՝ ողորմեաց ինձ անարժանիս,
Արա արքայութիւնդ ըզմեզ արժանիս։
Վա՜յ, վա՜յ աշխարս և այլն։
Ենովք քընեաց զկեանս, որ չէ արժանի,
Փոխեաց զունայն ընդ այնմիկ, որ ո՛չ անցանի,
Մաթուսաղայն մանուկ չարեաք տատանի.
Ինն հարիւր վաթսուն ինն ամ իբր մազ հատանի։
Վա՜յ, վա՜յ աշխարս և այլն։

47

Ինձ համար չէ։

Ինձ համար չէ գարնան գալը,
Ինձ համար չէ ծառի ծաղկելը,
Ուրախութեան սրտի գրգիռը,
Ո՛չ մի բերկրանք չ՝են ինձ համար։
Ինձ համար չէ փայլուն լուսնի
Անտառ ու սար լուսաւորելը,
Գարնան վարդի երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինձ համար։

Ինձ համար չէ բարեկամաց
Մէկ տեղ սիրով տօն կատարելը,
Ջատիկ օրուայ ուրախ ասելը
«Քրիստոս յարեաւ» չէ՛ ինձ համար։
Բայց, ինձ համար կուգայ ժամը,
Կ՝երթամ թըշնամեաց պատերազմը,
Եւ մահառիթ սպանիչ գընդակը
Անդ պատրաստած է ինձ համար։

Ք. Տ—Գ. Պապիճանեան։

48

Ի վերայ ունայնութեան աշխարհի։

Ինչ ես ջարդում անձրդ, էյ մարդ, ցաւերով.
Գլխիդ բարդում գանձրդ անթիւ նաւերով.
Արի՛, աղբեր, իմ խրատին դու միտ դիր,
Հոգս ու ջափէդ առ քեզանից ու յետ դիր։
Մերկ ու թերեւ դու էս աշխար եկել ես,
Բեռան տակը մէջքդ ինչու թեքել ես,
Ժանդ արծաթի խաթրին դու մեզ գերել ես
Դեղին ոսկու սիրուն հոգւով մեռել ես։
Դիպայ շորեր, անգին քարեր, գանձ ու գահ,
Երբ ես տեսել, որ մարդուս անեն անմահ,
Նահախ պըտրում ես արծաթի մադանը
Որ արժանի է օխտը կաղ քու քաթանը.
Էստ, էգուց քեզ կու գրկէ պատանքը։
Ու չի փրկիլ մահից ոսկին, ոչ հանքը։

49

Իտալուհիք եւ Իտալացիք։

Ա.

Ինչո՞ւ, ինչո՞ւ Իտալացիք
Չէ թնդում քաղցր երգեհոն,
Ինչո՞ւ քնքուշ Իտալուհիք,
Թողել էք ձեր պիանօն։
Մոռացել են դոքա, ասես
Փափուկ սեռը կանացի.
Սրտում վրէժ, կարիճի պէս
Դիմումեն վրա նը ոսոխի.
Որպէս տան մէջ, նոյնպէս կռւում
Կանգնած են հեզ և հպարտ,
Գնդակներին կուրծք են ուղղում,
Եւ շրթունքից չէ՞ գնում վարդ։

Բ.

Զարմանումէք, ինչ ասումեմ.
Թէ դուք նոցա տեսնէիք
Խաղաղ օրով, երբ քաղցրադէմ
Բռնած կիթառն գեղեցիկ,
Փափուկ մատներն արծաթելար
Նուագարանին դիպչելով,
Պարտէզի մէջ ծաղկադալար, —
Դուք կ՝լսէիք անխռով
Սիրոյ ձայնը, սիրոյ հոգին,
Հիւսած սրտի թելերից.

Սիրեէ գիտէ Իտալուհին,
Զրկուած բոլոր աշխարհից։

Գ.

Շուրջ ճակատով շուշանագեղ
Ծածանվումեն թուխ մազեր,
Սև սաթի պէս յոնքեր շքեղ,
Վառ աստղի ջուխտ աչեր։
Դուք լսեցէք, երբ զրուցումեն,
Ամբողջ դրախտ փափկութեան
Ձեր սրտերը կախարդումեն
Որպէս տաւիղը Էօլեան։
Եւ ոսոխի գորով հոգին
Մի՞թէ չը պէտք է նուաճի,
Եւ յաղթութեան արմաւենին
Դոցա առջև տարածուի։

Դ.

Իտալուհիք, և ձեզ նման
Արևելքում մի անգամ,
Ձեր քոյրերը զինուորեցան
Թշնամու դէմ անզգամ։
Արեան գնով Հայաստանին
Գնեցին նոքա փրկութիւն,
Եւ թաղեցին հողի ծոցին
Անմեղ ծաղկած կուսութիւն.
Մնան նոքա, բայց կ՝մեռնի՞
Նոցա գործի յաղթանակ։
Դուք դէպ՝ ի դաշտ, մեք կենդանի
Ունինք նոցա յիշատակ։

Ե.

Իտալիա, աշխարհ փառքի,
Դու, քո կուրծքը զրահով
Ամրապնդած, յաղթանակի
Կամիս պսակուել դափնիքով,
Մի՞թէ իսպառ պէտք է ճնշվի
Այդ ազգային զօրութիւն,
Եւ առուի պէս արիւնդ թափվի,
Հերոսներիդ սուրբ արիւն:
Մի՞թէ ձեռներն, մի՞թէ սրեր
Քո ոխերիմ թշնամու
Պէտք է քերեն քեզ նոր աւեր:
Եւ ստրկանաս դարձեալ դու:

Զ.

Ինձ ասացէք, ո՞վ ձեզանից,
Որի մէջ մարդու սիրտ կայ,
Չ՝խեղդուելով արտասուքից,
Կարող է մնալ անգգայ,
Տեսանելով այս ողբալի
Սրածութեան աւերած,
Եւ սրբութիւնն Իտալիայի
Նշաւակով անարգած:
Անիծումեմ չար ժամանակ,
Երբ Բուրբօնը գիշատիչ,
Տնկեց այստեղ իւր դրօշակ
Եւ խաբեբայ և մատնիչ:

Է.

Մի կամք, մի շունչ ձեզ օգնական,
Առէք սուսեր—և յառաջ.
Դուք սիրտ ունիք ասպետական,
Ցարձակուեցէք ձախ ու աջ,
Ազնիւ գործին ինքը Աստուած
Ուղարկումէ իւր վահան,
Իտալիա, փառք անմուաց.
Կ՝թնդայ ձայնը փրկութեան:
Նորից, նորից անուշահոտ
Կ՝արձակուի քո մրտենին
Նոր արշալոյս, նոր առաւօտ,
Եւ աւետեաց ձիթենին:

Ը.

Եւ անցածիդ գեղեցկութիւն
Իւր դագաղից կ՝զարթնի,
Միայն աւեր և պղծութիւն
Աւստրիան կընդունի:
Իտալիա, դու զօրաւոր,—
Եւ կեցցեն քո զաւակներ,
Իտալիա, ես հոգեւոր
Բերումեմ քեզ իմ տաղեր.
Եւ Հայի մէջ կայ կենդանի
Ազատութեան արձագանգ
Եւ թող չասեն, որ Հայն չունի
Ո՛չ ազատ կամք և ո՛չ կեանք:

50

Ի՞նչու կուլաս դուն, գառնիկ
«Խիստ ծեծ կերայ ես, մարիկ»
Ո՞վ ծեծեց քեզ, գառնիկ
«Մէկ ծեր կախարդ մը կընիկ։»
Ընտո՞ր ծեծեց քեզ, գառնիկ
«Ծառին տակը իս, մարիկ»։
Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնիկ
«Մէկ պասթօնով մը, մարիկ»
Ո՞ր տեղդ զարկեց քեզ, գառնիկ
«Ուրընտերուս, իմ մարիկ»։
Ինչպէ՞ս լացիր դուն, գառնիկ,
«Մէ՜, մէ՜, մէ՜, մէ՜, իմ մարիկ»։

51

Գ ե ր ե զ մ ա ն ք Հ այ ո ց։

Լուռ և տխուր դաշտեր գեղեցիկ
Քաջ որերոյն ամ՛իններով դեռահեղ,
Ուր սուրբ շիրմաց ծածկէ տեսիլ խաղաղիկ
Զարմենաղան հազար ծաղիկ գունագեղ։
Աւա՜ղ Հայոց արևուն
Աւաղ Հայոց քաջերուն,
Որոց կրեմք մեք արիւն,
Օրհնեալ է Հայք, ձեր անուն։
Ո վեհ նախնեաց, կորիծ եղբարց սուրբ շիրիմ
Ցայն մը տուեք, որ մեր արտասուքը ցամքի
Վանկ մը հէրիք ցաւած սրտիցս, որ բերկրիմք
Մեզ ժրպտեցէք շիջեալ ատ Հայրենի։
Աւա՜ղ Հայոց և այլն։

Բացէք բացէք մառմառոտ սաբոլք սրբակիրք
Ցուցէք քաջացն ոսկերոտիքն Համբուրենք
Եւ Համբուրէ մեր և սգաւոր Հայրենիք
Մեք Հարազատ որդիքս ողբամք ու երգենք։
Աւա՜ղ Հայոց և այլն։
Գետք Հայրենիք քանի՝ ի ձեզ կան ալիք
Եւ դուն, լուսին, քանի կանդեղդ վառ մնայ
Դուն ալ սոխակ քանի ունի դայլայլիկ
Երգեցէք զՀայն, լսեն սերունդք ապագայ։
Աւա՜ղ Հայոց և այլն։

52

Ե ր գ ե ր ե ս ա յ ո ց։

Լուսացաւ, լուսացաւ,
Լուսն է բարին,
Միտն է ծառին,
Հաւն է թառին,
Ծոյլ մարդու քունը տանի
Աշխատաւոր վերկաց բանի.
Երկնքի դռներըն բաց էր,
Ոսկէ աթոռըն դրված էր.
Քրիստոսը վրէն նըստած էր.
Լուսաւորիչը կանգնած էր,
Ոսկէ գրիչն բռնած էր.
Մեծ ու պստիկ գրում էին,
Արդարները խաղում էին
Մեղաւորները լալիս էին։

53

Լսիր մանուկ Հայաստան,
Ծեր մասեաց ողբերգութեան
. . . . . .
. . . . . .
Ո՛հ, ո՛հ, ծերունոյս կ՚սկծանաց։
Ո՞ւր են իմ արգանդածինք,
Որոց ջանբեցին իմ ստինք
Օր օր քնա-երգն մռռացան
Իւրեանց մոր երկունքն ուրացան.
Ո՛հ, ո՛հ, յոյսերս ունայնացան։
Ո՞ւր են իմ բնիկ կրօն ու ծէս
Որով հանդերձեցի ձեզ.
Սուրբ աւանդս անարգեցիք,
Աղանդներով պատուաստեցիք,
Ո՛հ, ո՛հ, մինչ անզոհ ժառանգեցիք։
Եդեմական բառբառով
Վարժեցին ունկդ սիրով
Այմ Կայութեան մթնոլորդն
Պղծումէ քո խորթ կոկորդն.
Ո՛հ, ո՛հ, գուշակում քո կորուստդ։
Բարքն ու վարքն իմ սերիս
Օրինակ էր աշխարհիս,
Այժմ խրթուելակ էք դարձել
Ցիշոցի անունն էք ստացել.
Ո՛հ, ո՛, իմ վախճան մերձեցել։
. . . . . .
. . . . . .
Ընտանի ոսոխ Պարսիկը
Ահա պճնելէ իւր մահիճը.
Ո՛հ, ո՛հ, դրօշակիս արծուիկը։

Մ. Փ.

54

Քուրմերու աղօթք։

Լսիր քաջդ Վահան, մեր դիք այսպէս կամին,
Որ դու շուտով դարձնես Հայերն իրենց դէնից և օրէնքից։
Լսիր Նապուշի կամքն էսպէս է՝ որ մինչև չ՚առնես նորա
հրաման,
Անեղծ անդրդուելի, չես հասանիլ քո մեծ փափագին
Եւ արժան չես լինիլ Հայկական թագին։
Այդ բան միայն կ՚լինի այն ժամանակ,
Երբ Հայաստան կ՚լինի մեր հպատակ
Եւ Յոյներից հեռի մնալով, կ՚լինի մեզ միշտ
Դենակից և միշտ դաշնակից։

Գ. Ա.

55

Խարոյկ սիրոյ սուրբ հայրենեաց
Վառի յիմ սիրտ և 'ի լանջ.
Ի քնար և տաւիղ երգ սիրալիր
Տնել զայս ժամ աւետարեր։
Ո՛վ դուք Հայ երամք, մանկունք Արամեան,
Ուրախ լերուք ընդ իս միաբան,
Փութասցո՛ւք։ օ՛ն փութասցո՛ւք
Զայն տալ յանձուկ 'ի յԱնի
Եւ ասացուք յերիք լայ,
Զի ազգ իւր այժմ յոտին կայ,
Դասք սրբազանք Հոլուապետաց
Տանց Հայոց են պաշտպան քաջ։
Նօքօք խնամք օր և կենաց

Կրօնիս և մեր ազգութեան
Նոքա անքուն պահապան։
Արարատ և Մասիս
Զայնակից մեզ լեցին,
Օրհնութիւն մեր վերայ
Մինչ յեթերս բարձրասցին,
Իմ սիրուն Հայաստան
Ողջ կեցցէ յառաջամ
Ցորդեսցին և փառք իւր
Դարուց 'ի դարս անխափան։

56

Խընդա՝ այսօր, Հայաստան,
Հայրենիք մեր սիրեկան։
Եկայք եղբարք միաբան
Լիցուք զՏեառնէ գոհաբան։
Բարձրացո՛ արդ, Արարատ
Տխուր թախիծ քոյդ գագաթ։
Եկայք, եղբարք, միաբան,
Լիցուք զՏեառնէ գոհաբան։
Փայլեսցի խաչ Քրիստոսի
'Ի լոյս ճակատ Հայ-ազգի։
Եկայք եղբարք միաբան
Լիցուք զՏեառնէ գոհաբան։
Մեծ են քո փառք, Արարիչ,
Մեծ են քո շնորհք, տէր Փրկիչ։
Եկայք, եղբարք, միաբան
Լիցուք զՏեառնէ գոհաբան։
Մեր կեանք, մեր փառք յաւիտեան
Զոհեսցի քեզ, Հայաստան,
Եկայք, աղբարք միաբան,
Լիցուք զՏեառնէ գոհաբան։

57

Խընկին ծառին նըման ես
Պտուղ դու քաղցրահամ ես
Զբարի պըտուղ բերեալ ես
Աստուածածին մեղայ քեզ։
'Ի հողանիւթ զարմին ես
Հարսն 'ի յերկրէ յերկինս ես
Երկրաւորին դու մայր ես
Աստուածածին մեղայ քեզ։
Դու յորդոռատ աղբիւր ես,
Ծարաւելոց սրբումն ես
Մեղաւորաց դու յոյս ես
Աստուածածին մեղայ քեզ։

• Դու անթառամ ծաղիկ ես
Փունջ մանուշակ հոտով ես
Վարդին գունին նըման ես
Աստուածածին մեղայ քեզ։
Դու ոսկեղէն սափոր ես
Մանանայիւ լցեալ ես,
Դու գաւազան ծաղկեալ ես
Աստուածածին մեղայ քեզ։
Դու լուսեղէն կամար ես,
Ոսկիապատ խորան ես
Դու մարգարիտ անգին ես
Աստուածածին մեղայ քեզ։

58

Ցաղկերտ։

Ծագեա՛ հեղեկ արև քաղցրիկ,
Զլոյս պայծառ քո գեղեցիկ։
Զի ճեմեսցէ արքայ հզօր,
Մեր Ցաղկերտ պերճ փառաւոր։
Դու թագաւոր այլ ազգական,
Ըզսա ծաներուք մեր տէր իշխան։
Սմա վայել է փառք և պատիւ,
Սա հաւատոր դից գերազնիւ։
Ծաղկեսցի քո տէր պատուական,
Աթոռ և սուր և գաւազան։

59

Երգ պանդուխտ պատանեկի

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գառնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ր, ինձ ասա,
Թռչում ես այդպէս արագ։
Ա՜խ, թռիր, ծիծեռնակ,
Ծընած տեղս Աշտարակ,
Անդ շենիր քո բունը
Հայրենի կըտուրի տակ
Անդ հեռու ալէոր
Հայը ունիմ սրդաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր։
Երբ տեսնես դու նորա՝
Ինձնից շատ բարև արա,
Ասա, թող նըստի լայ
Իւր անբաղդ որդու վըրայ։

Դու պատմէ՝ թէ ինչպէս
Ասա անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով՝
Կեանքս մաշուել, եղել կէս։
Ինձ համար ցերեկը
Մութ է շըջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չի գալիս։
Ասիր, որ չի բացուած
Թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ՝
Հայրենի հողից զըկած։
Դէ՜հ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թռիր արագ,
Դէպ 'ի Հայոց երկիրը.
Ծնած տեղս—Աշտարակ։

60

Ողբ կտակի աւուր ուրբաթու մեծի, որ 'ի բերանոյ Մօր խաչեցելոյն Յիսուսի, եղանակեալ ձայնիւ ասի։

Պանայք ամենայն՝ քորք իմ սիրեկան,
Եկայք Գողգոթայ՝ դուք ամենեքեան,
Ողբս յօրինեցէք՝ երգք զանազան
Լացէք ողբացէք՝ ձայնիւ միաբան։

Սըգալի Մարիամն՝ այժմ անօգնական,
Կարօտով իմ որդւոյս՝ կամ 'ի յերերման,
Զօրութիւնք հրեշտակք՝ հրեշտակք երկնային,
Պնաք և տերութիւնք՝, և զօրք վերնային,
Տեսէք իմ որդին՝ դիահեղն 'ի փայտին,
Լացէք, ողբացէք՝ ձայնիւ միաբան։
Ով թըռչունք երկնից՝ և ձկունք ծովու,
Լուսին, արեգակն՝ աստղ առաւօտու։
Ահա մթացաւ՝ օրն իմ լուսատու,
Լացէք ողբացէք՝ ձայնիւ միաբան։
Մայրք Լիբանանու և ծառք անտառաց
Նըռնենիք այգեաց՝ և տունկք պարտիզաց,
Ծովք և գետք ամեն՝ և ջուրք աղբերաց
Լացէք ողբացէք՝ ձայնիւ միաբան։
Ով դուք մեղաւորք՝ որդիք ադամայ,
Վասըն ձեր խաչի՝ որդիս Մարիամայ,
Զի բացցէ զփակեալ՝ ըզդուռն Եդեմայ,
Լացէք ողբացէք՝ ձայնիւ միաբան։
Նորածին մանկունք՝ սուրբ աւազանին
Գեղարդեամբ խոցի՝ որդեակս 'ի խաչին
Զուր առաւ բաշխէ ծննդեան ձեզ կրկին,
Լացէք ողբացէք՝ ձայնիւ միաբան։
Ո՛վ սուրբ քահանայք՝ պաշտօնեայք լուսոյ,
Զմաննայ ձեզ բաշխէ՝ 'ի բացեալ կողոյ,
Զմարմին և զարիւն՝ սուրբ ուխտի նորոյ,
Լացէք ողբացէք՝ ձայնիւ միաբան։
Կանայք պատուականք՝ դըստերք Եւայի,
Որք գիտէք ըզգութ՝ ծընողաց սրտի,
Հոգիս մորմոքի՝ սիրտս տոչորի,
Լացէք ողբացէք՝ ձայնիւ միաբան։
Ով սուրբ Սիմէոն՝ գովեալ ծերունի,
Այսօր բոթալից բան քո կատարի,

Արդ էանց յանձն իմ՝ սուրբ Նենգաւորի,
Լացէ՛ք ողբացէ՛ք՝ ձայնիւ միաբան,
Ո՛վ Հայր երկնաւոր՝ խընդրեմ ես 'ի քէն,
Հոգիդ սուրբ ընկալ՝ զաղաչանս յինէն,
Տուր ինձ արտասուս՝ Ծովու ջուրն ամէն,
Լացից ողբացից՝ զվշտացեալ անձն իմ. սրգա
Ո՛վ սուրբ Յովհաննէս՝ Որդւոյս սիրելի
Եւ սուրբ Մարիամ Մագդաղենացի,
Ողբակից լերուք՝ մօրըս Յիսուսի.
Լացէ՛ք ողբացէ՛ք՝ ձայնիւ միաբան։
Խոր կսկիծ մահու՝ իբր ալեաց Ծովու,
Առիս խաղացին՝ սաստկագին հովու,
Գոռան և գոչեն՝ որպէս առիւծու,
Լացէ՛ք ողբացէ՛ք՝ ձայնիւ միաբան։
'Ի սուրբ Բեթղեհէմ՝ անբանից յայրին,
Ըզփառք 'ի բարձունս՝ հրեշտակք երգէին,
Արդ բարձաւ այսօր։ փառքս ամենեին,
Լացէ՛ք ողբացէ՛ք՝ ձայնիւ միաբան։
Լալով ողբալով՝ սիրտս ոչ հանդարտի
Խոցոտեալ հոգիս՝ ոչ մխիթարի,
Այսօր զմահ խնդրեմ՝ 'ի ձեռս չանկանի
Լացէ՛ք ողբացէ՛ք՝ ձայնիւ միաբան,
Ով իմ փարելի՝ որդեակ սիրելի,
Մի թողուր այսպէս՝ զմայր քո խըղճալի,
Ընդ քեզ մեռանիլս՝ է՝ ինձ կրանի,
Լացէ՛ք ողբացէ՛ք՝ ձայնիւ միաբան։

Պէտրոս Վարդապետ Ղափանցի։

61

Երգ Յաղթական։ (1)

Կեցցէ Շապուհ, կեցցէ արքայ,
Փառաց նա միշտ օրեր տեսնայ։
Կեցցէ օրուան այս յաղթութեամբ
Եւ երբ արև փայլի անամբ։
Իւր թշնամիք փախչին հապճեպ
Իբրև ըզմէգ լուսոյն հանդէպ.
Եւ տարածի իւր զօրութիւն
Յոր վայր վազեն նշոյլք արփւոյն։
Քեզի նման, Մաղդեղանց քաջ,
Չեղաւ հզօր ոչ ոք յառաջ,
Եւ ոչ յետոյ իսկ ոչ երբէք
Լիցի յԱրիս և ոչ ուրեք։
Կեցցէ Շապուհ, կեցցէ արքայ,
Փառաց նա միշտ օրեր տեսնայ,
Եւ տիրասէր զօրս իւր՝ ըզՊարս՝
Իւր հետ տանի փառաց 'ի փառս։

62 (2)

Կեցցես դու Շապուհ, կեցցես արքայ,
Քեզ փառք յաղթութեան ամեն տեղ միշտ կալ.
Քեզնից դողում էր ողջ Յունաստանը
Ոտի տակ ընկաւ այսօր Քուշանը։

---

1) Այս երգը առնուած է Աբշակ Բ. ողբերգութենից։

2) Այս երգը վերաբերվում է Պարսից Շապուհ արքայ. և և երգուեցաւ մոգերի բերանով «Վարդան Մամիկոնեան պիեսայի մէջ»

Դէ՛, քաջ Պարս եղբարք կեցցէ՛, կանչեցէ՛ք.
Մեր վեհ մազդ եղանց փառքն աւելցրէ՛ք։
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ
Շապուհ և իւր զօրութիւն։
Անմահ Որմիզդը քեզ մեզ պարգևեց,
Քո ահից սուրը նա ինքը սրրեց
Փշրել Թշնամեաց ջնջել օտար դէն,
Աշխարհս բոլոր առնել Պարսկադէն.
Դու քո քաջութեամբ անմահ դից հաւասար
Տուիր մեզ խրախոյս յաղթել քաջարար։
Կեցցէ՛. . . . և այլն։
Եւ Տէրն Արշակունեաց Անոյշ բերդի մէջ
Պէտք է փչանայ դառն վշտի մէջ.
Ցաղթութեան դռները անմահից շնորհօք
Բվում են առջևդ վեհապանծ փառօք.
Դէ՛, քաջ զօրու եղբարք կեցցէ՛ կանչեցէ՛ք,
Մեր արքայն Շապուհ դիւցազանց ասէ՛ք։
Կեցցէ՛. . . . և այլն։

63

Կ'ցցես քաջ Սամել, փառք ու պարծանք Հայ անուան.
Կեցցես քաջ Սամել, դու ես մի միայն
Փրկիչ տան Հայկազեան։
Դու որ ուրացող խարդախ քո հօրից
Վրէժ առնել պատրաստ ես,
Քեզ միայն՝ քեզ միայն փառք Հայկազունք կտամք,
Կեցցես քաջ Սամել, փառք ու պարծանք Հայ անուան.
Այդ մեծ քաջութիւն վեհ անունդ կ'պսակէ,
Այդ ջերմ հաւատը քեզ կ'պահպանէ
Եւ կ'զօրացնէ դիանք իսկապէս
Թէ քաջ Հայի պէս նահատակ կ'դառնաս.

Ուստի քեզ միայն փառք Հայկազունքս կտանք,
Քեզ դարէդար յաւիտեան։
Կեցցես քաջ Սամել. . . և այլն,
Ահա երկնքից մեր սուրբ հարքը նայում են
Եւ լոյս պսակը գլխիդ բռնելով՝
Քեզ քաջալերում են, դու որ քաջ Սամել
Սուրը ձեռքդ առած, քեզ պաշտպան ես կեցած,
Մենք էլ քեզ միայն փառք եռանդեամբք կտանք,
Քեզ դարէդար յաւիտեան։
Կեցցես քաջ Սամել. . . և այլն։
Արիդ մեր քաջ Սամել Մամիկոնեան քաջ տոհմի,
Ցարուցո՛ մեր մէջ քեզ նման քաջ ոգի,
Որ մեզ էլ ազատի։
Դու որ ուրացող դաւաճան Վահանի
Վրէժ առնել պատրաստ ես,
Քեզ միայն, քեզ միայն փառք Հայկազունք պիտի
Տան դարէդար յաւիտեան։
Կեցցես քաջ Սամել. . . և այլն.

64

Կռունկ։

Կռունկ գարնան աւետիս, էլ չես տեսնի ծաղկած,
Երամդ ո՞ր աշխարհից, Հայաստանի դաշտերը,
Լուր չունիս պանդխտիս, եւ անտառներով ծածկած
Մեր հայրենի գաւառից։ Նրա սրբազան սարերը։
Ո՛վ գաղթական թռչուն Դէ՜, թռի՛ր, կռունկ շրջիր
Էսօր տխուր ես կռկռում, Երկրիս ամեն անկիւնը,
Դիտեմ փոփոխութիւնդ, Եւ Հայոց ազգին յիշիր
Ճանապարհդ ես նշմարում։ Իւրեանց նախնեաց արիւնը։

Մ. Փ.

65

Կրռունկ։

Կրռունկ՝ ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կրռունկ մեր աշխարհէն խաբրիկ (1) մի չունիս
Մի վազեր երամիդ՝ շուտով կը հասնիս,
Կրռունկ՝ մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս։

Թողել եմ ու եկել իմ մլքերս (2) ու այգիս
Քանի որ՞ խ կանեմ, կու քաղի հոգիս
Կրռունկ՝ պահ մի կացիր, ձէնիկդ 'ի հոգիս
Կրռունկ՝ մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս։

Քեզ խաբար հարցնողին չես տանիր դալաբ (3)
Զենիկդ անուշ կուգայ քան զՋրի դօլաբ (4)
Կրռունկ՝ Բազդադ իՋնուս, կամ թէ ի Հալաբ
Կրռունկ՝ մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս։

Սրտերնիս կամեցաւ, ելանք գընացանք
Այս սուտ աստընուորիս (5) դարդերն իմացանք
Աղուհացկեր մարդկանց կարօտ մընացանք,
Կրռունկ՝ մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս։

Աստընուորիս բաներն կամաց կամաց է
Միթէ Աստուած լսէ, դրռնակն բացցէ
Ղարիբին սիրտն է սուգ, աչերն 'ի լաց է
Կրռունկ՝ մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս։

Աստուած քեզնէ խնդրեմ մուրվէթ (6) ու քէրեմ (7)
Ղարիբին սիրտն է խոց, Ջիգերն (8) է վէրեմ (9)
Խրմած Ջուրն է լեղի, ու հացը հարամ (10)
Կրռունկ՝ մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս։

---

1) Լուր, համբաւ. 2) ինչք, կայանք, կալուածք. 3) պատասխան։ 4) խոխոչումն 5) աշխար, եւ և տեղացի. туземецъ, 6) ողորմութիւն 7) յաջողութիւն, շնորհ. 8) լեարդ 9) բարակ ցաւ, ծիւրախտ. 10) պիղծ։

Ո՛չ զլուր օրն գիտեմ, ո՛չ զկիրակին
Զարկած է զիս շամփուրն, բրռնած կրակին
Այրիլս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ,
Կրռունկ՝ մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս։

Բազդադու կուգաս, կերթաս 'ի սէհրաթ (1)
Թղթիկ մի գրեմ, տամ քեզ ամանաթ,
Աստուած թող վկայ լինի քո վրադ,
Տարեալ հասուսցես զայդ իմ սիրելեաց։

Գրեր եմ մէջ թղթիս, թէ հոս (2) մընացի
Օրիկ մի օրեր զաչերս չի բացի,
Սիրելիք՝ ձեզանէն կարօտ մընացի,
Կրռունկ՝ մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս։

Աշունն է մոտեցեր, գնալու ես թէդբիր (3)
Երամներ ես ժողվել հաղարներ ու բիւր,
Ինձ պատասխան չի տուիր, ելար գնացիր,
Կրռունկ՝ մեր աշխարհէն գնա՛ հեռացիր։

66

Հայաստան,
Դու օրօրոց մեր մանկութեան,
Պէտք է տան
Քեզ կեանք որդիք Արարատեան.
Վասն զի մեր գոյութեամբն
Եւ վայելած բարութեամբն
Միմիայն քեզ ենք երախտապարտ,
Քո անուամբ ենք մենք միայն հպարտ։
Այն որդոյն
Աշխարհ անաթեմայ կարդայ,
Ով որ թոյն
Հայրենեաց վարձատրութիւն տայ
Փոխարէն այն անոյշ կաթին,

---

1) սահմանագլուխ 2) աստ, այս տեղ. 3) պատրաստ։

Որով մնոյց Նրան մայրենի ստինդ,
Ցուսով թէ երբ վանդ սպառնայ
Ծնողաց խնամք չմոռանաս։

Բովանդակ

Սիրոյ կեդրոն հայրենիքն է,

Նպատակ

Մարդկային կոչման նա ինքն է.
Առանց Նորան կեանքն մահ է,
Փառքն ու մամոնայն ունայն է.
Զուր խնդրեմ արդ երջանկութիւն
Միայն ազգիս սէրն է հաստատուն։

Մ. Փ.

67

Առ Հայաստան։

Հայաստան երկիր դրախտավայր,
Դու մարդկայնոյ ցեղիս օրրան,
Դու և բնիկ իմ հայրենիք,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։
Ի վեհ անունդ սիրտ իմ, ո՛հ, յոյժ
Ոգևորի 'ի նոր խրախոյս,
Եւ անձկայրեաց 'ի քեզ յուսամ,
Ի քեզ՝ 'ի քեզ յոյս իմ միայն
Հայաստան, Հայաստան, Հայաստան։
Հայաստան անուն փարելի,
Ի քեզ հանգիստ Նոյեան տապան
Եգիտ և քեզ ապրեցաւ Նոյ,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։
Գեղք քաջառաջք ադենաբուղն,
Զհողդ բարի առնեն յուռթի,

Քեզ ապրիմ ես, քեզ միշտ ցնծամ,
Քեզ, քեզ պանծամ փառք իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։
Հայաստան ծնող դիւցազանց
Եւ հրաշալեաց հանդիսարան
Քո վեփիւռին քաղցր է շնչիւն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։
Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,
Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան,
Զոր շնչեցին և զօրացան,
Զքեզ յիշեմ, զքեզ սիրեմ,
Զքեզ, զքեզ, սէր իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Ց—Մեղրա Վանանդեցի

68

Անձուկք Հայրենեաց.

Հայաստա՜ն, քաղցր իմ Հայաստան,
Ոգիքս յանունդ հալեցան.
Մինչև ցերբ ես 'ի քէն պանդուխտ,
Ոգւոյս իմ երբ լըցցի ուխտ։
Արդեօք աչքս անձկալից
Երբեմն ըզքեզ տեսցէ՞ն,
Աչքս այս արտասուալից
Երբէք դադարեսցէ՞ն.
Շուրթն իմ 'ի հողդ կենսաւոր
Տացէ՞ զհամբոյրն ուխտաւոր.
Արդեօք գլուխս վշտակոծ
Հանգիցէ՞ քոյդ 'ի ծոց։

Հայաստա՜ն սէր իմ Հայաստան,
Ոգիքս 'ի տէնչդ հալեցան.
Մինչև ցերբ ես 'ի քէն պանդուխտ,
Սըրտիս իմ երբ լըցցի ուխտ։

Բ.

Հայաստա՜ն, իմ պերճ Հայաստան,
Ո՞վ երկիր նուիրական,
Հընոց կենաց և օրորան,
Հեշտարար երկնից խորան.
Ի քո սուրբ հովանիս
Ո՞ընչգեհ տանէր զիս.
Ո՞ 'ի ստուերսդ Երազմոյն
Ըզնախնեացս հեղոյէ քուն,
Անմահութեանց վեհարուն,
Ծրծել անդ զոդ և զաւուն,
Եւ զաստեացըս վըշտաց
Գտանել կատարած։
Հայաստա՜ն, քաղցր իմ Հայաստան,
Ոգիքս յանուանդ հալեցան,
Մինչև ցերբ ես 'ի քէն պանդուխտ,
Սըրտիս իմ երբ լըցցի ուխտ։

Գ.

Հայաստա՜ն, սիրուն Հայաստան,
Ցուսոյ խարիսխ մարդկութեան.
Դու ու իմ լոկ ակընկալեաց վայր,
Ցոր աչք իմ ձըգին յամայր,
Ո՞ զմին գէթ տայր լընուլ
Զիմն ըղձից 'ի քեզ հոյլ։

Ո՞ փափաքս յարատև,
Իբր ըզսիւք մի թեթև,
Հասուցանէր մինչ առ քեզ,
Եւ զայս ողջոյնս սըրտակէզ,
Եւ զհառաչս ոգւոյս բիւր
Զոր ընդ բլուր տայր 'ի սփիւռ։
Հայաստա՜ն, քաղցր իմ Հայաստա՜ն,
Ոգիքս 'ի տենչդ հալեցան,
Մինչև ցերբ ես 'ի քէն պանդուխտ,
Սըրտիս իմ երբ լըցցի ուխտ։

Դ

Հայաստա՜ն, իմ վեհ Հայաստան,
Երանութեան օթարան.
Ո՞ տայր զաւուրս իմ ցաւալիս
Փոխել ո՞հ յերանելիս,
Ոչ փառօք փայլելով՝
Վաղանցուկ ոչ ոսկւով,
Այլ 'ի զքեզ տեսանել
Սուրբ ըզսարսըդ ողջունել։
Զաւերակօք քով փարել
Եւ զհարցս անդուստ ձայն լսել.
Եւ զնոցին հետս անանց
Համբուրել գետնամած։
Հայաստա՜ն, քաղցր իմ Հայաստան,
Ոգիքս յանուանդ հալեցան.
Մինչև ցերբ ես 'ի քէն պանդուխտ,
Սըրտիս իմ երբ լըցցի ուխտ։

Ե

Հայաստա՜ն, անոյշ Հայաստան,
Դու զոգիս լընուս համայն.
Դու խրախոյս, փառք իմ և վիշտ,
Ցոր սիրտ իմ թռանի միշտ.
Ես պատիւ, զենչ և զերկ,
Խանդ, ըզշունչ և սին զերգ՝
Ի բագինդ արգաղիր
Կախեցից լիաձիր.
Մի լոկ խնդրեալ փոխարէն՝
Զի զքեզ աչք իմ տեսցեն.
Զի մի՞ ցմահ անձկալեց
Զերդ սերկեան գոչեցից.
Հայաստա՜ն, իմ քաղցր Հայաստան
Ոգիքս յանուն հալեցան.
Մինվև ցերբ ես 'ի քէն պանդուխտ,
Սըրտիս իմ ՝ի՞րբ լցցի ուխտ։

Խորէն Եպիսկոպոս Գալֆայեան։

69

Ե ր գ 'ի դ է մ ս ք ա ջ ի ն Վ ա ր դ ա ն ա յ.

Հայրենասէր Արամեանք,
Զի՞ կայք 'ի քուն ընկղմեալ,
Բացէք զաչս ձեր հոգեկան,
Տեսէք զօրս ձեր ժամանեալ։
Ո՞ւր են փառք, ձիր ձեր նախնեաց,
Ուր են պատիւ վեհ առանց,

Որք զաշխարհ Հայաստանեայց
Լցին փառօք դիւցազանց։
Ցառաջ մատիք ինձ լսել,
Շառաւիղք քաջին Հայկայ,
Ես կամիմ ձեզ արդ պատմել
Զազգասէր գործ Վարդանայ։
Որ զգլուխ իւր կենօք չափ
Եդ 'ի փրկանս իւր ազգի,
Եւ կնքեալ զայն իւր արեամբ՝
Եղև փրկիչ հայրենի։
Սուրբ խաչ փայլեաց Փրկչական,
Հոգւոց ազգիս Հայկական.
Պահեա զմեզ Տէր Աստուած։
Եւ աշխարհիս փորձանաց։
Լուսաւորեաց Հայաստան,
Լուսով խաչ ին փրկչական.
Հնչեա աշխարհ ամենայն
Զփող մեծի աւետման։
Բարձրացիր արդ Արարատ,
Պճնեալ ծաղկօք գեղոյդ գագաթ.
Ազգիս Հայոց խնդութեան,
Լեր դու վկայ յաւիտեան։

70

Պ ա ր ե ր դ։

Հայկազունք պար բռնենք
Թև 'ի թև օ՜ն երնենք
Ցնծութեան ձայներով
Եւ զուարթ սրտերով։
Զի ահա 'ի նոր բաղդ

Զայն կուտայ երկինք արդ
Ի սուրբ կոչում ուխտեմք հաստատ
Անձնուէր գոլ պատրաստ։

Ս. Պ. Պ. Փափազեանց։

71

Յաւուր գործադրութեան ազգային
Սահմանադրութեան 24 Գոստոսի
1860 (Կ. Պոլիս)։

Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր
Ի՞նչ կը յապաղէք ելնել 'ի հանդէս.
Ի՞նչ կը յապաղէք.—սիրտ կը դիմանա՞ց,
Սիրտ որ ազգասէր ըլլալ կը ցանկայ,
Տեսնել հայրենեաց այսքան բիւր աղէտ,
Եւ դու անտարբեր ցարդ մնալ յաւէտ։
Խեռ ատելութեան և չոր նախանձու,
Սերմերն ու ոգին հեռու մղենք հեռու,
Սիրտ սրտի կապուած, թև թևի տուած,
Հայրենեաց սիրոյ ասպարեզն բացուած.
Օն վազենք յառաջ 'ի սուրբ խաչն վստահ,
Օն երթանք յառաջ, և անձնանուէր՝
Հայրենեաց օգտին ըլլանք ուխտանուէր։
Հա՛յ մի՛ վհատիր, սիրտ ա՛ռ և սիրտ տո՛ւր,
Տկարք զօրանան, քաջք խրախուսին,
Վատերը բացուին, վատերը զատուին,
Ճշմարիտ Հայերն յառաջ թող անցնին.
Խաչ, սէրն են նշան ճշմարիտ Հայուն
Խաչ, սէրն են պարծանք ճշմարիտ Հայուն.

Սիրոյ դրօշակներ
Թող արդ պարզուին,

Հաշտութեան ձայներ
Թող արդ հնչուին.
Հայն մէկ սիրտ եղաւ
Սիրով միացաւ,
Սուտ են որ ըսեն
«Հայք ղերար կատեն»։
Սուրբ Արարատեան Մայր Աթոռոյն գիրկը,
Եկէ՛ք Հայկազունք, եկէ՛ք միանանք.
Եւ սփոփենք մեր վշտացած մօր սիրտը,
Օրհնելով Տերը, որ մեզ պարգևեց
Մեր ազգին կապն ու հոգին,
Ազգային Սահմանադրութիւն
—Յաւերժասցի արդիւնաւէտ։

Ս. Պ. Պ. Փափազեանց։

72

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դէպ 'ի քեզ, հոգւովս անդադար։
Բայց աւա՜ղ այս բանտում փակուած եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կռվում և ես։
Հանապազ տանջուեցայ քո ճակատագրով
Սրտում շղթաների ձայներ կրելով։
Ա՛խ քո ազատութիւնը փոթորկի մէջ է,
Եւ վառ արշալուսով քո օր կարմրում է։
Չ'գիտեմ թէ ինչպէս կռիւն ընթանում
Ես չունիմ մի լուր, բայց լուրն է թռչում
Քաջ ընկերներով հեշտ է ինձ կռուել,
Եւ սուրբ գործքի համար քաղցր է մեռանել։
Ստանում են միշտ համբաւ սպանութեան ահեղ
Թափվում ազգ արիւն, բայց ես չեմ այնտեղ
Կ'փշռեմ իմ շղթայս, կ'ելնեմ այս բանտից

Սրբել դառն արտասուք քո սեգ աչերից
Բայց աւաղ այս բանտում փակուած եմ անաեռ,
Գատերազմի դաշտում չեմ կռվում և ես։
Թող այստեղ չարչարուեմ անծանօթ կապուած,
Միայն քեզ, Հայրենիք, տեսնեմ աղատուած։

73

Վայր ընկնող աստղեր։

(Թարգմանութիւն)

«Հայրիկ, ասաց դուստրը հօրը,
Կապոյտ երկնքի վերայ
Ո՞րքան աստղեր փայլումեն վառ,
Ասես համար, թիւ չըկայ.
Ասումեն որ ամենայն մարդ
Աստղիկ ունի երկնքուս,
Ճշմարիտ է ասա՛, հայրիկ,
Ի՞մը ո՞ր տեղ է փայլում։
—Այո՛, դստրիկ, այդ աստղերը
Ունին հաշիւ ու համար,
Եւ մեզանից իւրաքանչիւր
Մի աստղ ունի իւր համար։
«Հայրիկ, տես տես, աստղը թռաւ
Ցեռքից պայծառ գիծ թողեց.
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց»։
—Ո՛վ իմ դստրիկ, հանգիստ կացիր,
Դա մեծատան մի աստղ էր,
Որ իւր օրում, իւր կեանքումը
Թիղճ ասածը չը գիտէր.

Աղքատները նորա դռնից
Գիշեր ցերեկ հալածված.
Մի մարդ չկար նորան ծանօթ,
Որ չը լինէր վշտացած։
«Հայրիկ, տես տես, աստղը թռաւ,
Ցեռքից պայծառ գիծ թողեց.
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց»։
—Ով իմ զաւակ, մի՛ վրդովվիր,
Դա աղջկայ մի աստղ էր,
Որ իւր հօր ու մօր խօսքը
Իւր կեանքումը յարգած չէր.
Նա փախել էր իւրեանց տնից....
Մուր էր քսել տան վերայ....
Իւր ծնողքը լացուցել էր,
Ինչքը վատնել անխնայ։
«Հայրիկ, դարձեալ թռաւ մի աստղ,
Վայր ընկաւ նա երկնքից.
Հայրիկ, ո՞վի աստղն էր արդեօք,
Որ զըրկուեցաւ իւր տեղից»։
—Ո՛հ դստրիկս, հանգիստ կացիր,
Կեղծաւորի դա աստղ էր,
Որ իւր օրում ուղիղ մի խօսք
Մարդու երբէք ասած չէր.
Փարիսական իւր ձևերով
Աշխարհք խաբեց, զարմացուց,
Այդ պատճառով Աստուած նորա
Աստղի լոյսը խաւարցուց։
«Հայրիկ, տես տես, մի աստղ թռաւ,
Եւ գիծ անգամ չը թողեց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց»։

—Ո՛հ, սիրական, խաղաղ մնա,
Բռնակալի դա ասող էր,
Որ աշխարհը իւրեան գերի
Ծնած օրից կարծել էր.
Շատ հալածանք, շատ նեղութիւն
Պատճառեց նա իւր կեանքում.
Շատ տուն քանդեց, շատ մարդ զրկեց,
Գութ չունեցաւ իւր սրտում։
«Ապա այն ինչ ասող է, հայրիկ,
Որ այնպէս պարզ վառվում է,
Նորա մաքուր պայծառ լոյսը
Զօրս կողմը բակ բռնել է»։
—Ո՛հ իմ դստրիկ, աղօթք արա
Դա ծերունու մի ասող է,
Որ իւր կեանքում ոչինչ մարդու
Ոչինչ վնաս տուած չէ.
Այն լուսաւոր բակն է նորա
Առաքինի գործքերը.
Աղօթք արա, որ երկարվին
Նորա կեանքի թելերը։
Շատ օր անցաւ, երկնքիցը
Մի այլ վառ ասող պակասեց.
Ո՞վ ասողիկն էր որ ընկաւ,
Բան հարցանող չերևեց։
Մինչ դեռ լուսինը արծաթափայլ
Լոյս էր տալիս գիշերին,
Խորհրդաւոր մինչ տիրել էր
Անվրդով խոր լռութիւն,
Մի սրտաթափ, մաղերն արձակ
Վազեց աղջիկ սգաւոր
Դէպ ՝ի գեղի գերեզմանը,
Ծունկ չոքեց մի շիրմի մօտ։

«Հայրիկ, ասողիկդ չէ փայլում,
Դու յաւիտեան քնեցիր.
Առ ինձ քո մօտ, քո ծոց, քո գիրկ,
Ինչու անտէր թողեցիր։
Իմ ասողիկն ասա նոյնպէս,
Որ չը փայլի՝ հերիք է.
Այս աշխարհը ինձ առանց քեզ,
Մութն ու խաւար մի բանտ է։
Մի մարդ չըկար, որ նկատէր,
Որ հետևեալ գիշերին
Պակասեցաւ երկնքիցը
Մի պայծառ ասող խնդագին։
Երրորդ օրը շատ սգաւորք
Փորեցին մի գերեզման,
Ուր թաղուեցաւ իւր հօր մօտին
Մարմինը խեղճ աղջկան։
«Հայրիկ, տես տես, ասողը թռաւ,
Ցեռքից պայծառ գիծ թողեց,
Ասողիկն ընկաւ երկնքիցը
Միւս անգամ այլ չերևեց . . . . »։

Կոմս Էմմանուէլ (Մ. Նալբանդեանց)։

74

Երգ որսոյ (1)

Ա՛պա՜ քաջաղունք, Զինուցդ ՝ի ձայնէն.
Հայոց զաւակունք, Շեշտակի նետեր
Առէք աղեղունք Թափեցէք քաջեր
Ի մահ երագունք։ Ցերէս անվեհեր։
Անտառք ըսպասեն Վազեմք ուր վըտանգ,
Կենդանիք սարսեն Այս մեր ըղբօսանք.

(1) Այս երգը առնուած է Արշակ Բ. ողբերգութենից։

Որսոց արշաւանք,
Մարտին 'ի հանդէս՝
Մարտից են կրթանք։
Զարնեմք մահազգեաց
Երթամք գունդ 'ի գունդ,
Զոսոխս հայրենեաց.
Ցաղեղ և մրկունդ,
Եւ յաղթանակաւ
Ցուսով սրբտաթունդ.
Լրցեալ աւարաւ,
Շամիրեմք կենդանիս,
Դառնամք քաջարշաւ.
Իբր ըղթշնամիս
Եւ 'ի մեր դափնիք
Ի մեր հայրենիս։
Ծափ տան սիրելիք,
Զի օր մ՝ալ նոյնպէս
Պանծան հայրենիք։

75

Ի՞Մ ԵՐԳԸ։

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատած են ինձանից.
Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մենակ բլսած ծաղկի նման դաշտումը։
Կամաց կամաց տարիները անցնում են,
Մեղ նորոգած դարուն, ամառ դարձնում են.
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,
Ինձ երեկը կրկնվում է միշտ այսօր.
Ասպարիզս նեղ է ճամբան ու փշոտ,
Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ,
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի։
«Դա ասում են, իր կեանքումը դարդ չունի»։
—Ես դարդ ունիմ, դարդըս մեծ է ու պէսպէս,
Բայց չ'են տեսնում ձեր աչերը կարճատես։
Երբ ես մտայ անհիւրընկալ այս աշխարհ,
Քանի բոպէ բաղդը ժըպտաց ինձ պայծառ.
Հա, ասացի, դարձել է իմ անիւը,
Լրացել է իմ վատ բաղդի չար թիւը։»

Ցանկարծ՝ փչեց անտուրժելի հիւսիսին,
Թառամեցուց վարդ մանուշակ մայիսին.
Այսպէս չորցուց իմ նաղելի հասակը,
Իմ անողորմ, անագորոյն վիճակը։
Ա՜խ, մտեցիր օրհասական օր մահուան,
Բէր քու հետդ սև հող ու նեղ գերեզման.
Թող սառ լինի իմ նոր տանը յատակը,
Ծանրը քար է վրէս ծածկած վերմակը։
Բայց, ա՜խ, երբ որ կ'անցնի ամիս ու տարի,
Կըմամռոտի գերեզմանը այն քարի,
Հետքը անգամ չի մնալու իմ խաչին.
Իմ անունը իմ յիշատակ—կըկորչին.
Բայց կ'ուզէի թողնել այս տեղ մի արձան,
Որ դարէ դար մընար, ամուր անկործան . . .
Ես երգեցի երգ ողբրուն ու անուշ,
Իմ քնարի ձայնն էր մեղմիկ ու քընքուշ.
Մի՞թէ այնքան անգութ կ'լինի Լետա գետ,
Որ անունս անգամ կ'անէ նա անհետ։

Ի. Տ—Գ. Պապկանեան։

76

Վարդան Մամիկոնեանի երգը։

Հիմի էլ լռենք, եղբարք, հիմի էլ,
Երբ մեր թըշնամին իր սուրն է դըրել,
Իր օրհասական սուրը, մեր կըրծին,
Ականջ չի դընում մեր լաց ու կոծին,
Ասացէք, եղբարք Հայեր, ի՞նչ անենք,
Հիմի էլ լռենք։
Հիմի էլ լռենք, երբ մեր թըշնամին
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,

Զընջեց աշխարքից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,
Խլեց մեզանից թագ, և՛ խօսք, և՛ դէնք,
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Խլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին,
Մշակի ձեռքիցն էլ խոփը (1) խլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կռեց,
Վա՜յ մեզ, շղթայով կապած դերի ենք.
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Սոսկալի դէնքը բռնած մեր գլխին,
Կուլ տալ է տալիս արտասունք առատ,
Աղէխարշ բողոք վարուց ապիրատ.
Մեր գլուխը լալու Եփրատ ուր պրտռենք,
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Լիրբ գոռոզութեամբ լցրած իր հոգին.
Արդարութեանն ձայնն հանած իր սրտից
Արտաքսում է մեզ մեր բընիկ երկրից,
Պանդուխտ հալածեա՜լ, եղբարք, ուր գիմենք.
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին,
Անգութ մեր բերած ծանր զոհերին,
Իւր լերբ, նրզուած ձեռքը կարկառեց,
Ազգութեանս վերջին կապը պատռեց.
Հայի կորուստը մոռ է, ի՞նչ անենք.
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին,
Արհամարհելով մեր փառքն ազգային,

(1) Արօրի կամ մաՀի երկաթ։

Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գայլազգեստ գառին մեղ գըլուխ դրբաւ,
Սուրբ խորան չունինք, արդ ուր աղօթենք,
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք՝ մարդիկ ինչ կ'ասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,
Չի՞ն ասիլ որ Հայք արժանի էին,
Այդ սարբկական անարդ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,
Մինչև երբ լռենք։

Թող լռէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք
Ու այնպէս լռենք։

Ռ. Տ—Գ. Պապիանեան։

77

Մամիկոնեան Մեծ Վահանի պատասխանը։

Հիմի էլ խօսենք, եղբարք, հիմի՞ էլ
Երբ ընտանեկան երկպառակութեամբ
Ուրիշ բան չունինք, բայց իրար դաւել,
Եւ սարսափելի ազգուրացութեամբ
Մեր նախնեաց ուխտը ոտքով կոխել ենք.
Հիմի էլ խօսենք։

Հիմի էլ խօսենք, երբ քաջն Վարդան,
Վաթսուն հազարից, հազարով մնաց,
Մինչ մնացել էր Պարսից լոկ մատեան

Գունդը, մեր վաթսուն հազարի դիմաց
Երբ մեր վատութեամբ՝ ոչՋ կորուսել ենք.
Հիմի էՀ խօսենք։
Հիմի էՀ խօսենք, երբ օտարից շատ
Մենք ենք մեր ազգի արիւնը խմում,
Մոխրատնով լցինք Դուին, Արտաշատ
Ծխի մէՋ կորաւ խաչն եկեղեցուն,
Երբ այս ամենը մենք կատարել ենք.
Հիմի էՀ խօսենք,
Հիմի էՀ խօսենք, երբ հրապարակում
Պարսիկը առակ արել է Հային.
«Եթէ Ասորու նման աշխարհում
Ձկայ մի վատ ազգ, բայց, քան Ասորին,
ԷՀ վատ է Հայը» մենք այս տանում ենք։
Հիմէ էՀ խօսենք։
Հիմի էՀ խօսենք, երբ իշխանութիւն
Ծախում է անարգ հացկատակներին,
Մինչ ստրուկ մարդիկ նստան մեր գլխին
Եւ մեՀ կարծումեն հող իրենց ոտքի,
Ու մենք մեՀ կոխող ոտքը լիզումենք.
Հիմի էՀ խօսենք։
Հիմի էՀ խօսենք, երբ Լուսաւորչի
Բնիկ ժառանգի թեւերը կտրած,
Անարգ Պարսիկը՝ այս ու այն թեմի՝
Կարգումէ տեսուչ ըստ իւր չար մտաց
Եւ մենք դեռ՝ «կեցցէ արին» գոռումենք.
Հիմի էՀ խօսինք։
Հիմի էՀ խօսենք, երբ ձեռք ենք տալիս,
Երբ ողջունումենք մենք այդ չքերին,
Որ դրան շուն են, և մեՀ տեսնելիս՝
Շուտ դիմակները դնում երեսին
Այդպիսիներին դարձեալ պատվումենք.
Հիմի էՀ խօսենք։

Էլ մեր երեսին ճնճղ մի կաթիլ
Ամօթի սուրբ ջուր, որ բերան բանանք.
Ո՛չ թէ չենք ուզում հողէց հող կորչել,
Թշնամու արիւնով մեր թրին ջուր տանք,
Ազգ, եկեղեցի փրկենք աղատենք.
Ապա թէ խօսենք։

78

Երգ Մեծին Վարդանայ։

Հուր բարկութեան համայն Հայոց.
Բորբոքեալ զերդ բաց բարկաձաթ.
Ու կայծակացոյս բիւր բիւրոց,
Զարթոյց 'ի մարտ սարս սառնապատ։
Զի՞ վարանիմք արդ ատ եղբարք,
Դատարկ ձեռամբ, դատարկ ձեռամբ.
Ձեռամբ յարտազ տղմուտ ծն դրոյդ, 'ի դրոյդ
Ի դրոյդ թռչիմք սլանամք, սլանամք, սլանամք։
Հուր զէն 'ի ձեռին
Եւ վրէժ ահագին
Սպասեն և կան
Քաջք Արշակունեան
Եւ յոր երկինք հանդիսատես
Զաշխոյժ նախնեաց հեղու 'ի մեզ
Հապա՞ն քաջք քաջաց
Ընդ Սասան կուրծս
Մխեսցուք մկունս
Ուժգին 'ի հարուած։
Ռ. Սէֆէքճեան։

79

Երգ Ծննդեան Քրիստոսի։

Ղամպարափայլ սրբոյ տօնիս, աւետիս,
'Ի միտս առցուք զլսորհուրդ բանիս, աւետիս,
Քանզի յերկնից Տէրն խոնարհի, աւետիս,
'Ի կոյս մօրէ այս օր ծնանի, աւետիս,
'Ի Բեթղեհէմ քաղաք Դաւթի, աւետիս,
'Ի գերեզմանէն Եւայի, աւետիս։
Աստղն մի պայծառ յերկինս յայտնի, աւետիս,
Առաջնորդէ մոգուս դասի, աւետիս,
Առ որ եկին երեք արքայ, աւետիս,
Ոսկի կընդրուկ բերին ընծայ, աւետիս,
Տեսին զՅիսուս մանուկ տղայ, աւետիս,
Բազմեալ 'ի գիրկս Մարիամայ, աւետիս։
Զուարթունք երկնից պար առնէին, աւետիս,
Զփառք 'ի բարձունս երգէին, աւետիս,
Զի զոր տեսին վըկայեցին, աւետիս,
Թէ բանն Աստուած էառ մարմին, աւետիս,
Հովիւքն 'ի յայրն ընթանային, աւետիս,
Վասըն հրաշէցն զարմանային, աւետիս։
Այսօր Եւայ ընդ Ադամայն, աւետիս,
Բերկրեալ հոգւով յոյժ զուարճանան, աւետիս,
Որք խայտային և ցնծային, աւետիս,
Յարժամ տեսին ըզծնունդ փրկչին, աւետիս,
Բանն Նսայեայ աստ կատարի, աւետիս,
Թէ կոյս յղացեալ ծընցի որդի, աւետիս։
Բամք նախահարց հոգւով խնդան, աւետիս,
Սուրբ մարգարէքն ուրախանան, աւետիս,
Զոր ասացին կատարեցաւ, աւետիս,

Աստուած յերկնից յերկիր իջաւ, աւետիս,
Որ երարձ ըզխըռովութիւն, աւետիս,
Եւ հաստատեաց զխաղաղութիւն, աւետիս։
Ուրախացեալ մեք ցնծասցուք, աւետիս,
Եւ ծնիցելոյն ըզփառս տացուք, աւետիս,
Խորոց սրտիւ մեղայ տացուք, աւետիս,
Սրբեալ հոգւով արտասուեսցուք, աւետիս,
Զաղօթս և զնուէրս ընծայեսցուք, աւետիս,
Եւ ընդ մոգուցն երկիրպագցուք, աւետիս։
Իւծեալ պիտակ մեղօք գերիս, աւետիս,
Ղաղար և եթ երգօղ տաղիս, աւետիս,
Մաքրեա զխորհուրդ, զմիտս և զհոգին, աւետիս,
Արդարութեամբ կեալ 'ի մարմին, աւետիս,
Որք 'ի սրբոյ տօնիս արքնին, աւետիս,
Ցայսոց չարաց զերծեալ փրկին, աւետիս։

Ղազար Վարդապետ Ճահկեցի։

80

Արաքսի արտասունքը։

Մայր—Արաքսի ափերով
Քայլամոլոր գընում եմ,
Հին հին դարուց յիշատակ,
Ալեաց մէջը պըտրում եմ։

Բայց նոքա միշտ յեղյեղուկ,
Պղտոր ջրով եզերքին.
Դարիւ դարիւ խփելով,
Փախչում էին լալագին։

Արաքս՝ ինչո՞ւ ձկանց հետ,
Պար չես բռնում մանկական.
Դու դեռ ծովը չը հասած,
Սըգաւոր ես ինձ նըման։

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սեգ հպարտ աչերից.
Ինչո՞ւ արագ փախչում ես,
Այդ հարազատ ափերից։

Մի՛ պղտորիլ յատակդ,
Հանդարտ հոսէ խայտալով.
Մանկութիւնը քու կարճ է.
Շուտ կը հասնիս դէպ 'ի ծով։

Վարդի թփեր թող բուսնին
Քու հիւրընկալ ափի մօտ.
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ։

Մշտադալար ուռիներ,
Սառ ծոցի մէջ քու ջրին.
Ճրկուն ոստրն ու տերև,
Թող թաց անեն տապ օրին:

Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թող գան համարձակ.
Գառն ու ուլը քու վճիտ,
Ջուրը մտնեն միշտ արձակ:

Մէջքը ուրցուց Արաքսը,
Փըրփուր հանեց իւր տակից,
Ամպի նման գոռալով՝
Էսպէս խօսեց յատակից:

«Թիզ՞ ես, անմի՞տ պատանի,
Նիրհըս ինչո՞ւ դարձուր.
Վըրդովում ես, նորոգում,
Իմ ցաւերը բիւրաւոր:

«Սիրելի մահից հետ,
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտքից ց՝գլուխ պճնուի
Իւր զարդերով թանկագին:

Որի՞ համար զարդարուիմ,
Որի՞ աչքը հրապուրեմ:
Շատերն՝ ինձ են ատելի,
Շատերին՝ ես օտար եմ:

«Կար ժամանակ, որ ես-էլ,
Շըքեղազարդ հարսի պէս
Հաղար ու բիւր պըշրանքով
Փախչում էի ափերէս:

«Ցատակըս պարզ ու վըճիտ,
Կոհակներըս ոլորուն.
Լուսաբերը մինչև այդ
Ջրիս միջին էր լողում:

«Ի՞նչըս մնաց այն օրից,
Ո՞ր ջրամօտ գեղերըս,
Ո՞ր բերկրալի տեղերըս:

«Ցուրքը ջրի ամեն օր,
Իր սուրբ Ծոցէն Արարատ.
Մայրախընամ ինձ սընունդ,
Պարգևում է լեռատ:»

«Բայց ես այն սուրբ ջրերով,
Սուրբ-Ակոբի աղբիւրին
Պիտի ցողեմ արտօրա՞յք
Իմ ատելի օտարին»:

«Կամ կենսատու իմ ջրով,
Ափերիս մօտ կըկըզած.
Իւր նամա՞զը կատարէ
Թուրք կամ Պարսիկը հոտած»

«Մինչ իմ որդիք— ո՞վ գիտէ—
Ծառաւ, նօթի, անտէրունչ.
Օտար աշխարհ յածում են,
Թոյլ ոտքերով կիսաշունչ:»

«Հեռու հեռու քըշեցին,
Բնիկ ազգը իմ Հայկեան.
Նորա տեղը ինձ տուին,
Ապգ անկրօն. մոլեկան:»

«Դոցա համար զարդարեմ
Իմ հիւրընկալ ափերը.
Եւ կամ՝ դոցա հրապուրեմ,
Ճրպռոտ, պլշած աչերը:»
«Քանի որ իմ զաւակունք,
Այսպէս կու մնան պանդուխտ՝
Ինձ միշտ սրգաւոր կը տեսնէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ:»-
Էլ չի խօսեց Արաքսը,
Ցորձանք տուեց ահագին,
Ողակ օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին:

Ռ. Տ—Գ. Պոպիանէան

81

Մայրենի լեզու:

(Գերմաներէնից)

Մայրենի՛ լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգու համար՝
Առաջին դու խօսք, ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած,
Մանկական լեզուիս թոթովանք տըկար,
Հընչումես իմ մէջ դու միշտ անդադար:

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,
Այդ ինչպէս քաղցրը հընչումես ինձ դու.
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ,
Ասես թէ ահա գանչումէին ինձ
Պապեր ու հայրեր խոր գերեզմանից:

Հընչի՛ր դու հընչի՛ր այժմ և յաւիտեան
Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Արի՛, բարձրացի՛ր հնութեան փոշուց,
Դու իմ հայ լեզու, մոռացած վաղուց.
Ըզգեցի՛ր նոր կեանք սուրբ գրուածներով,
Որ ամենայն սիրտ վառվի քո սիրով:

Ամեն տեղ փչում Աստուծոյ շունչը,
Սուրբ է այն միւս, այլ ձև ու ոճը,
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
Իմ սրտի սէրը յայտնել արժան էր,
Իմ երանական մտածութիւնքը—
Ապա կը խօսեմ իմ մօրս խօսքը։

Ս. Նազարեանց։

82

Երկու քոյր։

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,
Հոգւով դեռ արի, գլխով ալևոր.
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,
Ոսկի ասացին գիտունք այն դարը։
Ունէր նա երկու մատաղհաս աղջիկ,
Մինը խիստ տգեղ, միւսը գեղեցիկ
Մի օր տգեղը ասաց միւսին.
«Երթանք ծովն ափ, քոյրիկ միասին»։
Սիրունը գնաց առաջից տրտում
Տըգեղը ետնից ոխ պահած սրտում.
Հազիւ թէ ծովի ափին էր հասած,
Իր սիրուն քրոջ գլորեց նա ցած։
Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.
«Քոյրիկ իմ, քոյրիկ փրկէ ինձ մահից.
Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
Ա՛ռ, էն քեզ լինի, պարգևէ ինձ կեանք»...
—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ։—
«Քոյրիկ թէ այդ էլ քեզ չէ բաւական
Կուտամ քեզ ոսկի պսակ պատուական».

—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դուն բնաւ մի՛ յուսալ։
«Քոյրիկ մի թողնիլ դու ինձ անտէրունչ
Քեզ սիրուն փեսայ կուտամ անտրտունջ»։
Տգեղն սիրտը դարձել էր ժէռ քար
Քըրոջ խնդիրքը թողեց անկատար։
Ձկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,
Բռնեց մարմինը սիրուն աղջկան.
Ջրից հանեց դրեց ափի մօտ
Շատ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ։
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան,
Լացեց ու առաւ, դրեց ուսի վրան
Տարաւ իրան տուն այդ անգին գիւտը,
Զորացուց նորա մարմնու դիպ հիւթը։
Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկերից
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից.
Երբոր ամեն բան պատրաստեց կարգին,
Գնաց արքունիք տաւիղը ձեռքին.
Երբ մըտաւ դահլիճ շքեղ զարդարած,
Տեսաւ տըգեղին փեսի մօտ կանգնած.
Բացեց բերանը, լարերին խփեց,
Հիւրերի առջև քաղցրաձայն երգեց
«Հնչէ՛ իմ տաւիղ, հնչէ՛ համարձակ
Հարազատ քոյրս խլեց իմ պսակ
Վ.սէ՛ իմ ծնող, լսէ՛ սիրական
Հարազատ քոյրս խլեց իմ փեսան.
Լսէ՛ ժողովուրդ, լսէ՛ անխըռով
Հարազատ քոյրս գլորեց ինձ ծով»
Միւս օր դահլիճք խարոյկ շինեցին
Մահապարտ քըրոջ մէջը գլորեցին։
Հուրը պլպլաց, աղջիկը կանչեց,
Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց։

Ռ. Տ—Գ. Պապիկոնեան։

83

Մարշ։

Մեզ նոր արև, ծագէ, բացուի լոյս բոցավառ
Մեզ առաջնորդ սուրբ սուրբ երէցներ ունինք խաչ ու խաչուար.

Զօրավար քաջ Վարդան, դիմենք յառաջ 'ի սուր,
Դիմե՛նք բանալ կենաց շաւիղ Հայեր մեր առաջներ
Հարսանեաց հարսանեաց սուրբ հանդիսարան
Մեզ նոր ուխտ կանչումէ լենիլ փրկիչ կրօնի, փրկիչ Հայրենեաց.

Հայոց ծաղկունք թոռմին հայերք թէ պղծուին
Մեզնից ցող խնդոց բուրմունք կամին
Զենքեր պատենից մէջ եռ գան կրակ դարձած
Պարսից արեամբ հանգուցանել խնդրել զբազուկս քաջաց.
Նժոյգներ խրխնջան զերկիր փորեն տոփեն
Դիմենք յԱրտազ դաշտ, դիմենք յԱւարայր
Մեր հայրենիք, մեր ազգութիւն, Կրօն
Գալ ժողովուիլ 'ի սուրբ տօն, հրաւիրել զամեն Հայս։

84

Որս Արշակայ։

Մեծափառ արքայն մեր
Ի յորս կամի ելանել,
Լարեցէք աղեղներ,
Որպէս մեզ է վայել։
Տիրասէր իշխաններ,
Պատրաստ եղէք քաջօրէն,
Արքայիս դառն ցաւեր
Թող անդարձ ցրուեն։
Հնչեցէ՛ք փողերը
Անուշաձայն երգերով.
Որս Արշակ այն օրն
Կամի ելանել։

Ցռուի ձիոց մեր հնչին
'Ի դաշտն Պարսկաստանի
Ցուցանել Հայկազանց
Եռանդն ու հոգին։
Ցառաջ դուք ընթացէ՛ք,
Ո՛վ քաջազունք տալով տոփ.
Արձագանք ձեր ոտից
Հնչեսցին տոռ՝փ, տոռ՝փ։

85

Իտալացի աղջկայ երգ 1859 թուականից։

«Մեր հայրենիք, թշուառ, սնտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Իւր որդիքը արդ գանչումէ,
Հանել իւր վրէժ քէն ու ոխ»։
Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդոց սուրբ արիւնով
Պիտի լենի աղտոտած»։
«Ահա, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի»։
«Նայիր նորան երեք գունով,
Նուիրական մեր նշան,
Թող փողփողի թշնամու դէմ,
Թող կործանվի Աւսարիան»։
«Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իւր եղբօրը,
Զանց չարեցի քո սիրուն»։
«Ահա իմ գործ, ահա դրօշ,
Նուտ ձի հեծիր քաջի պէս,
Գնա փրկել մեր հայրենիք,
Պատերազմի վառ հանդէս»։

«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ՝ մեռնէ.
Բայց երանի՜, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհվի»։
«Գնա՛, եղբայր, Աստուած քեզ յոյս,
Ազգի սէրը քաջալեր,
Գնա՛, թէև չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր»։
«Գնա՛ մեռիր դու քաջի պէս,
Թող չտեսնէ թշնամին
Քո թիկունքը, թող նա չասէ
Թէ վատ է Իտալացին»։
«Ասա՛, տուեց օրիորդը
Իւր եղբօրը մի դրօշ,
Մետաքսից էր, ազնիւ գործած
Ուր երեք գոյն կան որոշ։
Եղբայրն առաւ և ողջունեց
Իւր սիրական քնքուշ քոյր,
Առաւ զէնքը, սուր, հրացան,
Հեծաւ իւր ձին սևաթոյր։
—Քուրիկ,—գանչեց քաջ պատանին,—
Մնաս բարեաւ, սիրական,
Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակ Իտալեան։
Նա սուրբ է ինձ, երբ մկրտված
Արտասուքով ու կնքած,
Դու յանձնեցիր ինձ լիշատակ,
Հայրենիքի նուիրված։
Թէ մեռանիմ, դու մի՛ սգար
Իմացիր որ տարեցի
Դէպ՝ ի մահու տրքայութիւն,
Իմ հետ քանի թշնամի։

Ասաց՝ վազեց դէպ՝ ի հանդէս
Աւստրիացոց յանդիման,
Իւր արիւնով գնել յաւէժ,
Ազատութիւն Իտալեան։
Ո՛հ, իմ սիրտը կտրատվումէ
Տեսանելով այսպէս սէր,
Դէպ՝ ի թշուառ մի հայրենիք
Որ ոտնակոխ եղած էր։
Ո՛հ... արտասուք ինձ խեղդումեն,
Այլ չեմ կարող բան խօսել.
Չէ... թշուառ չէ Իտալեան,
Եթե կանայք այսպէս են։

86

Մեր նախնիքը ազգի համար իրանց կեանքը զոհեցին,
Թշնամեաց դէմ միշտ անվերկիւղ զէնքը ձեռին դիմեցին.
Նրանց առաջնորդ ազգի սէրն էր
Նրանց խրախոյսը մեր հաւատն էր
Սրանով նրանք քաջ անունը իրաւամբ ժառանգեցին։

87

Ա ր ա մ։

Մեր քաջ Հայոց զօրութիւն,
Վերկացէ՛ք, ասաց Արամ։ } երկիցս.
Առաջեաւ բացէ՛ք նշան
Դնանք Հայ լեզուն տարածենք.
Ո՜հ Արամ, Արամ, Արամ։
Նիւքար սարուկ Սորին
Բարբառ գոչէ առաջին

Գլուխն յաշտարակ մեխեցէք
Որ յերկնից սորուի Հայերէն.
Ո՜հ Արամ, Արամ, Արամ։
Ցորդան տուք, զօրք օ՜ն յորդան
Դէպ 'ի կողմն Արևմտեան,
Պայաճիս Քաղեայ Տիտան,
Դիք զի տապաստ 'ի դամբան.
Ո՜հ Արամ, Արամ, Արամ։
Ցորդան տուք, օ՜ն, զօրք յորդան
Տեառք լայնալեծ աղեղան,
Քընքուշախօս ամբոխին
Տալ ըզլեզու Հայկական.
Ո՜հ Արամ, Արամ, Արամ։
Ով չգիտէ Հայերէն
Ոչ ճանաչէ նա զօրէն
Որ բանիւ Հայոց արար
Այս մեծ աշխարհ մեզ համար,
Ո՜հ Արամ, Արամ, Արամ։
'Ի ծովէ մինչև 'ի ծով
Թող խօսին Հայ բառերով.
Ներհակողն Նիզակով.
Ցուցէք ո՜հ ասաց Արամ.
Ո՜հ Արամ, Արամ, Արամ։

88

Առ աստղ Հայրենեաց։

Մեր սիրուն Հայրենեաց,
Բևեռը շողշողող
Մեր սիրուն քաջազանց
Ամիւններն ցՃարդ հսկող

Պայծառ աստղ որ այժմիկ
Լոյս կընես թափանցիկ,
Մինչև Հայ պանդխտոց
Սրտերուն կուտաս բոց.
Ո՛վ քաղցր ցոյս դու մխիթար
Տարագիր Հայոցս թշուառ
Ի՞նչ աշխոյժ նոր 'ի նոր
Ի՞նչ աշխոյժ ոգևոր
Կարծարծես սրտերնուս
Ո՛վ Հայոց միակ ցոյս։
Զէ, ալ չվհատինք բնաւ ով Հայեր
Մեզ քաջալեր են ցոյս և ժամանակ
Զէ, ալ չվհատենք բնաւ ո՛վ Հայեր,
Ժամանակին հետ յառաջ ընթանանք
Ցառաջ ընթանանք, հոն ուր հրաւէր.
Հրաւէր կարդան մեզ նախահայց աստղեր։
Թէ Հայկայ որդիք ենք
Թէ Հայկայ արիւն կրենք
Ամենքս ալ 'ի սուրբ սէր
Հայրենեաց 'ի նուէր,
Քաջ որդիք պանծալի
Ըլլամք միշտ արժանի։

89

Երգ Հայրենի։

Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն
Ցետ դառնաշունչ ձմեռայնոյն
Եւ 'ի գաւառն իմ Հայրենի
Գեղածիծաղ դառնայ գարուն։
Մինչ բոյր 'ի բոյր փթթին ծաղկունք
Եւ ճռուողեն նորեկ ծիծառունք

'Ի քեզ ես դարձ առնեմ յայնժամ
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան։
Ոչ Հելուետեան ինձ դաշտավայրք
Եւ կամ զուարթ մարգագետինք
Ոչ քան զքեզ չքնաղագեղ
Իտալական պայծառ երկինք։
Հեռի 'ի քէն պանդուխտ գոլով
Քոյովդ յար տապիմ անձկով
'Ի խանձարուրդ իմոց կենաց
Ո՛վ Հայաստան, առնեմ քեզ դարձ։
Գայցեն աւուրք ուր մանկութեան
Անկցի տիոցս իմ գեղ դալար
Եւ յինէն խոյս տայցեն վայելք
Կենաց թեթեւ 'ի գարշապար։
Ուր հէք մուսայս մատն 'ի յերեր
Մոռանայցէ երգել զսէր,
Զնինջ 'ի ծոցդ առնեմ յայնժամ
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան։

Մէրոիէ Պեշիէ-Լեշէոն։

90

Յ ո վ հ ա ն ն ա յ ի հ ա ր ա ժ ա ր վ ե լ ը։

(Գերմ. Շիլլերից)

Մնաք բարով լերինք, սիրուն արօտներ,
Հանգիստ, խաղաղ հովիտք, մնաք դուք բարով,
Այլ շրջելու չեն ձեր վերայ իմ մեղմ քայլեր
Յովհաննայից առէք դուք այժմ վերջին բարով։
Իմ ջրած դաշտեր, իմ անկած ծառեր,
Աճեցէք զուարթ, շատ ու շատ օրեր.

Մնաք բարով ծմակներ և ցուրտ աղբիւրներ,
Այլ չեմ լսելու հովտիս արձագանգ, քեզ ով անոյշ ձայն,
Որ այնքան յաճախ երգերս կրկնէր.
Երթայ Յովհաննան, անդարձ յաւիտեան։

Տեղեր, ուր միշտ ես խնդացի հանդարտ,
Զեզնից յաւիտեան այժմ հեռանումեմ.
Ցիր եղիք գառներ, սար, ձոր, անապատ,
Անտէր, անհովիւ ես ձեզ թողնումեմ.
Այժմ մի ուրիշ հօտ պիտի հովվեմ,
Վտանգի դաշտում արիւնով ջրած.
Այսպէս մի Հոգի հրաման է տուած
Ունայն ցանկութեամբ ես բորբոքված չեմ։

Նա որ բոցավառ թփի մէջ իջեց
Առ Մովսէս երբեմն Քորեբի ծայրին,
Դէպ 'ի Փարաւոն դիմել հրամայեց,
Որ երբեմն համեստ պատանի Դաւթին,
Հովվին իւր համար զինուոր նա ընտրեց,
Որ միշտ ողորմած էր հովիւներին,
Նա ինձ հրամայեց ծառիս ճիւղերից.
«Գնա, ասելով, վկայիր դու ինձ։

«Մարմնդ պատիր ծանր զրահով,
Պողպատով ծածկիր քո փափուկ կուրծքդ.
Մարդկային սէրը ունայն իղձերով,
Զվառէ երբէք անարատ սիրտդ.
Երբէք չծաղկի ճակատդ պսակով,
Սիրուն երեխայ չխաղայ գոգումդ.
Բայց կը պսակեմ փառքով յաղթութեան
Բոլոր կանանց մէջ ես քեզ յաւիտեան.

«Երբ կը վհատվին քաջերն ևս կռվում,
Երբ մօտ է ահա Ֆրանսիայի վերջը,
Ցառաջ կը տանես դրօշակը դաշտում,
Եւ ինչպէս այն ժիր, քաջ հնձարարը,

Գետին կը ձգես հպարտ յաղթողին,
Կը քանդես նորա բաղդի անիւը,
Կ՝աղատես Ֆրանսիան, դու այլ և Ռէյմսը,
Երկինքը Նշան էր ինձ խոստացել,
Ահա ուղարկեց այս սաղաւարտը.
Երկնային ուժով, նրան շօշափելուց,
Վառումէ սիրտս նորա երկաթը,
Դէպ 'ի պատերազմ քարշումէ նա ինձ,
Մղումէ բռնի դէպ կռուի դաշտը.
Կռուի գոռոցը լսումեմ արդէն,
Եւ թմբուկները սաստիկ հնչումեն:

Բաղեհ-դարբեանց:

91

Անուրջք:

Յամավերջն Ապրիլի զպատուհանս բացի,
Զձիւնաթաղ դաշտորայս ծաղկազարդ տեսի:
Արտասուք եռանդունք զայտս իմ այրեցին
Զիմ անդարձ գերութիւն յուշ իմ, ո՜հ ածին:
Լեղուապէս դառնացան վերք վըհատ հոգւոյս,
Թըմրեցան զգայարանքս հատան ելք շնչոյս:
Ափսո՜ ինձ, ասացի, բիւր անգամ յայն օր,
Շատ անէծս թափեցի 'ի ծննդեանս վատ օր:
Մաշեցայ, թոշնեցայ, մըտի խոր 'ի քուն,
Զչար կսկիծ հէք գերւոյս արկ 'ի ծով անհուն:
Դըշխոյն մեծ անմահից ել ինձ յայց տեսլեամբ
Որպէս թէ 'ի փոսոյ զիս ելոյծ ձեռամբ:
Աներկմիտ մօտ մատեայ 'ի համբոյր ոտին,
Գերբնապէս սքանչելեօք զիս ազատողին:
Թամք ձայնեղ թրռչնակաց ճոխ դայլայլեցին,
Կենսածին Տիրամօրն փառս վերերգեցին:

Երանի՜ ասացէք կարմրացայտ վարդիս,
Քաջ աղերս տուք նմա 'ի գով պաշտպանիս:
Աւա՜ղ իմ նեղասիրտ կարճամիտ լալոյս,
Զիմ՞դ զիս կարծեցի կորուսեալ անյոյս:
Նախատինք իմ նեղչաց նեռք եղեն ինքեանց,
Նանրացան դաւք նոցա, անկան յիւրեանց ցանց:
Ցաւազնեալք՝ օրհնեցէք զանուն Տեառն յաւէտ,
Դի՛ք զյոյս ձեր յօգնութիւն Խաչին փրկաւէտ:

Ց. Վ. Աշմդարեան:

92

Սուգ դստեր Ցեփթայեայ:

Յառաւօտ կենաց կուսանիս,
Ցարշալոյս աւուրց անմեղիս,
Խորշակ մահուան տարածի,
Ա՛խ, լոյս աչացս պակասի:
Այ՞ ծանօթ լերինք և հովիտք,
Այ՞ պայծառ դաշտք ծաղկափթիթք,
Ահա՛ 'ի ձենջ հրաժարիմ,
Փութով երթայց 'ի շերիմ:
Լացէ՛ք զիս, ով անտառք, բլուրք,
Լացէ՛ք հարք, մարք, եղբարք և քորք,
Զիս փոյթ զենցէ սուր ուխտին,
Ցօդուածքս այժմէն սարսափին:
Արիւն իմ է գին փրկութեան,
Դիւցամոլ տանն Իսրայէլեան,
Մեղապարտքն ազատ մընան
Անմեղ կեանք իմ չըքանան:
Մայր իմ, ա՜խ դու մի՛ շատ ցաւիր,
Հօրս ուխտին բնաւ մի՛ ներհակիր,

ՅԱստուած բարձրեալն զայոյս քո դիր
Բեր զզարդս իմ, մի՛ տրխրիր։
Դուք դստերք տոհմին Յակովբեան,
Շուրջ զինև կայէք միաբան,
Երգեցէք զերգս հարսնութեան,
Միշտ տօնեցէք զիմ վախճան։
Աստուած մեծ՝ փառք Իսրայելի,
Ընկալ զիս իբր զհոտ կընդրկի,
Իբրև զզոհն Աբելի,
Իբրև զորդին Սարրայի։
Բաբունեաց վրճիռ համառձայն
Ո՛չ կարաց տալ մահուս խարան.
Էր դու, Տէր իմ, օգնական,
Դու հեշտ արա իմ վախճան։
Եղկելոյս ծընողք ցաւալի
Մընասցեն առանց զաւակի՝
Տէր, տուր նոցա սիրտ արի,
Մեղմեա զմորմոք դառըն վշտի։
Աւանիկ՝ երամք հրեշտակաց
Առ երկնիւք կան թեւատարած,
Զիս հրաւիրեն յԱդին բաց,
Զիս կոչեն հարսն Հօր փառաց։
Նըկարէն քօղն իմ հարսնութեան
Փոխարկի 'ի պատան թաղման,
Իմ պճնաղարդ հարսնաբան
Եղև այս խոր գերեզման։
Ցուցէք ինձ զիմ մահու գործի,
Զսուրբ զէն զոհիս արժանի։
Արդ՝ ողջ լերուք, սիրելիք,
Օրհնեալ է Տէր, պիղծ են դիք։

Յ. Վ. Աղամալեան։

93

Ողբ մօր 'ի վաղամեռիկ որդին։

Նայիմ ողբամ ծնող աղայիս,
Վայ և եղուկ ասեմ իմ անձինս.
Արդ զի՞նչ լինիմ եղուկ եղկելիս,
Տեսի մեռեալ զսկեհատ զորդիս։
Զանուշահոտ վարդն իմոյ գրկիս
Խլցին առին, թալկացաւ հոգիս.
Զիմ գեղեցիկ ոսկի աղաւնիս
Թռուցին յինէն, խոցեցաւ սրտիկս։
Զքաղցրանուագ սիրուն տատրակիկս
Մահու բազան էզարկ, խոցեաց զիս.
Զիմ քաղցրաձայն արտուտիկ ձագիկս
Առեալ թռան 'ի վեր յերկինս։
Զիմ ծաղկալի կանաչ նրռնենիս.
Կարկըտահար արին դէմ աչիս.
Զիմ կարմրացեալ խնձորն 'ի ծառիս
Զանուշահոտն 'ի մէջ տերևիս։
Զիմ գեղեցիկ ծաղկեալ նշենիս
Թօթափեցին, անպտուղ արին զիս,
Հարեալ ձրգեցին 'ի վերայ երկրի,
Կոխան արին հողոյ տապանին։
Ո՜հ, զի՞նչ լինիմ եղուկ եղկելիս,
Շատ տրտմութիւնք պատեցին զիս.
Արդ, Տէր, ընկալ զհոգի տրղայիս
Եւ հանգո 'ի լուսեղէն երկինս։

94

Ինչեա դու քաղցրիկ իմ հրճուանք և սէր,
Ո՞վ իմ անգրանիկ երկնատուր նբւէր.
Դու իմ երազոց կէտ, յոյս դու բիւրից,
Քոյին մօր պարծանք և բերող օրհնից։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։
Քև ես սիգապանծ 'ի կանայս Հայոց,
Ոչ ևս յանծաղիկ յիմ շիկնիմ 'ի ծոց.
Ոչ ևս ընդ այլ մարդ բաստ բերեմ նախանձ,
Ո՞վ այնչափ լալով զոր գրտի ես, դանձ։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։
Դու յանձուկ այդ քո և քընքոյշ իրան
Զամէն պարփակես իղձս իմ, ով Միհրան,
Աստեղք են մանունք աչք քո լուսահուր,
Որ յիմ անդ գիշերս ծագեցին տրխուր։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։
Ո՞հ, զայս մայրենի համբոյր սրտաղեղ
Զոր քաղել ուսայ նախ յայտ քո անմեղ,
Ե՞րբ և ճակատուդ տամ սարդինաղարդ՝
Ոռոգեալ յիմ ցող ըզփառաց սաղարթ։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։
Ե՞րբ սիրունդ ըզգլուխ խոնջ 'ի քիրտն և հոգ
Արկցես զերդ այսօր 'ի մօրդ հանգչել դոգ.
Եւ որպէս զերկին երազէ սերկեան՝
Անդ հոգիդ առցէ ճախր 'ի Հայաստան։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։

Տես ըզնա առ քեզ աչօք խընդամիտ
Եւ զգաղցրագոյնն արձակել ժըմիտ,
Տես զոր 'ի նորուն սըրբես յայտից շեթ
Ակունք ցոլան վառ 'ի հիւս պըսակիդ։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։
Պըսակ . . . . ո՛հ այս զայն ըզձամ պըսակ,
Զոր Հայրենեաց ձեռք բոլորեն, որդեա՜կ.
Զի այն է և եթ ծաղիկ անթառամ,
Որ 'ի Հայրենեաց ծաղկի բուրաստան։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։
Ո՞հ, թէ պըսպըղունդ այդ քո սեաւ աչեր
Ունին շլանալ 'ի լոյս մըթաբեր,
Թէ յօտար յառել գեղ փառս և երկին՝
Եւ ոչ անձկանօք 'ի դրունս եդեմին։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։
Թէ շրթունք քո թերթք վարդից քաղցրաշունչ՝
Նախկին արձակեալ, որդեակ իմ, մրմունջ՝
Ոչ ըզհետ անուան երկրի երկնից Հօր
Ըզհայաստանի հընչէ՝ զմօր քոյդ մօր։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։
Թէ սիրտ քո վիժակ՝ որ ննջէ վըճիտ՝
Զարթուցեալ երբեմն 'ի խաղ թինդ առ թինդ,
Ցայլ բարախէ սէր, ոչ Հայաստանեայց,
Եւ ոչ վազէ ընդոստ յանուն Հայրենեաց։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։
Թէ դաստք քո փափկիկ և ողորկ բազկիկք
Կան անշարժ, յօրժամ կարդան Հայրենիք.

Կամ ըզսուրբ պարտուցդ ըզսպաս սիրալիր
Թըշնամեաց նորա մատուցանեն ժիր։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։
Ո՞հ, լաւ ևս զի քո և իմ բիրք փակին՝
Զի մի՛ այն հասցեն աւուրք խաւարին,
Լա՜ւ ևս զի մի այդ շըրթունք անարժան
Մի բընաւ ուսցին զանուն մայրական։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։
Լաւ ևս զի զայժմուս սիրտ այդ ապերախտ
Զորասցի զերդ վարդ որդնաքանց՝ ի դրախտ,
Եւ բեկտին ձեռինք որ զերդ ծաղկափունջ
Մանեակ զուլամբ մօրս կախին քաղցրաշունչ։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։
Եւ այս սիրտ որ կեանս ետ և ուր զգլուխ
Արդ դընես սիրոյն ըմպել զանոյշ ուխ,
Լա՜ւ ևս զի աստեն սառնուցու յանկարծ՝
Քան ջեռուցանել զեժ մի Հայրենեաց։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։
Բայց քո զի՞ երկնից ամբոխի երաց...
Փախեաւ քո ժըպիտ... Ո՞հ յարտօսր իմ լա՜ս...
Ոչ, Միհրան, մի՛ ևս այլ այս բանք տըխուր.
Ահա լըռէ մայրըդ՝ ի սոյն քաղցր համբոյր։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։
Ընկջեա դու՛ք քաղցրիկ իմ խընծիլ և սէր,
Ով իմ անդրանիկ երկնատուր նըւէր.
Իմ երազոց կէտ, լեցիս և յուսոյն,
Պարծանք և օրհնիք դու մօրդ՝ ի նոր բոյն։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։

Բայց և Հայրենեաց յաւելլիս դու փառս,
Եւ ես Հայկազանց օրհնեցայց՝ ի մարս,
Եւ՝ ի քոյդ անուն՝ ոչ իմ և եթ սիրտ
Այլ Հայոց ողջոյն տացեն թինդ՝ ի խինդ։
Իմ սիրուն մանկիկ,
Ո՞վ մօրս հրեշտակիկ։
Եւ օտարք ուսցին զանունդ՝ ի քեզ պիշ։
Եւ օտարուհիք՝ ի մայրըդ մատնանիշ
Հրծծեսցին. «Որդի սա զայս ծընանի.
Երանի՞ Հայկազըն մօր երանի՞.»
Ով սիրուն մանկիկ,
Հայոց հրեշտակիկ։

Խորէն Վ. Գաշէճեան։

95

Ընջէ՛ ով իմ սիրուն մանկիկ,
Ընջէ՛ տեսնեմ դու մըշիկ,
Անոյշ անոյշ ընջէ՛ հանգարտ,
Հանգստացիր քիչ մը արդ։
Օր օր ասեմ քեզ որդեկիս,
Շատ օր տեսնես, շատ ապրիս,
Օր օր ասեմ աղուոր տըղուս,
Օրեր մաղթեմ սիրելւոյս.
Օր օր ասեմ մատաղ մանկանս,
Որ ունենայ երկար կեանս։
Ա՜հ երբ դքեզ պիտի տեսնեմ,
Զերդ մէկ տըղեկ գեղադէմ
Գնալ, վազել ու վազվըզել
Հասակակցացդ հետ խօսել։
Օր օր օր օր իմ տատրակիս,
Օր օր ասեմ զաւակիս.

Օր օր օր իմ գեղեցկիդ,
Քեզ, իմ հոգւոյդ հատորիդ,
Օրեր մաղթեմ բոլոր սրտով,
Օր օր ասեմ խնդումով։
Եւ երբ լինիս հսկայ կարիճ
Լինելու զիս խարդախիչ
Հայոց ազգին, մեր Հայրենեաց
Հայերու բարեկամաց։
Օրեր, օրեր քեզ շատ մաղթեմ
Որ՝ Հայրենիք մեր վսեմ,
Գեղաձիծակ ժպիտներովն
Եւ իւր օրհնեալ անունով,
Արծարծէ յիս բարի յոյսեր,
Ու 'ի քեզ էլ լաւ զգացումներ։
Բայց նաև պէտք է հեռանաս
Այն գործերէն ազգավնաս,
Որք ազգամոլ հոչակեն զմարդ,
Գան ազգասէր ոք հանդարտ։
Օրեր մաղթեմ քեզ յԱստուծոյ,
Քեզ, իմ որդւոյդ միայնոյ,
Խարտեշագեղ գանգրամազիդ,
Հրեշտականման իմ զաւկիդ.
Օր օր օր օր օր օր օր օր
Ցայս զօրէ ձայն քո մօր
Ապա թէ որ այսց հակառակ
Շարժիս 'ի գործսըդ, ո՛րդեակ,
Գիտնաս որ ես էլ մայրըդ չ'եմ,
Ու օրհնելու տեղ, կ'անիծեմ։
Օր օր օր հարազատիդ,
Օրեր մաղթեմ միածնիդ,
Կը պաղատիմ ես Ցիրոջմէն,
Որ այս մտածմունքս փուճն ելլեն,

Եւ քեզ սիրոյդ զոր ես ծնայ,
Պահապան ինքը կենայ։
Միթէ այն օրն տեսնեմ պիտի,
Որ ծերութիւնս քեաւ ափոփի,
Եւ երբ աղէկ մը ծերանամ,
Ըզքեզ նեցուկ ունենամ։
Օր օր ասեմ, օր օր օր օր,
Որ շնորհէ Հայրն երկնաւոր.
Օրեր մաղթեմ, որ շատնայ օրդ,
Ցետոյ նեցուկ լինիս մօրդ,
Որ այն օրեր շատ շատ օր, օր
Մաղթեմ քեզի բոլոր օր։

Ա. Գնունի։

96

Ցերկրորդ տարեդարձ ազգային սահմանադրութեան 1862, Մայիս 24։

Ողջոյն քեզ ո՛ դաշտ և սիրուն ափունք,
Ուր այսօր սիրով խմբին Հայկազունք.
Հարց Հայաստանեայց սրբազան ամիւնք
Թող ցնծան Հայոց 'ի սուրբ միութիւն.
Հէգ Հայաստանի եմք մեք զաւակներ,
Հայեր ըզձեզ հոս, հոս կոչին է սէր
Եւ Հայրենիք, սուրբ Հայրենիք։
Հրեշտակն Հայկազանց
Հոս կը սաւառնի.
Ցառաջ, պսակաց
Ձակատք արժանի։
Սահմանադրութիւն,
Սահմանադրութիւն,
Ցորչափ մընայ երկիրս և դու կեցցես։

Առ Հայրենեաց սէր
Որդիք անձնանուէր
Ի շինութիւն ազգն Հայկազանց կեցցե՛ն։
Ոգին միութեան
Որ զմեզ միաբան
Հոս գումարեց սիրոյ հանդէս կեցցէ։

Նշան Զօհրապեան։

97

Գարուն։

Ո՜հ ինչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փչեց հովիկ,
Ծաղկանց վրայ գուրգուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
Գնա՛ անցիր սրտէս ՝ի բաց։
Ո՜հ, ի՞նչ աղու և սրտագին
Ծառոց մէջէն երգես թռչնիկ,
Սիրոյ ժամերն ՝ի յանտառին
Ըզմայլեցան ՝ի քոյ ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
Գնա թռչիր սրտէս ՝ի բաց։
Ո՜հ, ի՞նչ մրմունջ հանես վրտակ
Ականակիտ և հանդարտիկ.
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նային զերկնք վարդն ու աղջիկ.
Բայց չես վրտակ իմ հայրենեաց,
Գնա հոսէ սրտէս ՝ի բաց։
Թէպէտ թռչնիկն և հովն Հայոց
Աւերակաց թռչին վերայ,

Թէպէտ պղտոր վրտակն Հայոց
Նոճիներու մէջ կը սողայ,
Նոքա հառաչք են Հայրենեաց,
Նոքա չերթա՜ն սրտէս ՝ի բաց։

Պ. Մ. Պէշիկճաշլեան։

98

Միութիւն։

՝Ի Հորորդ տարեդարձ ազգային
Սահմանադրութեան։

Ո՛չ զուարթ գարուն, ո՛չ օր մի սիրուն,
Եկաւ սա պարգեց մեզ այդն Հայութեան.
Որ գեղաձիծաղ ժպտէր խնդագոյն,
Քան սուրբ արշալոյս Սահմանադրութեան,
Որ առաւօտեց Հայոց սրտերուն,
Սէր և Միութիւն։
Ո՛չ Արարատայ աւերակներէն,
Սիրավառ արև ծագեց կենսական.
Ո՛չ Մասսի հնցած ծերուկ ծոցերէն,
Քան զանրիծ արև Սահմանադրութեան.
Որ եկաւ ծագեց Հայոց սրտերուն
Սէր և Միութիւն։
Ձայն արիւնաներկ վայրերն, ուր մէկիկ,
Մէկիկ անկան փառք Հայոց Ազգութեան.
Ո՛չ շնչեաց հովիկ մի սրտազովիկ,
Քան զանուշ զեփիւռ Սահմանադրութեան,
Որ հեշտիկ փչեց Հայոց սրտերուն,
Սէր և Միութիւն։
Ի գլխակորիկ շուշանիկն ու վարդ,
Որ ՝ի սգապատ հովիտն Աթինեան

Ո՛չ երգեաց բնաւ թռչնիկ մի զուարթ,
Քան սիրուն սոխակ Սահմանադրութեան,
Որ իջաւ երգեց Հայոց սրտերուն,
Սէր և Միութիւն։
Ի պաղուկ լերանց ձիւնապատ ծայրէն,
Զ՝իջան առուակներ արծաթանման.
Ո՛չ վճիտ գետեր հեզիկ խոխոջեն,
Քան զովուկ նեկտար Սահմանադրութեան,
Որ վազեց յարդեց Հայոց սրտերուն,
Սէր և Միութիւն։
Գարուն է եկել Հայութեան ՝ի դաշտ,
Ծլեր ու ծաղկեր Սէրն ու Միութիւն.
Ում Ասաուած վերէն, ժպտելով ՝ի հաշտ,
Տուաւ պարգևեց Սահմանադրութիւն,
Որ նա պիտի տայ Հայոց սրտերուն
Կեանք ու զօրութիւն։

Ս. Հ. Ֆէլէկեան։

99

Բլբուլ Աւարայրի։

Ո՛վ դու բարեկամ այրած սրտերու,
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու.
Երգէ բլբիւլիկդ երգէ ՝ի սարէդ,
Զքաջն Հայոց Վարդան երգէ հոգւոյս հետ։
Թադէի վանուց ձենիկդ լինձ դիպաւ,
Սրտիկս որ ՝ի խաչն էր կիպ՝ թունդ առաւ,
՝Ի խաչին թևէն թռայ ու հասայ,
Գտայ գքեզ ՝ի դաշտ քաջին Վարդանայ։
Բլբուլ քեզ համար մեր հարքն ասացին,
Թէ չէ հաւ բլբուլ մեր Աւարայրին.

Եղիշեայ հոգեակն է քաղցրազբուցիկ,
Որ զՎարդան ՝ի վարդ տեսնու կարմրիկ։
Զրմեռն յանապատ կու գնայ կայ ՝ի լաց,
ՅԱրտաղ գայ գարուն ՝ի թուփ վարդենեաց։
Երգել ու կանչել ձայնիւ Եղիշեայ,
Թէ պատասխանիկ արդեօք Վարդան տայ։

100

Հրաւիրանք Հայաստանի։

Ո՛վ իմ գեղեցիկ բուրաստան,
Բացուիր, բացուելոյդ ժամն էհաս,
Ահա կենսատու օր գարնան,
Բացուիր, բացուելոյդ ժամն էհաս։
Դրախտն Եդեմայ ՝ի քեզ կրիս,
Փիսոնն, Եփրատ, Գեհոնն, Տիգրիս,
Այսքան բարեօք էր ո՞չ բերկրիս,
Բացուիր, բացուելոյդ ժամն էհաս։
Քոյ է Անի, Երուանդաշատ,
Արմաւիր, Դուին, Արտաշատ,
Հրաշքաբերդ, Մօղ, Վաղարշապատ,
Բացուիր, բացուելոյդ ժամն էհաս։
Քոյ է Արարատն ախոյեան,
Քոյ է սուրբ տապանն Նոյեան,
Զարթիր, ով տունդ Արամեան,
Զարթիր, զարթնելոյդ ժամն էհաս։
Ներսէսն է տնտես քո տանդդ,
Գլուխ արժանի անուանդդ,
Սէյեադն լինի ղուրբանդդ,
Զարթիր, զարթնելոյդ ժամն էհաս։

Պ. Մոլոլեանց։

101

Ով կենդանութիւն կամենում,
Հարկաւոր է օդ շնչէ.
Ով վայելչութիւնը ցանկանում,
Պարտական է երգ հնչէ։
Եղբարք խրատիս լսեցէք,
Մինչ 'ի մահը երգեցէք։
Երգ ամեն օտար զգացմունքներ,
Սրբում իր ազդեցութեամբ.
Եւ ամենայն վիշտք տառապանքներ,
Նուազում սրա միջնորդութեամբ։
Եղբարք խրատիս... և այլն։
Էն մարդու մէջ հոգի չկայ,
Ով երգերից դարշում է.
Որպէս դիակ նա ազգայ,
Երկրիս վերայ շրջում է։
Եղբարք խրատիս... և այլն։
Ի՞նչ ազգ զուրկ է երգարանից,
Սէր չունէ, բարբարոս է,
Ոչինչ յոյս չկայ նորանից,
Մարդկան ազգի մորոշ է։
Եղբարք խրատիս... և այլն։

Մ. Փ.

102

Խրախոյս Վարդանայ առ զօրականս 'ի մեծ պատերազմին։

Վարդան։

Ո՞վ Հայկազունք, ո՞վ դիւցազունք,
Ահա՛ ձեզ նոր հանդիսարան.

Բացէ՛ք աչքերդ, հերիք ննջէք,
Դարեր, տարիք են անցական։

Զօրականք։

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք,
Մեր կեանքը զոհ բոլորանուէր.
Մատաղ անել Հայոց ազգին,
Նորա լեզուին և կրօնին։

Վարդան։

Առէ՛ք, սուրեր, նեղ ու անեղ,
Ելէ՛ք ընդդէմ ձեր թշնամեաց.
Ձեր հաւատը և ձեր ազգը,
Պաշտպանեցէ՛ք յօտար ազգաց։

Զօրականք։

Հայ զինուորի կեանքը դառն է,
Երբ նա պարապ տանն է նստած.
Մեզ ասպարէզ անմահ փառաց,
Կռուի դաշտն է նշանակուած։

Վարդան։

Հայ զօրականք, ձեր նետերը,
Կապարճից մէջ հերիք մնան.
Ձեր երկիրը պարսից երկրից,
Ընդէ՞ր լինին այսպէս կոխան։

Զօրականք։

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք,
Մեր սուրը երկրից հալածական.
Առնել անկրօն պարսից ազգը,
Փրկչի խաչն է մեզ օգնական։

Վարդան։

Հայոց հովիւք, ձեր ոչխարները,
Էլ սար ու ձոր թափարական.
Գազանաց ճանկ ընկած ողբան.
Էլ չը լսէք նոցա կական։

Զորակոնք։

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք,
Աւետարան խաչն 'ի ձեռին.
Առաջնորդել Հայոց զօրքին
'Ի ժամ սրբոյ պատերազմին։

Ց. Կարինեանց։

103

Աղօթք Հայրենեաց։

Ո՞վ Հայոց Աստուած, Ողջ երկրագնտի,
Մեր արեամբ ստոցուած, Որ տոհմին Հայկայ՝
Հաւատն մեր պաշտպանի՛ր, Սիրոյդ առարկայ
Եւ թշնամեաց մի՛ մատնի՛ր. Տէր շտապի՛ր մեզ օգնել։
Քո հզօր աչքդ, Ո՞վ Հայոց Աստուած,
Մեր ազատ խաչը, Լուսիցն զարդուած,
Որմզդեց խնայեաց, Տիրասէր ծառայդ կրթիր,
Մինչև ցարդ պահեաց, Մտածութիւնքը փարատիր,
Տէր շտապի՛ր մեզ օգնել։ Որ ուսման գանձն
Ո՞վ Հայոց Աստուած, Դանձէ Հայ անձն,
Զեռամբդ կերտուած, Մատնակից լինենք,
Տուն Թորգոմայ փրկեցիր, Եւրոպային մենք,
Իսկ միւս ազգինք ձուլեցիր, Տէր շտապի՛ր մեզ օգնել։
Որպէս աւետիս, Ո՞վ Հայոց Աստուած,

Սատիր մեզ տուած, Հայքն են միշտ զրկուած,
Բնատուր շնորհքներն յարգել, Իրանց երկպառակութեամբ,
Ցոգուտ ազգի մշակել, Եւ ամբարտաւանութեամբ,
Շատ ազգ կ'ցանկար Այս գատաւճիռ
Մեր ձիրքն ունենար, Միանգամայն ջնջիր,
Բայց ապերախտ մենք՝ Որ ամենայն վէճ,
Անարդիւն թողնենք, Վերջանայ մեր մէջ.
Տէր շտապի՛ր մեզ օգնել։ Տէր շտապի՛ր մեզ օգնել։
Ո՞վ Հայոց Աստուած, Մ. Փ.

104

Առ մայրենի լեզու։

Ով մեծասքանչ դու լեզու,
Ով հեշտ բարբառ մայրական,
Փափկահնչիւն բառերուդ
Նման արդեօք այլ տեղ կա՞ն։
Դու որ նախ ինձ հնչեցիր,
Նախ սիրոյ, օ՜հ, հեշտ խօսքեր,
Այն նախ զքեզ թօթովելս
Դեռ իմ մտքէն չէ ելեր։
Իմ մայրենի քաղցր լեզու
Կեաց անսասան, կեաց յաւէտ,
Կեաց միշտ լեզուդ հայկարժան,
Կեացածաղկալից ծաղկաւէտ։
Ի՞նչ դառն վիշտ է սրտիս,
Երբ օտար տեղ ու լեզու
Բռնի իրեն զիս քաշէ,
Սրտէս արիւն կը հեղու.
Ո՜հ, զայն օտարն ես սիրել
Բնաւ չեմ կարող 'ի սրտէ,

Զէ այն, չէ քաղցր իմ լեզու,
Որ սիրով գլխս կ՚ողջունէ։
Իմ մայրենի քաղցր լեզու
Կեաց անսասան, կեաց յաւէտ,
Կեաց միշտ լեզուդ հայկարժան,
Կեաց ծաղկալից ծաղկաւէտ։
Լեզու համակ սիրաշարժ,
Քանի ճոխ պերճ՝ ու պայծառ,
Մինչ կը հնչես դուն քեզի,
Սրտերն ամէն գողացար.
Հնչէ՛, հնչէ՛ յաւիտեան
Վեհ՝ դիւցազանց պերճ երգ դու,
Թոթուէ փոշիդ խոր մութէն,
Է՛լ երևան պերճ երգ դու։
Իմ հայրենի քաղցր լեզու
Կեաց անսասան, կեաց յաւէտ,
Կեաց միշտ լեզուդ հայկարժան,
Կեաց ծաղկալից ծաղկաւէտ։
Ցաւերժական Սուրբ Գրոց մէջ
Կեաց միշտ նորէն ու նորէն,
Կշռեալ անուշ քու տողերդ
Թող ամէն սիրտ արծարծեն,
Շնորհ ունել Արարչէն,
Կամ պէտք ըլլայ աղօթել,
Շրթունքս սրտէ բորբոքած
Կաղաղակէ անարգել։
Իմ մայրենի քաղցր լեզու
Կեաց անսասան, կեաց յաւէտ,
Կեաց միշտ լեզուդ հայկարժան,
Կեաց ծաղկալից ծաղկաւէտ։

105

Ո՞վ տէր մեր Աստուած Ուժ տուր բազկաց
Լեր մեզ ողորմած. Վանենք ոսոխք
Դու ես լոյս լուսոյ մեր Պահենք կրօն.
Հոգին զօրացոյ յաւիտեան։ Աստուած մեր Հոգին
Ո՞վ տէր դու մեր Աստուած Զօրացո յաւիտեան։

Գ. Ա.

106

Որդիք քաջ Հայկայ, արիք ընդ առաջ,
Տեսէք ձեր արքայն իւր գահը բազմած.
Խրախոյս կարդացէք Հայ զօրականք քաջ,
Սուր 'ի ձեռ առնել յաղթել Ալանաց։ (1)
Ձեռն 'ի ձեռին տուէք զնանք պատերազմ,
Վանենք թշնամեաց, ջնջենք մեր երկրից.
Հայ անուան համար լինենք մենք միշտ կազմ.
Մեռնել քաջաբար չընկնել մեծ փառքից
Արտաշէս արքայն փառօք պսնծացած,
Մեզ է առաջնորդ, դէն ձգենք երկիւղ.
Հայաստան կանչենք կուրծքերըս դէմ դրած,
Բառնամք մեր երկրից տիրած մարախուղ։
Ուրեմն կեցցէ՛ տուն քաջ Արտաշէսին,
Որ նա վանեց քաջ Ալանաց ազգին.
Ազատեց երկիրը օտար ցեղերից,
Կանգնեց անմահ արձան մեր առաջին։

107

Ո՞րն է աշխարհ Հայաստան.
Միթէ սա է Պարսկաստան,

---

1) Այս երգը առնուած է Արտաշէս և Սաթենիկ ողբերգութենից։

Որի պատկերն է Սոդոմ և Գոմոր,
Ընտանի կեանքն է Բաբէլոնեան խմոր.
Չէ, չէ, չէ, չէ, չէ, սխալ է,
Մեր աշխարհն այլ է, մեր աշխարհն այլ է։
Ո՞րն է աշխարհ Հայաստան.
Միթէ սա է Ցունաստան.
Որ իր բռնութեամբն գերել է աշխարհ.
Ազգի ճիգն ու ջանքն յուիտեան կործան.
Չէ, չէ, չէ, չէ, չէ, սխալ է
Մեր աշխարհն այլ է, մեր աշխարհն այլ է։
Ո՞րն է աշխարհ Հայաստան.
Միթէ սա է Տաճկաստան,
Ուր իրաւունքից կանայք են զրկուած,
Կանանոցի մէջ կենդանի թաղուած։
Չէ, չէ, չէ, չէ, չէ, սխալ է
Մեր աշխարհն այլ է, մեր աշխարհն այլ է։
Ո՞րն է աշխարհ Հայաստան.
Միթէ սա է Ֆրանգստան,
Որ իր ճոխ զգեստք տիրել է աշխարհ
Լուսաւորութեամբ առաջինն է նա։
Չէ, չէ, չէ, չէ, չէ, սխալ է
Մեր աշխարհն այլ է, մեր աշխարհն այլ է։
Ո՞րն է աշխարհ Հայաստան,
Ահա՛ սա է Հայաստան,
Որ իր քաջութեամբ հաւատն ու կրօն
Պահպանել է մինչև ի ցայսօր
Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, ճիշտ է
Մեր աշխարհն այդ է, մեր աշխարհն այդ է։

Մ. Փ.

108

Ո՞ւմից ունի Հայն յոյս
Ընդունել մի օր լոյս
—Ծնողից անտարակոյս
Կեցցեն, կեցցեն, կեցցեն, կեցցեն իմաստուն մայրեր։
Ո՞վ սանձեց աշխարհը
Ազնուացուց դարը
—Իգական նուրբ հնարը
Կեցցեն, կեցցեն, կեցցեն, կեցցեն գիտուն տիկիններ։
Ո՞վ հաւատոյ հոգին
Ազգում հեշտ զաւակին
Լեզու քնքուշ ազգին
Կեցցեն, կեցցեն, կեցցեն, կեցցեն բարեպաշտ տիկնայք։
Ի՞նչ ազգ չէ մնում ստրուկ
Չէ բերում չար արդիւնք
Որ տայ կնոջ իրաւունք
Կեցցեն, կեցցեն, կեցցեն, կեցցեն ազատ ամուսինք։
Պաշտելի իմ հայեր
Պատրաստե՞նք հայ մայրեր
Տէր անցո զբաժակն մեր
Կորչին, կորչին, կորչին, կորչին հնամոլ մարդիք։

Մ. Փ.

109

Ուրախասցուք ուրեմն
Մինչ երիտասարդ եմք } (կրկնեա)
Ցետ տղայութեան ցանկանալոյն,
Ցետ ծերութեան զառամելոյն
Զմեզ կալցէ հողն։ (կրկնեա)

Ո՞ւր են մեր բոլոր նախնիք
Յաշխարհիս բնակեալք } (կրկնեա)
Համբարձէք առ երկնայինսըն,
Թափանցէք առ դժոխայինսըն,
Անդ ըզնոսա գրաջիք։ (կրկնեա)
Կեանքըն մեր է կարճօրեայ,
Կարճօրէն վերջանայ,
Գայցէ մահըն արագապէս,
Կըշտամբ է զմեզ կամաց ընդդէմ,
Ո՛չ իւիք յադի նա։ (կրկնեա)
Կեցցեն միշտ Հայ վարժարանք
Կեցցեն միշտ հայ վարժապետք } (կրկնեա)
Կեցցէ ամեն մի անդամ
Կեցցեն և բոլոր անդամք
Եւ միշտ լեցին ծաղկեալք։ (կրկնեա)
Կեցցեն բոլոր Հայ աղջիկք
Քընքոյշք և գեղեցիկք } (կրկնեա)
Կեցցեն բոլոր հայ կանայք
Փափկասնունդք, սիրեցեալք
Բարիք և ջանասէրք (կրկնեա)
Կեցցէ հասարակութիւն
Եւս նմա իշխէ, } (կրկնեա)
Կեցցեն մեր հայրենակիցք,
Լիցին սիրեցեալ և պատուեալք.
Որ մեզ խնամարկեն։ (կրկնեա)
Ի բաց կացցէ տխրութիւն
Ի բաց կացցեն ատողք, } (կրկնեա)
Ի բաց կացցէ սատանայ,
Որ ընդդէմ ուսանողաց.
Եւ համայն ծաղրագործք։ (կրկնեա)

Ա—ՊԷՆԿ։

110

Պարկեշտասուն կոյս գեղեցիկ նաղելի.
Պերճ շառաւիղ Մամիկոնեան քաջ տոհմի
Հայաստանեայց քնքոյշ ծաղիկ Նուշանիկ
Շնորհաւորեմք քո հարսնութիւնդ պանծալի։
Դուստր մեծի սպարապետի Վարդանայ.
Մեծ իշխանի Վրաստանի հարսնանայ
Հայաստանեայց քնքոյշ ծաղիկ Նուշանիկ
Իշխանական գահի վերայ բարձրանայ։
Բայց ուր երթաս, ուր որ լինիս Տիրուհի
Մեր սիրտը միշտ քեզ ուղեկից կ՚լինի,
Հայաստանեաց քնքոյշ ծաղիկ Նուշանիկ
Գնաս բարեաւ. սուրբ խաչը քեզ հովանի։

111

Ի մահ Մ...

Պատկեր սիրոյդ արփիական
Կայ առաջի իմ յարաժամ,
Իմ Մ.... քաղցրիկ դուստր
Մի՞թէ թողեր զիս յաւիտեան։
Եղկելի հայրս զքեզ որոնեմ,
Տիւ և գիշեր զանունդ յիշեմ,
Անմխիթար կոդկոդելով
Զընտանիս մեր ի յոդը շարժեմ։
Տես թէ զի՞արդ եմ խղճալի,
Զի զնորահարս դուստր կորուսի,
Ի ճանապարհ անդառնալի
Անմխիթար յուղարկեցի։

Ռոպէք իմոյ դառն կենաց
Թող միշտ անցցեն 'ի յողբ 'ի լաց
Մինչև եկից, տեսից ըզքեզ
Ուր խօստացաւ մեզ Տէր Աստուած։
Ո՛հ զմարգարիտս պատուական
Էառ անմիտ վաճառական.
Եւ ըստ տէրունական անսուտ բանին՝
Արար ապա ոտից խոտան։
Սիրտ մոր քոյ է վերաւորեալ,
Սուր սլաքօք 'ի խոր խոցեալ,
Եղբարք և քորք քո սիրելիք
Յաւօք քոյ են միշտ տոչորեալ։

112

Գիշեր։

Սիրուն պատկեր։ Պարզ գիշեր էր։
Եւ օդեղէն ովկիանում
Փայլումէին անթիւ աստղեր,
Եւ ուրախ էր սիրտս զարկում։
Ամբրոսական ծաղիկներ վառ
Անուշութիւն էին բուրում
Եւ երկնքի ցող կենարար
Բնութիւնն էր զովացնում։
Ես անխառով երգումէի
Իմ երգս բուրք և մաքուր էր.
«Աղաւաւթիւն» էի երգում,
Հայրենիքի «պարծանք» ու «սէր»։

Ս. Շահպոլխէանց։

113

Տարագիր Հայ նախնի զինուոր։

Տարի՛ալ անցաւ
Գնաց սահեցաւ,
Այլ դու Հայ զինուոր,
Թափառական մնաս,
Ցերկիր հեռաւոր,
Սուգ անմխիթար
Զքեզ շուրջ պատած,
Եւ դժբաղա սիրտ ալ
Ցուսաբեկ եղած,
Սուրդ ու քո տէգդ
Ժանգոտ վար դրած,
Եւ զօրեղ արմուկդ
Տիգիդ յեցուցած։
Դի՛ր դու Հայ զինուոր
Քու յոյսդ առ Աստուած,
Վեր վերցուր գլուխդ,
Տես ով է կանգնած

Առ քեզ կ'ակնարկէ
Ազատիչն Աստուած,
Ցաղթութեան պսակ
Իւր սուրբ ձեռքն բռնած։
Առ ուրեմն նիզակդ
Ոսք ելիր կանգնէ
Եւ սրտիդ խորէն
Անոր փառք խրկէ։
Վհատիր մի ընաւ
Քաջ զինուոր դու Հայ,
Չի այսուհետև
Էն Աստուած գթած
Ընդ քեզ է յաւէտ,
Ցազգասէր մրցանող
Կու տայ քեզ պսակ
Բոլոր ճգանցդ փառք,
Ցանկալին ազատութիւն։

Մարտիրոս Անդրէասեանց։

114

Օրհներգութիւն ազգային։

Տէր՝ կեցո՛ դու զՀայս
Եւ արա զնոսա պայծառս.
Կեցո՛ զՀայս.
Զողորմութիւն վերին
Հաճեաց ձօնել նոցին,
Չի նովին մարթասցին
Ապրիլ յաստիս։
Ո՞վ Տէր մեր, Տէր փութա՛,
Զազգդ մեր համայն փրկեա,
'Ի թշնամեաց.

Կափո՛ զաչս նոցուն,
Հա՛տ զարմատոյն զբոյն
Եւ զազգ պարտասուն
Արա՛ հրզօր։
Ի՛ քո ի՛ջեալ տեղի
Զաթոռ Հայրապետի

Մեր հաստատեա՛.
Զերկարութիւն կենաց
Հօր մեր Աստուածազգեաց
Շնորհեա՛ պետին մեր հարց,
Որ զմեզ հովուէ։

Մ. Դ. Թաղեոսեանց։

115

Աղօթք վասն Հայրենեաց։

Տէր, կեցո զՀայաստան,
Լուր զորդւոցն առ քեզ աղերս։
Տէր, կեցո զՀայաստան,
Ցարո՛ զնա նոր յիւրն աւերս։
Ցերբ Աստուած հրզօր, Աստուա՛ծ Գրիգորի,
Աստուած զօր կարգամբ ՝ի խորոց սրբոյ,
Թողուցո՛ւս զի մեր հայրենիս թշուառ
Սուր, հեռ և հեռաւոր առնուցուն յաւար։
Տէր, կեցո զՀայաստան,
Լուր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէր կեցո զՀայաստան,
Ցարո՛ զնա նոր յիւրն աւերս։
Տե՛ս օտարք անգութ այպն զմեզ առնեն,
Եւ զսրբութեամբ մեր թշնամանեն.
Բայց մեք երբ ՝ի քոյդ հովացաք ՝ի սէր,
Ո՞չ և ՝ի մահու զքեզ պաշտեմք ՝ի սուէր։
Տէր, կեցո զՀայաստան,
Լուր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէր կեցո զՀայաստան,
Ցարո՛ զնա նա յիւրն աւերս։

Տէր, Տէր, դու զմեզս օրհնեա զուղղութիւն,
Որ ՝ի Գրիգորի սրբբեալս եմք արիւն.
Դու զնորուն պահեա հաւատս անսասան,
Եւ զԱթոռն իւր սուրբ ՝ի Հայս յաւիտեան։
Տէր, կեցո զՀայաստան
Լուր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէր, կեցո զՀայաստան,
Ցարո՛ զնա նոր յիւրն աւերս։
Իբր զգարնանքի ցող ՝ի սիրտ եղբարց
Ծաւալեա՛ զքեզ, հեզ զոգի մեր հարց.
Եւ ՝ի ջահ լուսոյ նոցա տար զքեզ,
Իբր զՀօտ յարօտս քո ՝ի Կաղէս։
Տէր, կեցո զՀայաստան,
Լուր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէր, կեցո զՀայաստան,
Ցարո՛ զնա նոր յիւրն աւերս։
Ո՞հ շատ իսկ աղետք ծանրացան ՝ի մեզ,
Շատ իսկ մահ ՝ի մեզ հաշուէ ողջակէզ...
Տէր կենաց, յերկիր մեր, անբա՛ւ տապան,
Արկ զքշունչդ և կեա՛ նս առցէ Հայաստան։

Խոսէ՛ Նիկոլոս Գալֆայեան։

116

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Տէր ողորմեա, Տէր ողորմեա։
Արի Աստուա՛ծ հարցն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց,
Հաս օգնութիւն ծառայից քոց,
Անօգնական ազգիս Հայոց։
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

Միջնորդութեամբ սրբոյ խաչիդ
Եւ անարատ սուրբ ծնողիդ,
Ցիշեա զՀեղումն արեան Փրկչիդ,
Եվ 'ի խնդիր փոքու հօտիդ։
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։
Զի գիտացաք մեք հաւաստեաւ,
Որչափ մեղաց մերոց լցաւ,
Ուստի Տերդ մեր բարկացաւ,
Առ 'ի խրատել զմեզ զարթեաւ։
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։
Արդ անկանիմք առաջի քոյ,
Գոչեմք մեղայ Տեառնդ մերոյ,
Դարձո 'ի մէնջ զցասումն քոյ,
Վասն անսպառ գթութեան քոյ։
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

117

Երգ ուրախութեան։

Ցնծացէք լերինք Արարատայ,
Ցնծա՛ Հայաստան, երկիրդ Հայկայ։
Ցնծա՛, ցնծա՛, ցնծա՛, ցնծա՛,
Ցնծա՛, Հայաստա՜ն երկիրդ Հայկայ։
Մեր նախնեաց անմահ անուններդ,
Պարծանքով յիշեն մեր սերունդները.
Ցնա՛, ցնծա՛, ցնծա՛, ցնծա՛
Ցնծա՛, Հայաստա՜ն, երկիրդ Հայկայ։
Սրբեցէ՛ք քնարի լարերը ժանգոտ,
Ելէ՛ք Հայաստա՜ն երգով եռանդոտ.
Ցնծա՛, ցնծա՛, ցնծա՛ ցնծա՛,
Ցնծա՛, Հայաստան, երկիրդ Հայկայ։

118

Աղքատ կին։

(Գաղիերենից)

Յուրաքը փչեց. ձմեռ սաստիկ.
Ցիւնը ծածկեց գետինը,
Ամենայն մարդ մտաւ իւր տուն,
Պատսպարվիլ ցրտիցը։
Ժամի դռնում դողդողալով
Կանգնած է մի աղքատ կին.
Նորա հանդերձը պատառ, պատառ,
Զունի շապիկ իւր հագին.
Անհամարձակ նա իւր ձեռքը
Պարզումէ անցկացողին—
«Ողորմութիւն առէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։
Զեզ, սիրելի՛ք, ասեմ՞ ով էր
Այս խղճալի աղքատը,
Այն ցրտումը, ոտաբոբիկ
Կանգնած, ժամի դռնումը.
Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա փառքով և պատուով
Մանէր գալիս փողոցներումը
Իւր սեպհական կառքերով.
Այժմ, վախով նա իւր ձեռքը
Պարզումէ անցկացողին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։
Մինչ թատրոնում յայտնվումէր,
Մինչ խաղումէր հանդիսում,

Դղրդումէր թատրոնը,
Նա դափնիք շատ էր հնձում.
Ժողովուրդը հաւաքվումէր
Մօտ թատրոնի պատշգամբին.
Չէր կշտանում նայել նորա
Քնքոյշ չքնաղ երեսին.
Այժմ նորան չեն ճանաչում,
Մոռացել են բնաւին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Ամենայն օր նորա դռնում
Կանգնած էին շատ կառքեր,
Միշտ հացկերոյթ, ընթրիք, գինի,
Նուագարան ու տաղեր.
Ամենայն ոք ցանկանումէր
Լինել նորան բարեկամ.
Ամենայն ժամ նորան բաց էր
Շռայլ քսակը մեծատան.
Այժմ զրկված ամեն բանից,
Զունի անգամ հացի գին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»,

Ամենայն օր իւր մարմինը
Անուշահոտ ջրերով
Լուանումէր մաղը սանրում
Կրիայի սանրով.
Նա հագնումէր բեհեզ, կերպաս,
Դիպակ, թաւիշ թանգագին.
Նա չգիտէր ի՞նչ ասել է
Արծաթի կարօտութիւն,
Այժմ անլուայ, մաղերն արձակ,
Զունի հագուստ թէ և հին—

«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Նորա շքեղ ննջարանում
Բնակվումէր Աստղիկը.
Նորա որդին փայփայումէր,
Նորան ամբողջ գիշերը....
Ախտաբորբոք երիտասարդք
Իւրեանց անձը երջանիկ
Կը հաշուէին, թէ լինէին
Նորա ձեռքում խաղալիկ....
Այժմ փողոցում քնում է նա
Խոնաւ պատերի տակին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Ժամի դռնում նա կանգնած է,
Աչքերը կոր, վիզը ճուկ.
Նորա նախկին բարեկամքը
Չեն ասում նորան «խղճուկ,
Ե՛կ դու մեր մօտ, մեք կ՚ամրքենք
Քո վիճակի դառնութիւն,
Կը թուլացնենք ճակատագրիդ
Խիստ հարուածի սաստկութիւն։
Նա տանում է տառապելով
Այս սոսկալի վշտերին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

119

Փութա՛ առ մեզ, նախշուն կաքաւ,
Սարերն ամեն կանանչացաւ,
Զարդ զգեցեալ պայծառացաւ։
Ցայդ լեռներէն ի վայր փութաս
Ցաւուրս գարնան պարեալ ցընծաս.

Նախշուն ձագերով շուրջ կու գաս
Արագ արագ ոստոստելով,
Ծաղկանց վերայ թաւալելով,
Վասն ոյր թռչիս.
Ընդէր փախչիս
Կամ զի թագչիս,
Կաղկողալով՝ ձայն արձակես
Շաղկղա՜ շաղկղա՜
Կաղկղա՜, կաղկղա՜
Միշտ հառաչես
Ու կարկաչես,
Ոսկիափայլ փետուր քոյին
Զանազան գունով շողշողին
Որպէս զլոյս բոլորովին։ Ցայդ և այլն։
Փառաք ճեմես որպէս իշխան,
Լերինքըն քեզ յարկ սեփհական.
Դաշտերն ամեն համանգամայն։ Ցայդ և այլն։
Ծիծաղաձայն քաղցրիկ թռչուն,
Զքնաղատիպ և յոյժ սիրուն՝
Ի մէջ ծաղկանց ննջեա 'ի քուն։ Ցայդ և այլն։
Քև ճոխանան ամեն լերինք
Եւ համբրէն մարգագետինք,
Զքեզ գովեն ազգ և ազինք։ Ցայդ և այլն։
Արդ՝ բարցրացո զձայն քո ընդ իս.
Եւ փարատեա ըզսուգ սրտիս
Հայցմամբ քոյոյ երգաբանիս։ Ցայդ և այլն։
Կարկաչաձայն այդ ձայն քո սուրբ
Ցոչորէ զիս սիրոյ քո հուրբ,
Զետ զովանալ արտասուաց ջուրբ։ Ցայդ և այլն։
Այդ լեռներուն հուպ առընթեր
Դէպ զար 'ի վայր և զար 'ի վեր
Թերաբաց թևաք ճեմ առեր։ Ցայդ և այլն։

Գեղարդ Վ. Ղազանչի։

120

Օրորք Հայաստանի։

Քընէ, քընէ, իմ հայրենիք,
Իմ կաթոգին Հայաստան,
Ես քեզ օր օր կ'ասեմ մեղմիկ,
Որ չըզարթիս անգուման։
Քանի՞ դարեր այդ խոց քունը,
Քեզ կաշկանդել, կապել է,
Քընի սերմունք, ասես, Մորփէն,
Լոկ քու վերայ թափել է։
Եւ ի՞նչ զարմանք ազգ ու ազինք
Միշտ լաւակամ քեզ համար,
Քունդ վրդովել չուզելով՝
Օրօրում են անդադար։
Քեզ... թուր ձեռը բռնած,
Մարդ չի թողնում քեզի մօտ.
Թէ մօտ եկան՝ դարձեալ չէ փոյթ,
Ունի շատ ռումբ, շատ վառօդ։
Որ աչքերդ չի խոտղեն
Վառ շողերը արեգին՝
Անթափանցիկ ու մեծ ասպար
Ունի բռնած իր ձեռքին։
Կամ թէ՝ անուշ քընիդ խաբան
Զլինին նաև քու որդիք,
Ըսպառազէն պահապաններ
Նոցա վերայ կան հերիք։
Թէ ճիշ բառնան՝ այն ժամանակ
. . . . . .
Այդ պատճառաւ հէնց քո որդիք
Ե՛ւ երկչոտ են, և՛ զգաստ։

Արդ՝ դու ննջէ՛ ծանր քընով
Ու մի զարթիլ շատ դարեր.
Պարտքն աշխարհի դու տուել ես
Կատարել ես շատ բաներ։
Ունիս քաջեր (թէ և մեռած)
Ունիս գրքեր անհամար,
Սխրալի գործք քու զաւակաց
Կ՝անցնեն, կերթան դարէ դար։
Աստուածախօս քու լեզուն է,
Ծոցդ դրբախտ երկրաւոր
Նոյայ սերունդք են քու որդիք,
Դե՜հ, Հայաստան իմ, օր օր։
Երբեմն դու խիստ լաւ կ՝անես
Այս քեզ խրատ իմ բարի,
Հաւատացի՛ր, սրտով բաղձամ
Որ այդ ճշդիւ կատարի։
Թէ սեպհական զաւակներիդ
Տաս խրբատներ մայրական
Որ կործանած իրանց գահը
Վերականգնել չի ջանան։
Շուտ շուտ ղրկէ՛ քարոզիչներ,
Սեւագլուխ, մրքաւոր,
Որ յորդորեն ապրել նոցա,
Թէև ստրուկ, բայց անդորր։
Խաղաղասէր կեանք քարոզեն,
Մեծ մեծ յոյսեր երկնային,
Ազնիւ զգացմանց ցընորք ասեն,
Անօգտաւէտ բընաւին։
Չի հասկանան վաղճան կենաց,
Կոյր են եկել՝ կոյր երթան,
Կրօնքն էլ ինչպէս հարք կը մեկնեն
Նոքա այնպէս հասկանան։

Մաքուր կրօնն է, ասեն, պասը,
Ժամուց տալը յարգոյ հարց
Կուշտ ուտելը, ճոխ ապրելը—
Այս է վախճան մեր կենաց։
Դիւրահաւան մեր Հայերը
Բարի խրատք լսելով՝
Ձեն վրդովել, ու քեզ կուտան
Լաւ կշտանալ խոր քընով։
Դե՜հ, իմ պառաւ մայր Հայաստան,
Քընէ անոյշ ու անդորր.
Այսպէս յաւէժ քեզ կը կարդան
Ագդ ու աղէնք օր, օր, օր։

Ի. Տ—Գ. Պոպէանէան։

121

Քուն էղիր, պալաս, աչքդ խուփ արա,
Նաշխա՛ն աչքերուդ քուն թող գայ վերայ.
Օր օց օր պալաս, օր օր ու նանի,
Իմ (այս անուն) քունը կըտանի։
Օսկի խաչ վիզդ՝ քեզի պահապան,
Նարօտ կապիլ է ծարէն տէրպապան։
Օր օր օր պալաս, օր օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի.
Մալի հիլուններ կախել եմ ես ալ,
Նազար չէս առնուլ քուն էղի՛ր, մի՛ լալ։
Օր, օր օր պալաս, օր օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի։
Աս քանի՞ մորդդ անքուն աչքովը
Անցել է օրեր օրոց քիդ քովը։
Օր օր օր պալաս, օր օր ու նանի
Իմ (այս անունին) քունը կը տանի։

1) Զօր օրինակ. իմ Արամիա, Եղիսաբէթս և այլն։

Օրոցքըդ օրքիմ, օրով բոյ քաշիս,
Մըղկրտան ծանով սիրտըս չի մաշիս։
Օր օր օր պալաս, օր օր ու նանի
Իմ (այս անունին) քունը կը տանի։
Դուն-ալ քուն էղիր, ինձի ալ քուն տուր,
Սուրբ Աստուածամայր (այս անունին) քուն տուր։
Օր օր օր պալաս, օր օր ու նանի
Իմ (այս անունին) քունը կը տանի։

122

Հայկ երգ։

Օ՜ն եկայք արի Հայեր
Ցիշեսցուք զնախնիս մեր,
Միաբան լեցուք ի վեր—
Ցիշելով զարին Հայկ։
Հայր մեր Հայկ էր դիւցազուն,
Եղեցուք նրմին հանգոյն,
Ապդ մեր փոքրիկ, այլ քաջազուն
Է մեր քաջ ազգս Հայկ։
Հայկ երեք հարիւր հոգւով
Միասիրտ որդւով, թոռնով
Զոկեց մեզ Հայ անունով
Պարծանք մեր դու Հայկ։
Գերեզմանք կոչի դաշտն այն
Ուր Բէլն անբարտաւան
Եւ զօրքն իւր անկան կործան
Ի բազկաց քոյ, ո՜վ Հայկ։
Արդ՝ պընդեալ զսիրտս մեր
Հայաստան, որ է յաւեր՝
Սիրեսցուք ի փառս մեր
Գոչելով «փառք մեր Հայկ»։
Հօր մերում հեանեսցուք
Սերտ սիրովն կապեսցուք
Արժանի յայնժամ լեցուք
Հայր կոչել մեզ Հայկ։

ՎԵՐՋ

ՑԱՆԿ.

		Երես.
1.	Ազնիւ ընկեր, մեռանումեմ.	3
2.	Ախ Հայաստան, Հայաստան	4
3.	Ակնապիշ, անձայն, խորհուրդ ճակատիդ	5
4.	Ահա տարեմուտ, կաղանդ և նոր օր	6
5.	Ահա հրեշտակ ոսկեփետուր	7
6.	Ա՜յ մարդ, այսօր շատ քընեցար ննջեցիր	8
7.	Այն աշխարհն պատուական է	9
8.	Այսօր տօն է ծնընդեան, աւետիս	10
9.	Անի քաղաք նստեր՝ կուլայ	12
10.	Անձն իմ վայ քեզ հազար բերան	13
11.	Առաւօտեան քաղցր և անոյշ հովերըն	15
12.	Առաւօտ լուսոյ, արեգակն արդար	16
13.	Առ ընկալ 'ի գիրկդ մայրդ Հայաստան	17
14.	Արագիլ բարով եկիր	18
15.	Արեգակ, արեգակ դուս արի	19
16.	Արև տեսաւ սարին վերէն	19
17.	Առիք որ երթամք	21
18.	Առիք Հայկազունք, յառաջ ընթանանք	22
19.	Արկածք Հայոց ժամանակին ընդ անիւ	24
20.	Աստուած ողորմած	25
21.	Ափսո՜ս քեզ Հայոց խեղճիկ ժողովուրդ	25
22.	Բամբ....որոտան բարձուստ բոմբիւնք	26
23.	Գարունն է եկել նախշուն թիւերով	27
24.	Գեղեցիկ Արմենուհի, դու իմ սրտիս հատոր	28
25.	Գարուն Հայաստան գայ ծաղկապսակ	29
26.	Գիւղական աղջիկ եմ ես զամբիւշաղէն	30
27.	Ելէք, ելէք, օն դուք ասոր	31
28.	Եկաւ ժամանակ բարեկամ բաղդին	32
29.	Ես լսեցի մի անոյշ ձայն	33

Երես.

30. Ես տապան նստեալ 'ի գաղթ սարին 34
31. Երկու գրենադեր գնումէին Ֆրանսիա 35
32. Զարթիր 'ի քնոյ, ով Հայաստան 36
33. Զարթիր, մանուկ իմ նազելի 39
34. Զարմանք բան է, հէնց գիտենաս 40
35. Զէյթուն, անկախ դու աշխարհիկ 41
36. Զինուորիս երգը եղբարք լսեցէ՛ք 42
37. Զձեզ՝ որդիք Արամեան 42
38. Էգուց կիրակի է 44
39. Էր հեռանաս քո մայրենի աշխարհից 45
40. Ըզձայն մանկանց, ով տէր Յիսուս 45
41. Թագ փառաց մերոց, այր ցանկալի 47
42. 'Ի բիւր ձայնից բնութեան շքեղ 48
43. 'Ի զուր են 'ի զուր, բըռնաւոր 49
44. Իմ արեգակն խաւարեցաւ 50
45. Իմ սիրելի զաւակունքս 51
46. Իմա՛, իմա՛, ով մարդ՝ աշխարհս անցանի 52
47. Ինձ համար չէ գարնան գալը 52
48. Ի՞նչ ես ջարդում անձըդ, էյ մարդ, ցաւերով. 53
49. Ինչո՞ւ, ինչո՞ւ Խաղացիք 54
50. Ինչո՞ւ կուլաս դուն գառնիկ 58
51. Լուռ և տխուր դաշտեր գեղեցիկ 58
52. Լուսացաւ, լուսացաւ 59
53. Լսիր մանուկ Հայաստան 60
54. Լսիր քաջդ Վահան, մեր դիք այսպէս կամին. 61
55. Խարոյկ սիրոյ սուրբ հայրենեաց 61
56. Խընդա՝ այսօր Հայաստան 62
57. Խընկին ծառին նըման ես 63
58. Ծագեա՛ հեզիկ արև քաղցրիկ 63
59. Ծիծեռնակ, ծիծեռնակ 64
60. Կանայք ամենայն՝ քորք իմ սիրեկան 64

Երես.

61. Կեցցէ Շապուհ, կեցցէ արքայ 67
62. Կեցցես դու Շապուհ, կեցցես արքայ 67
63. Կեցցես քաջ Սամէլ 68
64. Կռունկ գարնան աւետիս 69
65. Կռունկ՝ ուստի կուգաս, ծառայ եմ ձայնիդ 70
66. Հայաստան, դու օրօրոց մեր մանկութեան 71
67. Հայաստան երկիր դրախտավայր 72
68. Հայաստա՜ն, քաղցր իմ Հայաստան 73
69. Հայրենասէր Արամեանք 76
70. Հայկազունք պար բռնենք 77
71. Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր 78
72. Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ 79
73. Հայրիկ, ասաց դուստրը հօրը 80
74. Հապա քաջաղունք 83
75. Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից 84
76. Հիմի ի՞նչ լըռենք, եղբարք, հիմի ի՞նչ 85
77. Հիմի ի՞նչ խօսենք, եղբարք, հիմի ի՞նչ 87
78. Հուր բարկութեան համայն Հայոց 89
79. Ղամպարափայլ սրբոյ տօնիս, աւետիս 90
80. Մայր—Արաքսի ափերով 91
81. Մայրենի լեզու, մայրենի բարբառ 93
82. Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր 94
83. Մեզ նոր արև ծագէ, բացուի լոյս բոյսվառ 96
84. Մեծափառ արքայն մեր 96
85. Մեր հայրենիք թշուառ, անտէր 97
86. Մեր նախնիքը աղգի համար 99
87. Մեր քաջ Հայոց զօրութիւն 99
88. Մեր սիրուն հայրենեաց 100
89. Մինչդեր յուսով խայտայ բնութիւն 101
90. Մնաք բարով լերինք, սիրուն արօտներ 102
91. Ցամաքերջն Ապրիլն զպատուհանս բացի 104

Երես.
92. Ցառաւօտ կենաց կուսանիս 105
93. Նայիմ ողբամ ծնող տղայիս 107
94. Ննջեա՛ դու քաղցրիկ իմ հրճուանք և սէր 108
95. Ննջէ՛ ով իմ սիրուն մանկիկ 111
96. Ողջո՛յն քեզ, ո՛ դաշտ և սիրուն ափունք 113
97. Ո՛հ ինչ անուշ և ինչպէս զով 114
98. Ոչ զուարթ գարուն, ոչ օր մի սիրուն 115
99. Ով դու բարեկամ այրած սրտերու 116
100. Ո՛վ իմ գեղեցիկ բուրաստան 117
101. Ո՛վ կենդանութիւն կամենում 118
102. Ո՛վ Հայկազունք, ով դիւցազունք 118
103. Ո՛վ Հայոց Աստուած 120
104. Ով մեծասքանչ դու լեզու 121
105. Ով տէր մեր Աստուած 123
106. Որդիք քաջ Հայկայ, արիք ընդ առաջ 123
107. Ո՞ւր է աշխարհ Հայաստան 123
108. Ո՞ւմից ունի Հայն յոյս 125
109. Ուրախասցուք ուրեմն 125
110. Պարկեշտասուն կոյս գեղեցիկ Նազելի 127
111. Պատկեր սիրոյդ արփիական 127
112. Սիրուն պատկեր։ Պարզ գիշեր էր 128
113. Տարի մ՚ալ անցաւ 129
114. Տէր կեցո՛ դու զՀայս 129
115. Տէր կեցո՛ դու զՀայաստան 130
116. Տէր ողորմեա, տէր ողորմեա 131
117. Ցնծացէք լերինք Արարատայ 132
118. Ցուրտը փչեց. ձմեռ սաստիկ 133
119. Փութա առ մեզ, նախշուն կաքաւ 135
120. Քընէ՛ քընէ՛ իմ Հայրենիք 137
121. Քուն էղիր, պալաս, աչքըդ խուփ արա՛ 139
122. Օ՜ն եկայք արի Հայեր 140

«Ազգային գրադարան»
NL0349205